

1979

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն



Մ. ԻՇԽԱՆ	Սառնարանէն ելած մարդը
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Օրօք՝ ցուրտ հորիզոններուն
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ	Ես քուրբ չեմ
»	Հարսին ոտքը
Ա. ՃԻՒՂԵԱՆ	Ընդհատում եւ զգայութիւն
»	Պատկերավէպ
»	Ախտանանաչում
»	Վերջ ուշացած արկածով
»	Կենցաղ
Ա. ԱՔԷԼԵԱՆ	Զինագուլ 27...
Պ. ՀԵՐԵԱՆ	Անիութնութիւն
»	Փոքրիկ դերը
Ա. ՍՈԼԺԵՆԻՑԻՆ	Պատգամ, հայացոց՝ Տաք եւ նայակապոս
* * *	Լիպարիտ Նազարեանց
ՆԵՄԻՐՈՎԻԶ-ԴԱՆՁԵՆԿՕ	Եփրատի ափին, Բարգմ. Լ. Նազարեանց
Յ. ՕՇԱԿԱՆ	Յարգոյ Տէր Խմբագիր
* * *	Պգտիկ յաւելում մը
Լ. ՆԱԶԱՐԵԱՆՅ	Արուեստին էութիւնը եւ նիւթը
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Վտանգաւոր անկիւնադարձ
Խ. ԱՍՈՅԵԱՆ	Ունսի էլ Հաժի վերջին հատորը
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Գ. Կառվարեցի «Բանաստեղծութիւն»ը
* * *	Մշակութային լուրեր

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԸ. ՊԱՐԻ. ՓԻՐ 3 Մ Ա Ր Տ 1929 ԳԵՅՐՈՒՄ

Մ. Ի Շ Խ Ա Ն

ՍԱՌՆԱՐԱՆԵՆ ԵԼԱԾ ՄԱՐԴԸ

(ԹԱՏԵՐԱԽԱՂ ԶՈՐՍ ԱՐԱՐ)

Ա. ԱՐԱՐ

ԱՊԱԳԱՅԱՊԱՇՏՆԵՐՈՒ ԱԿՈՒՄԲԸ

Գեղքը տեղի կ'ունենայ Միացեալ Նահանգներու մէջ, մեր թուականէն հարիւր տարի ետ: Հետեւաբար Ակումբի կահաւորումը պէտք է ըլլայ գերարդիական (futuriste): Մէկ կողմը՝ պատ մը, խմիչքի գանազան շիշերով: Պատերը նկարագարդուած են դէպի ապագան խոյացող հրթիռներով, հրավառ աստղերով եւ կանանց լուսարձակ մարմիններով: Մուտք՝ աջէն եւ ձախէն: Ճակատը կախուած է Ակումբի հիմնադիր ճորն Սմիթի մեծագիր նկարը (կամ դրուած է կիսանդրին): Ուժեղակազմ, հարուստ դնդերներով, ժողտուն եւ լուստես մարզիկի տիպարն է ան, կուրծքը զարդարուած շքանշաններով:

1.

Վարագոյրը կը բացուի արագ կշռոյթով ազնկալի երաժշտութեամբ մը:

Ակումբի հաւատարիմ անդամներէն Փիքըրս, քա-

նասունի մօտ, աննճարացած երեսոյթով նստած է սե-
զանի մը առջեւ ու կը ծխէ: Սրահը կարգի դնելով գրա-
դած է երիտասարդ սպասեակ օրիւորդ Քեթի: Անոնց
հագումածքին եւ արդուգարդին մէջ զգալի պէտք է ըլ-
լայ սպազայական ոնի դրոշմը:

Փիթըրս.— Քեթի, հաճիս, մարէ՛ սա աղմուկը:

Քեթի.— Նորէ՞ն արամադրութիւննիդ լաւ չէ:

Փիթըրս.— Քիչ մը լրութիւն, ի սէր Աստուծոյ:

Քեթի (երածշտուրիւնը կը մարէ եւ բաժակ մը խմիչք կը դնէ Փի-
թըրսի սեղանին).— Այսօր բացառիկ օր է մեր Ակումբին հա-
մար:

Փիթըրս.— Ինչո՞ւ. ի՞նչ կայ:

Քեթի.— Ձէ՞ք գիտեր: (Մատնանշելով սրբուն Ամիքի նկարը): Տղան
կու գայ շուտով:

Փիթըրս.— Գիտեմ:

Քեթի.— Ձարմանալի բան. ուղղակի անհաւատալի... Ի՞նչ տեսակ
մէկն է արդեօք:

Փիթըրս (հեզմանով).— Պոյոյ-սրտոյ ազուար երիտասարդ մը ան-
շուշտ:

Քեթի.— Հօրը կը նմանի՞:

Փիթըրս.— Աւելի սիրուն ըլլալու է, աւելի հմայիչ:

Քեթի.— Իրա՞ւ կ'ըսէք. ա՛խ, ինչպէ՛ս անհամբեր եմ:

Փիթըրս.— Ձդո՞յշ, քու պատանոց չէ:

Քեթի.— Կ'ըսեն, թէ շա՛տ հարուստ է:

Փիթըրս.— Կ'ըսեն:

Քեթի.— Կ'ըսեն, թէ հարիւր միլիոն ունի, ճի՞շդ է:

Փիթըրս.— Ունենալու է: Այսքան տարի հօրը դրամազուլտին տո-
կոնները իրարու վրայ բարդուեցան եւ ծախսող չէզաւ. ան
միլիոնատէր չըլլայ, հապա ե՞ս ըլլամ:

Քեթի.— Առտուընէ ի վեր սիրտս կը զարնէ: (Ձեռքը կուրծքին տա-
նելով): Ո՛հ, սիրտս դուրս պիտի թռի կարծես: Մէյ մը զար՛
տեսնէինք:

Փիթըրս.— Կու գայ, մի՛ յուզուիր, անպայման կու գայ:

Քեթի.— Ո՛վ զիտէ՛ ի՞նչ ուրախ է վերապրելուն համար:

Փիթըրս.— Կը կարծե՞ս...

Քեթի.— Խօ՞սք է ըսածնիդ, հարկաւ:

Փիթըրս.— Ի՞նչ պիտի ընէ վերապրելով:

Քեթի.— Ապրելէն աղուոր բա՞ն կայ: Մա՛նաւանդ մէկու մը հա-
մար, որ շատոնց մեռած էր:

Փիթըրս.— Դուն եւ ես իբրեւ թէ կ'ապրինք. ի՞նչ է ըրածնիս:

Քեթի.— Ինչ որ ուզենք՝ կ'ընենք. ամէնուն պէս:

Փիթըրս (տխուր).— Ամէնուն պէս, այո՛, թող ան ալ գայ եւ ըլլայ
ամէնուն պէս՝ եթէ կրնայ:

Քեթի.— Ինչո՞ւ պիտի չկարենայ:

Փիթըրս.— Շա՛տ հին է, Քեթի, շա՛տ հին... Կը մեղքնամ ես այդ
տղուն:

2.

Ներս կը մտնէ Թում Սմիթ եւ իր խնամակալը : Թում Սմիթ երիտասարդ է, քանրհինգ տարեկան, բայց յոգնած, ստգոյն դէմքով եւ դանդաղ խօսուածքով ու շարժումներով : Միակն է, որ հագուած է մեր օրերու գգեստ . կը կրէ նաեւ փողկապ : Միւս բոլոր անձերը կը ներկայանան քեթեւ հագուստներով : Կարեւոր է, որ անոնք Թում Սմիթէն զգալապէս տարբեր ըլլան՝ իրենց արտաքին երեւոյթով, թէ՛ իբրեւ հագուստ եւ թէ իբրեւ արդուգարդ :

Ննամակալը յիտունը անց՝ խորամանկ եւ գործնական մարդու տիպարն է :

ԽՆԱՄԱԿԱԼԸ (Թումին հետ խօսակցութիւնը շարունակելով) .— *Ահա եւ հօրդ հիմնած Ապաղայապաշտներու Ակումբը : Միակ վայրն է, որ կարծեմ ծանօթ է քեզի : Շէնքը նոյն շէնքն է . այն հազուապէս շէնքերէն, սրոնք կը պահուին իբրեւ հնութիւն :*

ԹՈՄ (զարմացած շուքըր դիտելով) .— *Այո՛, շէնքը նոյն շէնքն է . հոս եկած եմ երբեմն հօրս հետ : Բայց որքա՛ն փոխուած է շուքըս ամէն ինչ . . .*

ԽՆԱՄԱԿԱԼԸ (ձեռքը Թումի ուսին դնելով) .— *Սիրելի Թում, կեանքը երբեք նոյնը չի մնար : Կեանքը կը թռի ժամանակի թեւերուն վրայ : (Ներկայացնելով Փիթըրսին) : Ծանօթացիր մեր Ակումբի հաւատարիմ անդամներէն պարոն Փիթըրսին : (Թում կը բօբուէ Փիթըրսի ձեռքը) : Հաւատարիմ իր ներկայութեամբ, բայց ս'չ ոգիով : Ահա եւ մեր անուշիկ Քեթին, որ քեզ կը զուգանէ, երբ որ ծարաւ գրաս :*

Քեթի (հիացական) .— *Ծա՛ռ ուրախ եմ, սլարոն Թում, եւ շատ հըպարտ . . .*

ԽՆԱՄԱԿԱԼԸ (Թումին քեւէն բռնած՝ տանելով հօրը նկարին առջեւ) .— *Հարկ կա՞յ ծանօթացնելու : Մեծ մարդ էր հանդուցեալը : Պայծառ դալիքին տեսիլքովը ասրեցաւ . եւ մեռաւ :*

ԹՈՄ .— *Ու ես հիմա կը գտնուիմ այդ դալիքին մէջ :*

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— *Ու դուն հիմա մեզի հետ պիտի քալես դէպի առաջ, դէպի նոր դալիքներ . . .*

ԹՈՄ .— *Ի՛նչ հրաշք :*

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— *Հրաշքներ գոյութիւն չունին այլեւս : Հրաշք գործելը մեր ձեռքն է :*

ԹՈՄ (երկարօրէն դիտելով հօրը նկարը) .— *Հայրս վայրկեան մը տեսնէ՛ր այս բոլորը . . . Հայրս դիտեա՛ր, թէ ես ողջ եմ ասպաղային մէջ . . .*

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— *Մենք կը տեսնենք, մենք դիտենք, մենք՝ իր հեռուորդները : (Լրջացած եւ նստելով) : Հիմա, Թո՛մ, ըլլանք գործնական եւ խօսինք գործնական խնդիրներու մասին : Դուն մեր ժամանակին համար անփորձ երեխայ մըն ես . պէտք ունին խնամակալի մը :*

ԹՈՄ .— *Ես չափահաս եմ :*

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Այո՛, բայց խելքդ չի հասնիր մեր ժամանակի իրն-
զիրներուն: Ձեռքէդ բռնող մը պէտք է:

ԹՈՄ.— Բայց ինչո՞ւ:

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Որովհետեւ հազար ու մէկ փորձանքներ կան:

ԹՈՄ.— Շուտով կը սորվիմ ճամբաները եւ կը վարժուիմ երթեւեկի
միջոցներուն:

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Միայն ճամբանե՞րը գտանդ ունին. հասցա մարդե՞-
րը, շողքորթնե՞րը, խարերանե՞րը...: Ես քեզ կ'առնեմ հո-
վանիխ տակ: Իրբեւ Ակումբի ներկայ նախագահ՝ ես պար-
տաւոր եմ հսկելու քու հանգիստիդ եւ ապահովութեանդ վր-
բայ: Լսէ՛, այս վայրկեանէս սկսեալ ո՛չ մէկ բան կ'ընես եւ
ո՛չ մէկ տեղ կ'երթաս՝ առանց իմ զիտութեան: Պա՞րզ է, լու-
հասկցա՞ր:

ԹՈՄ (համակերպած).— Պարզ ըլլալը՝ պարզ է. բայց չեմ հասկը-
նար ինչո՞ւ:

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Քու բարիքիդ համար. վերջը կը հասկնաս:

3.

Ներս կը խուժէ լրագրողներու խումբ մը: Անոնց-
մէ մէկ-երկուքը ունին լուսանկարող մեքենաներ: Հե-
տագայ ամբողջ խօսակցութեան ընթացքին եւ ներս
մտած-չմտած լուսանկարիչները գաւազան դիրքերէ կը
նկարեն փայլատակող լոյսով, իսկ միւսները նոթեր
կ'ստնեն:

Փիթըրս կամաց մը դուրս կը սահի:

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Առաջին փորձանքները եկան արդէն: (Լրագրողնե-
րուն դառնալով): Պարոննե՛ր, Թոմ Սմիթ նոր ելած է հիւան-
դանոցէն եւ յոգնած: Չի կրնար շատ ժամանակ տրամադրել
ձեզի:

Ա. ԼՐԱԳՐՈՂԸ.— Քանի մը հարցումներ միայն. վստահ եղէք չենք
յողնեցներ գինք: (Յոյց տալով Թոմը, որ շուարած, շլոճրած
կեցած է մէկ կողմ, խեղճացած վիճակով): Նոյն ինքն պարոն
Թոմ Սմիթն է, այնպէս չէ՞, քսաներորդ դարէն մեզի հասնող
հերոսական վերապրողը:

ԽՆԱՄԱԿԱԼԸ (Թոմը գրկելով ուսերէն).— Այո՛, պարոններ, պա-
տիւր ունիմ ձեզի ներկայացնելու այս Ակումբի հիմնադիր նը-
շանաւոր Ճորճ Սմիթի հարագատ որդին՝ Թոմ Սմիթ, մեր բո-
լորիս նահապետը, մեր ցեղի հնազոյն ներկայացուցիչներէն
մին, որ այսօր մեր մէջ է միտոյ ու ոսկորով:

Բ. ԼՐԱԳՐՈՂԸ (խօսիլը կտրելով).— Եթէ կարելի է՝ ուղղակի իրեն
պիտի ուզէի ուղղել խօսքս... պարոն Թո՛մ, ե՞րբ եւ ինչո՞ւ
ձեզ սառնարան գրին:

ԹՈՄ (խօսելով ծանր ու դանդաղ շեշտով).— Քսաներորդ դարու վեր-
ջին քառորդին, հազիւ 25 տարեկան էի, երբ մտայ հիւանդա-
նոց: Ձիս ասնջող ախօրը դարձան չունէր այդ օրերուն: Հօրս

Համաձայնութեամբ բժիշկները որոշեցին մարմինս ստեղծել
և. պահել, մինչև որ հիւանդութեանս ճարը դանուէր :

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Եւ ահա, ինչպէս դիտէք, մենք կը դանուինք Ձեր
դարու վերջաւորութեան : Թո՞մ նուաճած է դար մը ամբողջ :

Գ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Ուրեմն պարոն Թո՞մ 125 տարեկան է :

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Եթէ կ'ուզէք, այո՛ . . . : Թէեւ աւելի ճիշդ պիտի ըլ-
լար բռել, թէ ան միայն 25 տարեկան է : Ապրած է 125 տա-
րիներ, բայց 25 տարեկան առոյգ երիտասարդ մըն է . այնպէս
չէ՞, Թո՞մ :

ԹՈՄ .— Այդպէս ըլլալու է : Ստոնարանի տարիները կեանքիս մաս
չեն կազմեր :

Գ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Պարոն Թո՞մ, հիմա կատարելագէս առո՞ղջ էք :

ԹՈՄ .— Կատարելագէս : Ի՞մ հիւանդութեանս գեղը զանուկացաւ վեր-
ջնայէս և. ես առաջին օդատուղներէն մէկը եղայ : Բժիշկներս
կը վստահեցնեն, թէ մօրէ նոր ծնածի պէս եմ :

Ա. ԼՐԱԳՐՈՂԸ .— Ի՞նչ դրացիք ստոնարանին մէջ ամբողջ 100 տարի :
ԹՈՄ .— Ոչինչ :

Ա. ԼՐԱԳՐՈՂԸ .— Մահուան պէս էր ուրեմն :

ԹՈՄ .— Մահը, կ'ըսեն, նոր տեսակի կեանք մըն է, մինչդեռ ասի-
կա՛ կեանքէն կախակայում էր, կեանքի սովորական ընդհա-
տում, արջերու ձմեռնային թմբիր :

Բ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Ուրիշ բնակիչներ չկայի՞ն ստոնարանին մէջ :

ԹՈՄ .— Կային, անշուշտ, բայց ինծի ծանօթ չէ անոնց ճակատա-
դիրը :

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Բժիշկներու բազմաթիւ սերունդներ, անցնող դո-
բերուն, հսկեցին իր վրայ և. մենք հղարտ ենք, որ Թո՞մ Սմիթ
կրցաւ արգարացնել անոնց յոյսերը :

ԹՈՄ .— Ես բժշկութեան համար եղայ տեսակ մը փորձի կենդանի,
հնդկախոզ :

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Եւ սակայն այդ փորձին շնորհիւ նուաճեցիր 100
տարուան ժամանակաշրջանը :

Գ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Պարոն Սմիթ, հարիւր տարիներու հոլովոյթին
մէջ կրցա՞ք նոյն անձը մնալ :

ԹՈՄ .— Ես նոյն անձն եմ, եթէ անշուշտ ստոնարանին մէջ զիս չփո-
խեցին : (Յակկարծ շփոքած) : Ինչո՞ւ տուիք այդ հարցումը .
կասկածնե՞ր ունիք անձիս փոփոխականութեան մասին :

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Պարոննե՛ր, խնդրեմ, անտեղի հարցումներ մի՛ տաք
մեր հիւրին : Ան շարունակ կը դանուէր Միացեալ Նահանգնե-
րու ամէնէն պատուաւոր և. վստահելի հաստատութեան մը
ստոնարանին մէջ, երաշխաւորուած անհերքելի փաստաթուղ-
թերով :

Դ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Գաղափար ունեցա՞ք, թէ քանի աստիճան ցուրտ
կը տիրէր ձեր . . . այդպէս ըսենք՝ հանդստարանին մէջ :

ԹՈՄ .— Ես գիտե՞մ քանի աստիճան ըլլայր . . . փա՛ր, կրցածիդ չափ
վար իջիր, մինչև որ սառ կապեն ջրկերպ, աչքերդ, ձեռքերդ,
մինչև որ սառ կապէ նաեւ ուղեղդ :

Դ. ԼՐԱԳՐՈՂԸ (մտելու պէս ըլլալով) .— Պը՛տս, կ'երեւակայեմ ի՞նչ
դժուար է, ի՞նչ անսանելի . . .

ԹՈՄ .— Ո՛չ, ձեր կարծածին պէս ալ անտանելի չէ . այլ՝ անուշ թըմ-
րիբ եւ Երանելի քուն...

Գ. ԼՐԱԳՐՈՂԸ (Ելիսացած) .— Ըսել է՝ Հարիւր տարի ձեր սիրտը դար-
կու՝ առանց վայելեան մը ցաւ պատճառելու, սրիւնը ձեր
երակներուն մէջ շրջեցաւ՝ առանց ծերութիւնը զլալ տալու :
Երանի՛՜ ձեզի...

ԽՆԱՄԱԿԱԼԸ (հանդիսաւոր) .— Այո՛, պարսններ, Թոմ Սմիթ այն
Երանելին է, որ իր ծնունդով անցեալ դարու պատմութեան կը
պատկանի, իսկ իր կեանքով՝ մեր ժամանակներուն : Անցեալէն
մեզի Երան՝ բացասիկ նմոյշ մը, որ թոչոյ գարեբը իրարու կը
կամարէ : (Ձեռքը պարզելով դէպի պատէն կախուած ճկարը) :
Ահա իր հայրը, 100 տարուան նուերական յիշատակ, ահա իր
սրկին՝ ծաղկափի Երիտասարդ...

Ա. ԼՐԱԳՐՈՂԸ .— Պարոն Սմիթ, ինչպէ՞ս անցուցիք դար մը տեւող
ձեր անուշ սառնաքունը :

ԹՈՄ .— Մէկ վայելեանի պէս : Չղգացի, թէ ինչպէս անցու :

Ա. ԼՐԱԳՐՈՂԸ .— Երազե՞ք ալ շտետք այդ ժամանակամիջոցին :

ԹՈՄ .— Երազե՞ք... (Շուարած) : Ինծի կը թուի, թէ Երազը հիմա
կը տեսնեմ : Այս ամէնը երազ չէ՞ արդեօք, ինչ որ կը գտնեմ
չուրջս, ինչ որ կ'ընեմ, ինչ որ կ'ըսեմ...

ԽՆԱՄԱԿԱԼԸ (կրկին ուսերէն գրկելով) .— Ո՛չ, սիրելի Թոմ, տե-
սածդ երազ չէ : Դուն այժմ կը գտնուես ազազայ սերունդնե-
րու գրկին մէջ : Քու շտապիչներուդ կեանքը կ'ետայ շուրջդ
Չարդ գարու տենդով ու թափով : Շուտով դուն ալ կը խառ-
նուես այդ ետուն հոսանքին :

Բ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Հարիւր տարի բան մը չկերա՞ք, ծո՞մ պահեցիք :

ԹՈՄ .— Ես չկերայ, բայց կարծեմ կերցուցին :

Բ. ԼՐԱԳՐՈՂԸ (հագալով եւ կմկմալով) .— Ամբողջ հարիւր տա-
րի... ը՛... սո՛ւրբ մնացիք... բսել կ'ուզեմ...

ԹՈՄ .— Հասկցայ : Սառած մէկուն համար սուրբ մնալը դժուար չէ :
Համբերութեամբ սպասեցի :

Բ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Իսկապէս գովելի համբերութիւն... : Կը ներէք,
որ ձեր մտերմական կեանքին վերաբերեալ ուրիշ հարցում մըն
ալ ընեմ . անցեալին մէջ թողած սրտի խնդիրներ ունէ՞ի՞ք
արդեօք :

ԹՈՄ (էիչ մը մտածելէ ետք) .— Այո՛, ունէի : Կապուած էի սեւ մա-
զերով եւ սեւ աչքերով սիրուն աղջկան մը : Բայց զուք ինչո՞ւ
կը հետաքրքրուէք իմ սրտի խնդիրներովս :

Բ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Երբ ստոեցաք, այդ սէ՞րն ալ ստոեցաւ . ձեր սըր-
տին մէջ :

ԹՈՄ .— Անշուշտ, ամէն բան ստոեցաւ :

Բ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Իսկ հիմա՞ :

ԹՈՄ .— Հիմա նորէն տաքնալու վրայ է :

Բ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Ինչպէ՞ս :

ԹՈՄ .— Ձիւնհալէն ետք կարկաչող ջութերուն պէս :

Գ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Ճի՞շտ է, պարոն Սմիթ, որ հարիւր տարի ննջելէ
ետք կ'արթննաք մեծահարուստ :

ԹՈՄ .— Ես հարուստ եմ , այո՛ , շա՛տ հարուստ . . . այս արևելք , ամառնային դազջ օգը , վերադարձող կեանքը . . . ուղղակի շխտած եմ , գինովցած :

Գ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Այդ մասին չէք հարցումս :

ԹՈՄ .— Հաղո՞մ :

Գ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Կ'ըսեն , թէ ձեր հօր թողած ժառանգութիւնը զրամատան մէջ դար մը ամբողջ աճելով հասած է պատկառելի գումարներու :

ԹՈՄ .— Հա՞ , ի՞նչ լաւ . երկու արեւ նոյն ատեն կը ծագին ու բեմն :

Դ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Ո՛վ գիտէ՝ որքա՛ն երջանիկ էք միլիոնատէր արթըննալով :

ԹՈՄ .— Իսկապէս հաճելի է լսել միլիոններու մասին : Մեր ժամանակ շատ լաւ բան էր միլիոնատէր ըլլալը :

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Այսօր ալ , Թոմ , այսօր ալ աղսւոր բան է միլիոններ ունենալը : Այսօր եւ միշտ եւ յաւիտեան :

Ա. ԼՐԱԳՐՈՂԸ .— Ի՞նչ պիտի բնէք ձեր հարստութիւնը :

ԹՈՄ .— Պիտի ուտեմ , պարոններ , եւ պիտի խմեմ : Հարիւր տարւան սնօթութիւն ունիմ եւ ծարաւ :

Ա. ԼՐԱԳՐՈՂԸ .— Երբ աչքերնիդ բացիք , շատ փոխուած գտա՞ք մեր աշխարհը :

ԹՈՄ .— Երկինքը նոյնն է , արեւը նոյնն է , լիսները նոյնն են :

Ա. ԼՐԱԳՐՈՂԸ .— Մարդի՞կը , կեա՞նքը . . . :

ԹՈՄ .— Յուսամ անոնք ալ շատ փոխուած չեն բլլար եւ ես դարձեալ կը ճանչնամ իմ նմաններս :

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Ո՛չ , Թոմ , շատ բան փոխուած պիտի գտնես շուրջդ . մեր դարը հսկայաբայլ յառաջիմած է :

Բ. ԼՐԱԳՐՈՂԸ .— օրինակ , ձեր դարուն ինչպէ՞ս էր սէքսը :

ԹՈՄ .— Մէ՞քսը . . . : Հիմա կուսանէն տարբեր ըլլալու չէ : Կր համբուրուէին , կը դրկուէին եւ ինը ամիս , ինը ժամ ետք երեխայ մը կը ծնէր :

Բ. ԼՐԱԳՐՈՂԸ (դառնալով շուրջիմենսուն) .— Ուրեմն այս մտրդին մէջ չենք յառաջիմած : Հիմա ալ ինը ամիս պէտք է պզտիկ բերելու համար :

Գ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Ի՞նչ են ձեր ապագայ ծրագիրները :

ԹՈՄ .— Ապրիլ՝ ահա՛ միտակ ծրագիրս : Պիտի վերսկսիմ ճիշդ հոնկէ , սւր բնդհատուած էր կեանքս :

Գ. ԼՐԱԳՐՈՂԸ .— Ապրելու մասնաւոր ոճ մը պիտի որդեկրէ՞ք :

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Բնականաբար հին ձեւով պիտի չապրի . ստիպուած է որդեկրել մեր դարուն ոճը :

ԹՈՄ .— Ձեմ դիտեր ի՞նչ ոճով պիտի ապրիմ , բայց բժիշկներս յանձնարարեցին զոռջ ըլլալ , չյուզուել : Գիտէ՞ք՝ հարիւր տարիէ ի վեր սիրտս վարժուած է դանդաղ վարճելու . մէկ անգամէն չի կրնար արագանալ : Ուշադրութիւն պէտք է ընեմ , որ պանդաղաշարժ արիւնս մէկ անգամէն թումբերը քանդող հոսանքի չվերածուի :

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Ուրիշ հարցումներ ունի՞ք :

Ա. ԼՐԱԳՐՈՂԸ .— Պիտի փափաքէինք , որ պարսն Սմիթ 20րդ դարու պատգամը փոխանցէր մեր դարու բազմութիւններուն :

ԹՈՄ (վարանոս) .— Պատգամ... Ի՞նչ պատգամ...: Յանուն դար մը առաջ ասորոյ եւ անհետ կորած բոլոր մարդոց կ'ողջունեմ ձեզ: (Յուզուած): Այս սլահուն կ'ուզեմ ձեզ բոլորդ սեղմել կուրծքիս եղբայրօրէն: Կը յուսամ, թէ յաջողած էք Հրաշափոխել կեանքը եւ աշխարհը վերածել զբախտի, ինչպէս կ'երազէին անցեալի բնակիչները:

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Քեզ յուստիս չենք ընել, Թո՛մ, ամէն ինչ լաւ է, ամէն ինչ պիտի դանեա սյնպէս՝ ինչպէս երազեց բոլորէն ասաջ քու հայրդ (ցոյց կու տայ նկարը), այս Ակումբի հիմնադիր եւ սպառաշի տեսիլքով բռնկած պատմական այդ մեծ զէմքը: (Դառնալով լրագրողներուն): Պարտնէ՛ր, Հարցադրոյցի սահմանուած ժամանակը լրացած է:

Լրագրողները կը մեկնին:

4.

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Ազատեցանք: Ձեր ատե՞նն ալ անտանելի արարածներ էին սա լրագրող կոչումները:

ԹՈՄ .— Հետերնին դորձ չեմ ունեցած:

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Անփոփեղանկատ, աներես: Եթէ կտրենան՝ պիտի պահանջեն, որ մարդոց ննջարանին պատուհանները վարագոյր չունենան: Ո՛չ մէկ պաղտնիք կը յարգեն, ո՛չ մէկ սրբութիւն: (Թռփն թելը բռնելով մտերմօրէն): Թո՛մ, չե՞ս տաքնար այդպէս. հանէ նետէ՛ սա բաճկոնդ եւ փողկապղ, անդեայի աւելորդ այդ մնացորդները:

ԹՈՄ (վախցած) .— Ո՛չ, ո՛չ, ես կը մտնեմ. տակաւին սառը մէջս է կարծես, տակաւին ոսկորներս չեն տաքցած:

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Դուն գիտես: (Զինք առաջնորդելով հորը նկարին տակ դրուած սեղանին ետ): Ի՞նչ մարդ էր հանդուցեալ հայրդ... ամբողջ կեանքը պայքար եղած է հին գողափորներու եւ նախապաշարումներու դէմ: Գիտե՞ս ի՞նչ էր իր նշանաբանը:

ԹՈՄ .— Ի՞նչ:

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Ասորոյն միշտ տւելի լաւ է, քան անցեալը. երանի՛ր ասպառայի դարբիններուն:

ԹՈՄ .— Իրա՞ւ այդպէս ըսած է հայրս:

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— Այդպէս բսած եւ այդպէս գործած: Մարդտէ էր հայրդ, որ հիմա քու աչքերովդ կը տեսնէ լուսաշող ասպազան:

Թո՛մ կը դիտէ հորը նկարը, տրտում եւ շուարած:

ԽՆԱՄԱԿԱԼԸ (պոռալով) .— Քէթի՛, ստոի պէս պաղ երկու դարեջուր:

Մինչ Քեթի պատէն դուրս կու գայ գարեջուրի երկու խոշոր ու փրփրուն գաւաթներ բռնած, Թո՛մ կը

սկսի դողդղալ. ակռաները իրայու կը գարնուին եւ ուսերը կը ցնցուին :

ԽՆԱՄԱԿԱԼԸ (մտաւոգ) .— *Ի՞նչ ունիս, ի՞նչ եղաւ քեզի :*

ԹՈՄ (միշտ դողդղալով) .— *Ես... Ես ալերժի ունիմ պաղ բաներու հանդէպ : Ես... Ես չեմ կրնար պաղ բան տեսնել, պաղ բան խմել : (Ակռաներու գարնուիլը եւ ուսերու ցնցումը կը շարունակուին) :*

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— *Լա՛ւ, հանդարտէ՛, մի՛ խմեր, ուրիշ բան խմէ . տաք բան մը, տաքցնուց բան մը... : Քեթի, շո՛ւտ թոմին համար ուխտքի բեր, ստանց սատի :*

Թոմ գլխով հաւամուքեան նշան կ'ընէ եւ կամաց-կամաց կը հանդարտի, մա՛նաւոց քանի մը ումպ ուխտքի խմելէ ետք :

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— *Անցա՞ւ դողդ... դուն պէտք է մոռնաս սառն ու սառնարանը :*

ԹՈՄ .— *Ձեռքս չէ . Ես սառնարանէն նոր ելայ : Ամէն անգամ, որ «պաղ» բառը լսեմ, պաղ բանի մը դպիմ, միտքս կ'իջնայ դադողի նմանող սառնարանս եւ ամբողջ մարմնէս դող կ'անցնի : (Գարձեալ քեքրեւորէն դող կ'ունենայ) : Ձմեռը երկար կը տեսէ՞ հոս :*

ԽՆԱՄԱԿԱԼԸ .— *Եղանակներուն տեւողութիւնը մենք կը ճշդենք . միջոցորտային բարեխառնութիւնը մեր կամքէն է կախուած : (Հնգածու) : Հանգստացա՞ր քիչ մը . ուխտքիդ խմէ, կը տաքնաս : Կ'ուզե՞ս Քեթին թէյ մըն ալ թող պատրաստէ : Ես քանի մը վայրկեան պիտի բացակայիմ . չըլլա՛յ թէ տեղէդ շարժիս, մինակը դուրս ելլես : Կրնան քեզ առեւանդել : Միլիոններուդ լուրը տարածուեցաւ ամէն կողմ : Յետուութիւն, շատ չեմ ուշանար (դուրս) :*

5.

Թոմ հստած հօրը նկարին ներքեւ՝ դանդաղօրէճ ուխտքին կ'ըմբռնուի, երբ յանկարծ Քեթի կը հնչեցնէ դարձեալ արագ կշռոյթով աղմկալի եղանակը : Հետըզ-հետէ Թոմի դէմքը կը մթազնի, գլուխը կ'առնէ արեւը, ակունքները կը փակէ ամբողջ եւ ի վերջոյ կը պոռայ :

ԹՈՄ .— *Կը բաւէ՛, դիս պիտի մեռնէք . դադրեցուցէ՛ք սա աղմուկը : Քեթի (հովը կու գայ եւ անուշ ժպիտով մը) .— Ձեզի հաճոյք պատճառելու համար կը նուազեմ :*

ԹՈՄ .— *Ասանկ նուա՞ղ կ'ըլլայ . իմ ջիղերս չեն դիմանար այս աղմուկին :*

- Քեթի**. — Բայց, պարոն թոմ, ապագայապաշտաները շա՛տ կը սիրեն այս նուազը :
- ԹՈՄ**. — Ի՛նչ դժուար է ապագային մէջ աղբիւր... Ես չեմ կրնար, չեմ կրնար, կը խելաղարիմ... : (Գարնեալ գլուխը կ'առնէ փետուս մէջ եւ կը փակէ ականջները) :
- Քեթի** (կը դադարեցնէ նուազը եւ կը մտեմայ թումի սեղանին) .— Ներողութի՛ւն, դուք բացառութիւն չէք. պարոն Փիթըրոն ալ ձեզի պէս է. միայն օրօր եւ թաղմանական եղանակներ կը սիրէ մօտիկ ընել : Ան ալ ձեզի պէս այս դարէն չէ կարծես :
- ԹՈՄ** (սքափած) .— Այս դարէն չէ՞ :
- Քեթի**. — Ո՛չ, այս դարէն է, բայց տեսակ մըն է. միշտ հինը կը փնտռէ, յառաջդիմութիւն չի սիրեր :
- ԹՈՄ**. — Ես կը սիրեմ յառաջդիմութիւնը. ես հօրս ազուն եմ :
- Քեթի**. — Ի՛նչ լաւ. ուրեմն այս Ակուսիքին անդամ կը դառնար : (Ոգեւորուած) : Պարոն Սմիթ, ուրիշ բան մը կը փափաքի՞ր բերեմ ձեզի :
- ԹՈՄ**. — Ո՛չ, չնորհակալ եմ :
- Քեթի**. — Կը ներէք, իրա՞ւ 100 տարի ստոնարան մնացիր եւ ոչջ մնացիր :
- ԹՈՄ** (ժպտելով) .— Այդպէս է :
- Քեթի**. — Հաւատարմ չի դար :
- ԹՈՄ**. — Ինչո՞ւ :
- Քեթի**. — Ի՛նչ դիտեամ. աստեղ բան չէր լսուած. հարիւր տարի ստոնարանին մէջ ոչջ մնալ եւ թարմ մնալ... իրաւ որ հաւատարի չէ :
- ԹՈՄ**. — Հաւատա՛, ես եմ բողբ :
- Քեթի**. — Ուրեմն 20րդ դարը ճանչցա՞ծ էք :
- ԹՈՄ**. — Եւ ինչպէ՛ս... : Այդ դարուն ծնած, այդ դարուն ուսում առած, այդ դարուն սիրած... :
- Քեթի**. — Նաեւ սիրա՞ծ... : Հաւատարմ չի դար :
- ԹՈՄ**. — Հաւատա՛, Քեթի, հաւատա՛, այս բոլորին մէջ կախարչութիւն չկայ :
- Քեթի** (վարսնուտ) .— Կրնա՞մ ձեր մտգերուն, ձեր մտքին դպիլ... :
- ԹՈՄ**. — Ի հարկէ կրնաս. փորձէ եւ տես. ես ուրուական չեմ :

Քեթի վախով եւ հիացումով կը մտեմայ եւ դուրս գալով մատնետով կը շօշափէ թումի դէմքն ու մագերը :

- Քեթի**. — Ի՛նչ փափուկ են ձեր մտգերը, ի՛նչ նուրբ է ձեր մտքը :
- ԹՈՄ**. — Սառին մէջ պառկելէն փափկացան երեւի :
- Քեթի**. — Պարոն Սմիթ, հիմա մէկը չունի՞ր այս աշխարհիս վրայ :
- ԹՈՄ**. — Ո՞վ կ'ուզես որ ունենամ. բոլո՞րը գացին, բոլո՞րը... հայր, մայր, քույր, եղբայր, ընկեր, բարեկամ... : (Յոյց տալով հօրը նկարը) : Միայն սա կայ, ան ալ պատկեր է :
- Քեթի** (դառնալով նկարին կողմը) .— Ճի՞շտ է, որ ձեր մէջ կ'աղբի ան հիմա :

ԹՈՄ (մտածելով) .— Մի՛ հաւատար. երբ մարդ կ'տպրի՝ ինք միայն կ'տպրի. երբ մարդ կը մեռնի՝ ինք միայն կը մեռնի : Մնաց-եալը խօսք է :

Քնթի .— Հապա ինչո՞ւ տարբեր բան կ'ըսեն :

ԹՈՄ .— Կ'բանն, Քնթի, կ'ըսեն. մեր առեմնն ալ առանկ բաներ կ'ըսէին : Նոր ուխտքի մը կու տա՞ս :

Քնթի .— Սիրո՞ւյ, պարսն Սմիթ : (Պարսպ բաժանիր վերցնելով՝ կ'ուղ-ղրւի դէպի պատ) :

6.

Յաջորդարար ներս կը մտնեն «ազգականներ», որոնցմէ առաջինն է Լիլի, պննասէր երիտասարդուհի մը : Կը վագէ ուղղակի թումին վրայ եւ վիզը փաթթրւելով .

Լիլի .— Թո՛մ, անուշիկ դարմիկս, որքա՞ն ուրախ եմ . . .

ԹՈՄ (զարմացած) .— Ես ձեր դարմի՞կը . . .

Լիլի .— Ինչպէ՛ս ալ կը նմանիս մեծ հայրիկիս. նոյն ճակատը, նոյն քիթը, նոյն աչքերը : Տեսածիս պէս ճանչայ :

ԹՈՄ .— Բայց, օրի՛ս'րդ . . .

Լիլի .— Ներողութիւն, տիկի՛ն : Եօթը տարուան մէջ հինգ անգամ տիկին : Հինդ ամուսին եւ հինգ մականուն : Բոլորն ալ վրայէս թօթափեցի եւ դերադարձայ մեր տոհմին, պատրայիս անու-նին : Մենք ալ Սմիթ ենք :

ԹՈՄ .— Հա՞, շատ ուրախ եմ :

Լիլի .— Նոյն արիւնէն. ես քու մեծ հօրեղբորդ պատիկ թոռան եր-րորդ դուկին թոռնուհին եմ :

ԹՈՄ (շուարած մատի շարժումով) .— Դուք իմ մեծ հօրեղբորս թո-ռան . . .

Լիլի (ընդմիջելով) .— Այո՛, այո՛, հաշուելու պէտք չկայ. մենք եր-կուքս ալ Սմիթ ենք, հարողատ դարմիկներ : Եկած եմ քեզ իմ տունը տանելու. շա՛ւտ, հաւաքէ իրերդ :

ԹՈՄ .— Բայց, տիկի՛ն . . .

Լիլի .— Լիլի, տիկին Լիլի Սմիթ . . . առայժմ :

ԹՈՄ .— Տիկին Լիլի, ես դեռ նոր զուրս ելայ ստոնարտնէն եւ չեմ սրոշած, թէ ո՛ւր պիտի երթամ : Պիտի սպասեմ ինամակալիս կարգադրութեան :

Լիլի (կարուկ) .— Առանկ բան չկայ. դուն իմ հարողատ ազդական ես եւ կը վայլէ, որ իմ տունս դաս : (Նշանակալից ժպիտով) : Չես զղջար, տունը բոլորովին մինտի եմ : Հանդատուէտ բոլոր պայմանները ունիմ : Շա՛տ զոհ կը մնաս :

Ներս կը մտնէ Հերի Տէյվիս, ակնոցաւոր, ֆադատ մարդ մը, որուն շարժումներն ու խօսքերը կշռուած են :

ՏէՅՎԻՍ (ձեռքը երկարելով) .— **Պարոն Թոմ Սմիթ**, այնպէս չէ՞ :
ԹՈՄ .— Այո՛, պարոն :

ՏէՅՎԻՍ (Թոմին ձեռքը կը քօքուէ ուժով) .— **Շա՛տ ուրախ եմ ձեր ձեռքը թօթուելուս համար** . նոյն տանն խորապէս յուզուած : **Ծանօթանանք**, ինչպե՛ս . տնունս շերի Տէյլիս է, քնզհանուր տնօրէն «Տէյլիս» գործարաններուն, ուր յիսուն հարար դործուորներ կ'աշխատին : Մենք ազգականներ ենք :

ԹՈՄ .— Իսկապէ՞ս :

ՏէՅՎԻՍ .— **Ձեր մօր կողմէն** : Իմ հայրս ձեր պատուական մայրիկին եղբոր զուակներէն մէկուն ներջր թոտն թոտը կ'ըլլայ . . . կամ այսպէս բան մը : Դար մը անցեր է, գիտէք եւ սերնդարանական ճշգրիտ հաշիւ պահելը բաւականին դժուար է :

ԹՈՄ .— Կարեւոր ալ չէ :

ՏէՅՎԻՍ .— Կարեւորը մեր արեան կապն է, ազգականութիւնը : Երբ լսեցի ձեր հրաշալի յարութիւնը, ըսի՛ երթամ Թոմը մեր տունը բերեմ :

ԼԻԼԻ .— Ո՛չ, պարոն Տէյլիս, ես ձեզմէ առաջ կու գամ՝ թէ՛ ազգականութեամբ եւ թէ՛ զգացումով : Թոմը ես պիտի տանիմ :

ՏէՅՎԻՍ .— Լաւ, տիկին, կը համաձայնինք : Ես պարոն Սմիթին ուրիշ առաջարկ մը ունիմ ընելիք : **Պարոն Սմիթ**, դուք պէտք է իսկոյն զնէք իմ դործատուներու արժեթուղթերէն զոնէ երեք միլիոն տոլարի բաժին մը :

ԹՈՄ (աչքերը մեծ-մեծ բանալով) .— Երեք միլիոն տոլարի արժեթուղթ, բայց ինչո՞ւ :

ՏէՅՎԻՍ .— Որովհետեւ շատ նպաստաւոր է, շա՛տ շահարեք . ես կ'ուզեմ, որ իմ ազգականս շահի :

ԹՈՄ .— Ես զեռ շահու մասին չեմ մտածած . ես նոր ելայ ստանարանէն :

ՏէՅՎԻՍ .— Սիրելի քնորդիս, պէտք չէ ներկայացող առիթները փախցնել :

ԼԻԼԻ .— Թոմ պէտք չունի դրամ շահելու . ան արդէն միլիոնատէր է : Այդպէս չէ՞, Թո՛մ :

ԹՈՄ .— Այդպէս ըսին :

ԼԻԼԻ (քեւը մտնելով) .— Ուրեմն երթանք :

Ներս կը մտնէ Մարիսըն, պատկառելի ծերունի մը եւ առանց այլեւայլի համբուրելով Թոմի հակասոր .

ՄՈՐԻՍԸՆ .— Թանկազին զուակը, Թո՛մ, դուն մեր տոհմին յարուցեալ ուզին, մէկ հատիկ կենդանի յիշատակը, թոյլ տուր անգամ մըն ալ համբուրեմ քեզ : (Նորէն կը համբուրէ հակասէն) : Այսպէս, հէ՛, որո՞ւն մտքէն կ'անցնէր, որ այս Ակումբի հիմնադիր ձորճ Սմիթի որդին դար մը ամբողջ սոքի տակ տարով պիտի հասնէր մեզի : Դէ՛, պատրաստուէ՛, քեզ մեր տունը պիտի տանիմ . կինս եւ զուակներս անհամբեր քեզի կը սպասեն :

ԼԻԼԻ .— Ներողութիւն, պարոն Մարիսըն, ձեզմէ առաջ Թոմ ինծի խօսք տուած է : Իմ տանս հանդիսար ոչ մէկ տեղ կը գտնէ :

ՄՈՐԻՍԸՆ.— Այդ մասին կը մտածենք դեռ: Է՛հ, Թո՛մ, պատմէ նա-
յինք... Ը՛... քիչ մնաց ըսէի անդիւի աշխարհէն:

ՏԷՅՎԻՄ.— Սխալած չէք ըլլար, 20րդ դարը անդիւի աշխարհի պէս
բան մըն է:

ՄՈՐԻՍԸՆ.— Ես տարիքով հօրդ տեղն եմ, աղա՛ս, բայց դիտե՛ս ես
ինչդ կ'ըլլամ... ես քու պատայիդ աներձային զաւակներէն
մէկունն ուղիղ գիծով հասած թոռան ծոռն եմ: Այո՛, ճիշդ այդ-
պէս, թոռան ծոռը...:

ԹՈՄ (շուրջը նայելով շփոքած՝ մեքենաբար կը կրկնէ).— Թոռան
ծոռը... թոռան ծոռը... զգացուած եմ իրապէս...: Այսքա՛ն
ազդականներ եւ բոլորն ալ բարի, բոլորն ալ սիրալիր...:

ՄՈՐԻՍԸՆ.— Ի՛նչ կ'ըսես, աղա՛ս, մենք քու կարօտովդ կը տառա-
պէինք: Գուն մեծ մարդու զաւակ ես: Մենք՝ Սմիթ գերդաս-
տանի շառաւիղներս, զոյց դիտենք հօրդ եւ իր յաջորդներուն
պատմութիւնը: (Գոց արտասանելու հանդիսաւորաւքեամբ):
«Սմիթ ունէր երեք որդիներ՝ Թոմ, Ճիմ եւ Ճօ: Ամուսնացած
էր միայն մէկ անգամ: Պետական բարձր շքանշաններով պար-
դեւատրուած բազմաթիւ անդամներ: Հիմնադիր Ապագայա-
պաշտներու Ակումբին եւ Եւրոպեան յատաջողէմ գաղափար-
ներու...»:

Ներս կը խումէ տիկին Պարպարա, Եօբանասունը
անց պատու մը, որ ծիծաղելի արդուգարդի եւ շպար-
ներու մէջ է՝ երիտասարդ երեսելու համար: Հագիւ
ներս ինկած՝ քեւերը բաց կը բացագանչէ:

ՊԱՐՊԱՐԱ.— Ո՛ւր է Թոմը, ո՞ւր է այդ ոսկի տղան: (Թումը կ'առ-
նէ քեւերուն մէջ եւ յուզումէն հեկեկալով): Ա՛խ, Թոմ, հի-
մա որ քեզ տեսայ, հիմա որ քեզ գրկեցի, ա՛լ հանգիստ կըր-
նամ մեռնիլ...:

ԹՈՄ (աշխատելով տիկին Պարպարայի քեւերէն ազատիլ).— Կե-
ցէ՛ք, խնդրեմ, կամաց-կամաց, կը խեղդուիմ...:

ՊԱՐՊԱՐԱ (քեւերը փակելով Թոմի պարանոցէն).— Հա, հոգիս, ի-
րաւունք ունիս, քեզ ինչո՞ւ խեղդեմ. դուն իրաւունք ունիս
մեր գլխուն, մեր աչքին վրայ ապրելու:

ԹՈՄ (շունչ փաշելով).— Ծնորհակալ եմ, մայրի՛կ:

ՊԱՐՊԱՐԱ.— Մայրի՞կ ըսիր... բայց ես քու թոռնիկիդ տեղն եմ:
(Ուշադիր նայելով Թոմին երեսը): Ինչպէս ալ կը նմանի հոն-
դուցեալ ամուսինիս մեծ հօրը: Ճիշդ քիթէն ինկած: Գիտե՛ս
ես քու ինչդ կ'ըլլամ...:

ԹՈՄ (տարափահար).— Ազդականս անշուշտ:

ՊԱՐՊԱՐԱ.— Ազդականն ալ խօ՞սք է...: Ես Սմիթներու հարս եմ,
Պարպարա Սմիթ...: Ա՛խ, ուրիշ՞ պիտի գիտնաս...: Երբ ես
հարս եկայ ձեր տունը, դուն սառնազարանիդ մէջ մշիկ-մշիկ
կը քնանայիր: Ես քու ազջիկդ կը սեպուիմ:

ԹՈՄ.— Բայց, տիկին Պարպարա, ես չեմ ամուսնացած:

ՊԱՐՊԱՐԱ. — Գրեմեմ, ձեր դերդաստանին անդամները մէկ-մէկ կը ձանչնամ: Բորբն ալ աննման մարդիկ են: Հանդուցեալ ամուսինս հօրդ գիծով Սմիթ է, ամուսինիս հայրը՝ մեծ հօրեղբորդ գիծով Սմիթ է, ամուսինիս հօրը հայրը Սմիթ է, անոր մեծ հօր մեծ հայրը Սմիթ է...: Հասկցա՞ր հիմա ես ո՞վ եմ:

ԹՈՄ (յուսահատ). — Հասկցա՛յ:

ՊԱՐՊԱՐԱ. — Տէր Աստուած, այսքան ալ նմանութիւն. տեսածիս պէս կարծեցի, թէ ամուսինս դերեղմանէն երած՝ դիմացս կեցած է: Քեզի բան մը չէի՞ն ըսած իմ մտտիս:

ԹՈՄ. — Ո՞վ պիտի ըսէր:

ՊԱՐՊԱՐԱ. — Հո՛ն, սառնարանիդ մէջ պատկած տակնդ լուր չէի՞ն տար դերդաստանի նոր հարսերու եւ նոր ծնունդներու մասին:

ԹՈՄ. — Ո՛չ, լուր տուող չկար:

ՊԱՐՊԱՐԱ. — Ի՛նչ անտարբեր մարդիկ են եղեր վրայ հսկողները: (Դարձեալ թումը գրկելու փորձ մը ընելով): Վա՛խ, իմ անուշիկ թոմս, ո՞վ գիտէ ընտո՞ր մտեցար սասերուն մէջ...: Բեր սա ձեռքերդ օտերուս մէջ աաքցեմ քիչ մը...: (Հառաչելով): Մե՛ղք, որ իմ ալ կրակս առաջուանը չէ մնացեր...: Դէ՛, ելիք, քեզ մեր տունը պիտի տանիմ. մարդու չեմ տար քեզ...:

ԹՈՄ. — Շնորհակալ եմ: Տէ՛ր Աստուած, ի՛նչ ազնիւ են այս դարու ազգականները, ի՛նչ հիւրասէր...:

Ներս կը մտնէ Պոպ, փայլուն երիտասարդ մը, փիլէյ-պոյի երեսոյթով եւ ուզակի կը դիմէ տիկին Պարպարային.

ՊՈՊ. — Ո՞ւր մնացիր, Սթելլան եւ ես վարր ձեզի կը սպասենք:

ՊԱՐՊԱՐԱ. — Պոպ, եկուր ծանօթացիր Սմիթ դերդաստանի նահապետ՝ Թոմ Սմիթին. մեր հիւրն է՝ Չորդ գարէն:

ՊՈՊ. — Ուրախ եմ, Թոմ:

ԹՈՄ (վախով). — Պարո՞նն ալ ազգական է:

ՊԱՐՊԱՐԱ. — Ո՛չ, ազգականութեան թեկնածու: Ազջկանս նշանածը կը սեպուի: Երբ ամուսնանայ՝ քեզի ազգական կը դառնայ: Երթանք, Թոմ, ազջիկս վարր, կառքին մէջ քեզի կը սպասէ:

Հետագայ ամրողջ իօսակցութեան ընթացքին ազգականներէն ամէն մէկը թումը կը քաշէ իր կողմը՝ թեւէն, հագուստներէն, ուսերէն: Թոմ շուարած ու դրժբախտ՝ կը տարուերի այս քաշչուփին մէջ:

ԼԻԼԻ (քեւէն քաշելով). — Թոմը իմն է, մարդու չեմ տար:

ՏէՅՎԻՍ (ուսերէն գրկելով). — Կը վայլէ, որ Թոմ ի՛մ տունս գայ:

ՄՈՐԻՍԸՆ (քելը մտնելով). — Ինծի կ'իյնայ Թոմը հիւրասիրելը. ես եմ ամենամօտիկ ազգականը:

ՊԱՐՊԱՐԱ. — Ազգական ըլլալնիդ նո՞ր մտքերնիդ ինկաւ. մինչեւ հիմա ո՞ւր էիք:

ԼԻԼԻ. — Դո՞ւն ուր էիր:

- ՊԱՐՊԱՐԱ.**— Ես զիշեր-ցերեկ կ'աղօթէի իրեն համար, երբ գեռ սա-
ռերու մէջ էր խեղճ տղան:
- ԼԻԼԻ** (դարձեալ Թովի քեւէն քաշելով).— Սուտ կը խօսիս. միլիոն-
ներուն ձայնը լսելէ ետք ազդական դարձար:
- ՊԱՐՊԱՐԱ.**— Բերանդ գոցէ, ջլթի'կ. փնտտածդ դիտեմ ինչ է: Չես
կրնար թո՛մր ուռկանդ ձգել:
- ԼԻԼԻ.**— Ես ջլթի'կ, հա՞...: Գուն քեզի նայէ, ցնդա՛ծ. լաւ կ'ընես,
որ ազջլանդ փէշերը հոււաքես ցեխերուն մէջէն:
- ՊԱՐՊԱՐԱ** (Լիլիի վրան յարձակելով).— Ես քու մագերց կը փեռ-
տեմ. խօսքդ չափէ. դիմացինդ Սմիթներու հարս է:
- ԼԻԼԻ.**— Սմիթներու հա՛րս...: Սըւոր նայեցէք, չ'ամչնար: Ամու-
սինիդ գլուխը ուտողը դուն չէի՞ր...: (Իրարու կը փաք-թուին
եւ կռուրգտուէի տեսարան մը կը պարզեն):
- ՄՈՐԻՍԸՆ** (աշխատելով բաժնել զաւուսի իրարմէ).— Ամօ՛թ է, ազ-
դականներու միջեւ չի վայլեր...
- ԼԻԼԻ** (կրկին Թովի քեւէն քաշելով).— Քայէ, թո՛մ, քայէ երթանք:
- ՊԱՐՊԱՐԱ** (միւս քեւէն քաշելով).— Ո՛չ, անկարելի է, չեմ ձդեր,
թո՛մ իմ տղաս է. ի՛նչ կ'ըսեմ՝ ես իր ազջիկն եմ...:
- ԹՈՒՄ.**— Խնդրեմ, հանդիստ ձդեցէք դիս. սիրոյ այս հեղեղին չեմ
դիմանար... կը խեղզուի՛մ...:

7.

Ներս կը մտնէ Խնամակալը եւ վայրկեան մը ան-
շարժ կը մնայ մուտքին, պարզուող տեսարանին առ-
ջեւ: Ապա կը մոռնայ:

ԽՆԱՄԱԿԱԿԱԼԸ.— Չհամարձակի՛ք. անդի՛ն բոյորդ ալ:

Ազգականները կը քարանան իրենց եղած տեղը:
Խնամակալը կը մտնէ Թովին քեւը եւ կ'առաջանայ դէ-
պի ելքի դուռը:

ԽՆԱՄԱԿԱԿԱԼԸ.— Երթանք, թո՛մ:

ԿԸ ՀՆՁԷ ՆՈՅՆ ԱՂՄԿԱԼԻ ՆՈՒԱԳԸ:
(ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ'ԻՋՆԷ ԴԱՆԳԱՂՕՐԷՆ)

Մ. ԻՇԽԱՆ

(Շար. 1)

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

Օ Ր Օ Ր՝ Ց Ո Ւ Ր Տ Հ Ո Ր Ի Զ Ո Ն Ն Ե Ր Ո Ւ Ն

Հորիզոններ կան ստոած նոր աչքիդ մէջ անբավանց,
կան երսզներ, եին, անանց եւ սազմնային օրերուդ՝
խաւարներուն տեսիլները մոխրացած...

Հորիզոններ միանուագ եւ միգամած ժամեր, օրեր
բու ապակի լուռ աչքիդ
անարշարոյս,

անյղացեալ,

աներեսոյբ աւազներուն կը փշրուին՝

իբրեւ այրած, խոշտանգուած տագնապներու

եւ անցեալի մոխիրին մէջ մոռցուած վարդ սերերու
հրամորմոճ, հրաբողոճ շուշաններ :

Արբնցի՛ր, տղաս,

իմ հանգոյց, իմ բախտ, իմ անբախտ տղաս...

Երջանկութեան ուղիներէն

հաշմանդամներ, խեղաթիւրուած մութ քերքուածներ
կը շարժի՞ն դէպի բիբեր ապակի.

մահուան անգղեր կը նախքեն վիհերուն մէջ անցեալի,
եւ պատկերներ, սաղառնական տեսարաններ կը ծնին
ջիղերու մէջ,

կոյր յուշերու ուղեանին մէջ մահաստուեր

եւ մեր կեանքի ամեն սրտին մէջ գիշեր՝

իբրեւ ամուլ հորիզոնի հորիզոններ բիրտ, անշէջ,

ուր անցեալի լուսինը սեւ

— անպարագիծ հոգեհանգիստ —

դամդաղ, անկիր, շարժումներովն իր լկտի՝

վիուկանիչ սպառնալիք կը ժպտի :

Ագոստներ կ'անցնին ապակի աչքիդ քաց երկինքներէն
եւ ուրուականներ ցեղնագոյն վաղուան լոյծ արտերուն մէջ
հաշմանդամ կեանքի սերմեր կը ցանեն :

Արքնցի՛ր, տղա՛ս,
իմ հանգոյց. իմ բախտ, հրածին տղաս...

Լուս է երկինքը կարմիր,
լուս են վարդերը կարմիր,
եւ դուն՝ կարմիր լուսիւն իմ անգապելի՛
ա՛լ քնացիր:

Արքնցի՛ր, տղա՛ս,
իմ հանգոյց, իմ բախտ, իմ արիւն, իմ գաղբ,
իմ անհարկոյն, ծանօթ-անծանօթ, անծանօթ-ծանօթ սպիտակ տղաս:

Ես՝ անունդ եմ քու անգիր.
եւ սառն բիրիդ շողերուն գնգնգոցը սեպագիր:

Ես՝ անունդ եմ քու անգիր.
Եւ սառն բիրիդ շողերուն զնգնգոցը սեպագիր:

Արքնցի՛ր, տղա՛ս՝
ներմակ, գերներմակ յիշողութեան կոյս հորիզոններով,
արքնցուր կեանքի ցնծերգներ ոսկի եւ մարգեր քառիշ,
ուր չկան վիշտի հեղեղներ գագան,
ուր չկան սիրոյ հաշմանդամ յուշեր
եւ ոչ ալ մահուան քաճառք նիշեր:

Սուրբ մոխիրներէ ծիւեր կը սթալթին
եւ կակաչներու բոյրերը քաճուն
— շարահաններու շշուկներ անժուն —
խաւարը քանդող շանրեր են արթուն:

Հորիզոնիդ անէութիւնն եմ անծիր:

Հորիզոններ կան ծագած ճոր աչքիդ մէջ անթափանց,
կան երագներ, նոր, վարուր եւ սաղմնային օրերուդ
արփիներուն տեսիլները լուսացած...

Աչքիդ անարցունք՝
Եւ գուլպ, ալրոդ նշոյլ է՛ւ ցաւի, է՛ւ երջանկութեան:

Ն. Վ Ի Բ Ա Պ Ե Ա Ն

Ե Ս Թ Ո Ւ Բ Բ Զ Ե Մ ...

Լաւ աղջիկ էր Մերին, բայց սիրտս չկարողեցաւ իրեն:

**

Ինքը, երեւի համակրած էր ինծի ու քովէս չէր հեռանար: Այն ատեն ես ալ անհող երիտասարդ մըն էի: Իր ներկայութենէն դո՛հ՝ ուրախ-ուրախ կը շողակրատէի: Կը պտըտէինք ալ միտսին: Մը-սանք մտաբանէր ալ:

Մայրս միշտ կը հարցնէր, թէ ե՞րբ պիտի աճնէի որոշումս:

— Եթէ աղջիկը համակրած է՝ դեռ ի՞նչ կ'ուզես, Ժիրօ՛, — կ'ըսէր յաճախ:

Բայց ես այդտեղացի չէի ըլլար, միաժամանակ կը դժուարանայի մերժել զինք: Կը կատարէի՝ ի՛նչ որ առաջարկէր:

Երբեմն նոյնիսկ մեր տունը կու գար, մօրս կ'օգնէր կամ միասին գրուցելով ժամանակ կ'անցընէին: Իրիկունք, միասին ընթրելէ ետք, դուրս կ'ելլէինք ու դիշերը ուշ ատեն տուն կը հասցնէի զինք:

Հակառակ անոր, որ սիրտս օրբսօրէ կը պաղէր իրմէ, ինք, ընդհակառակն, սիրահարուածի պէս շուրջս կը դառնար: Եթէ օր մը չհանդիպէր՝ տնտեսական հեռուստան կը բանար:

Տունէն ալ դուրս կ'ուտէին:

— Դէ, այլեւս երկար ըրիր, — սաստեց օր մը հայրս:

Ամէն անգամ, որ այս հարցը սեղան բերուէր, հոգիս ճնշումէն կարծես պիտի ոռնայի:

Մերին որոշապէս ամուսնանալ կը փափաքէր, միտքը կը հասկցնէր հայրս ձեւերով: Նոյնիսկ ամուսնութեան օրը եւ ժամը որոշելու չտի առաջ կ'երթար:

Կիրակի օր մը օգտակարան դասընթացիս պատշգամբ կանգնած՝ սկսանք դասուց-ե-կող ճամբորդները դիտել: Յանկարծ թրքական օդանաւ մըն ալ եկաւ եւ կանդառաւ ճիշդ մեր դիմացը: Սկսան լջնել ճամբորդները, որոնք, հարկաւ, մեծ մտասմբ թուրքեր պիտի ըլլային:

— Գիտե՞ս, — ըսի մէկէն աղջկան կողմը դառնալով, — ես թուրք եմ:

Ձեռքը, որ ամբողջ մէջ էր, օձէն խայթուածի պէս ետ քաշեց, դարմանքով նայեցաւ ինծի, ըսաւ.

— Հապա մտ՞յրդ, հա՞յրդ, մակա-նո՞ւնդ:

Որպէսզի բերնէս անդիտակցարաբ թաւ սուտս պաշտպանեմ, ճորպիկօրէն աւելցուցի.

— Անոնք զիս որդեգրած են եւ իրենց մականունը տուած ինծի:

Մերին դեղնեցաւ, կտակողց, բաներ մը ըսաւ, զորս ամբողջովին չհասկըցայ:

Սկսաւ լալ, Լոքը՛ ըսաւ.

— Ես թուրքի հետ չեմ ամուսնանար:

Ու ձրեց հեռացաւ:

Պահ մը շանթահարուածի պէս քարացած մնացի տեղս ու երբ սթապիլեցայ՝ աղջիկը չկար: Վաղցի ետեւէն, փնտոեցի ամէն տեղ, չկար, ուրեմն լքեց զիս, մտածեցի:

Երբ տուն վերադարձայ, մայրս աչքերէս զգաց տաղնապս. հարցուց.

— Ի՞նչ պատահեցաւ:

— Ոչինչ, — ըսի :

Խորհեցայ, որ նորէն կու գայ, բայց այդ երթա՞ն էր :

Մայրս կը ջանար անսպասան հասկընալ մեր մէջ ստատահած միջնագէտը :

— Բան մը ստատահած է, բռէ, որ մենք ալ գիտնանք :

Օրերը կը թաւալէին, բայց եկող-դացող չկար : Կամաց-կամաց մայրս ու հայրս ալ հաշտուեցան կատարուածին հետ : Մայրս զիս յանցուտը կը դռնէր ու կը յանդիմանէր, որ սիրուն աղջիկ մը ձեռքէ հանած էի :

Շորաթներ ետք, երբ այլևս այդ հարցը փոհուած էր մեր տան մէջ, մօրս ըսի աղջկան զիս լքելուն պատճառը :

— Մեղա՛յ, մեղա՛յ, — բացազանջեց ու աւելցուց, — տաանկ բան կ'ըսէ՞, տղոս, առիկա ուղղակի մեղք է, Աստուած կը պատժէ քեզ :

Ես խնդացի : Աստուած ինչպէ՞ս պիտի պատժէր զիս :

Չորս-հինգ տարի ետք, ուրիշ տուն մը փոխադրուեցանք, քողաքին արեւելեան ծայրամասը :

Ամէն առտու, հանրակառքով գործի կ'երթայի, քաղաքին կեդրոնը : Դժուարիս կու դար խճողուած հանրակառք բարձրանալը, բայց ուրիշ ելք չկար : Ապրուստի խնդիրը կը ճնշէր մեր վրայ :

Առտու մը, թէեւ դարձեալ մեծ էր խճողումը, բայց ես շատ չզգացի անտանելիութիւնը : ձիւղ քոյս կանգնած էր շատ բարեձեւ ու մաքուր հաղուած աղջիկ մը, զիմադիծն ալ լուրջ էր, մօրթը՝ փայլուն :

Դիտեցի ամբողջ հասակը :

Յայտնադէս կը նեղուէր հրմշտուկէն :

Ոտքի ելայ եւ տեղս իրեն առաջարկեցի :

Հաստիով հաւասար էինք իրարու : Աչքե՛րը...

Աստուած իմ, հագար տարի չմտայրելիք աչքեր :

Նստեցաւ : Իր «չնորհակալ եմ»ը երկար առեն անուշ-անուշ հնչեց ականջիս :

Ձեմ գիտեր ինչպէս մտացայ իմ կայարանս . երբ ինք իջաւ, հլու-հնազանդ ես ալ ետեւէն իջայ :

— Դ՞ո՞ւք ալ հոս կ'իջնէք, — հարցուց :

— Երբեմն, — ըսի, — այստեղէն ալ կընամ Լըթուլ դորձատեղիս :

Նայեցայ շէնքերուն : Քանի՞ կայարան անցած էի արդեօք : Ուղղութիւնը կորսնցուցած մարդու կը նմանէի : Աղջիկը, որուն ո՛չ անունը դիտէի, ո՛չ տունը եւ ոչ ալ ուր երթալը՝ յանկարծ սրտիս ամէնէն մօտիկ էակը թուեցաւ ինձի : Մաղնիսի պէս քաշեց զիս, տարաւ, տարա՛ւ...

Ի վերջոյ գոտայ հաւասարակշռութիւնս, անցայ դիմացի կողմը եւ, հակառակ ուղղութեամբ սուրացող հանրակառքով՝ գացի գործի :

Գիշերը, մութին մէջ, բաց աչքերուս իր կերպարանքը կը դժադրուէր եւ չէի ուզեր, որ անհետանայ...

Առտու, հանրակառքի պատուհանէն ուշի ուշով կայարանները աչքէ անցուցի : Կ'երեւակայէի իր մուտքը, ինձի մօտենալը, տեղս իրեն հրամցնելու արարողութիւնս :

Յովորդ շարաթ, երբ նորէն անձկութեամբ կայարանները աչքէ կ'անցրնէի, յանկարծ ալեկոծեցայ : Հոն էր : Ահա ելաւ, խճողումին մէջ յարմար տեղ մը սկսաւ փնտռել : Ձե՞ոքս շարժեցաւ արդեօք, այո, կարծե՛մ, որոշապէս շարժեցաւ ձեռքս՝ զինք հրաւիրելու ձեւով : Տեսաւ զիս, եկաւ, ելայ ոտքի, նստեցաւ : Հնչեց նոյն տաք եւ անուշ «չնորհակալ եմ»ը :

Հասանք իր կայարանը, իջանք :

— Այս խճողումը բնաւ չեմ սիրեր, — ըսաւ :

— Ես ալ, — ըսի ու աւելցուցի, — միտք ունիմ ինքնաշարժ մը դնել : Երբ գնեմ՝ սիրով կը տանիմ ու կը բերեմ քեզ :

— Օ՛ր, շնորհակալ եմ, — բառ ու խորունկ մը նայեցաւ աչքերուս :

Չորս յարկանի շէնքի մը մուտքէն ներս մտաւ :

Քիչ մը տնտնայի, նայեցայ շէնքին բոլորտիքը, հոտուըտացի ու թեթեւ քայլերով շարունակեցի ճամբաս :

Գիշերը չկրցայ հանդիստ բնել : Ձէի կրնար նոյն տեղը մնալ, չէի կրնար պատկերասփիւռ դիտել : Չայնասփիւռը կը բանայի եւ անմիջապէս ետ կը դոցէի : Անբնդհատ կ'երթեւեկէի սենեակիս մէջ :

— Ինքնաշարժ ատի՞ր, — հարցուց իրիկուն մը, երբ իր պաշտօնատեղիին մօտ տնտնացած տաննս դիմացս ելաւ :

— Ձէ, — ըսի, — բայց շուտով պիտի գնեմ :

Կողք կողքի քայլեցինք մինչեւ կայարան, խօսելով : Այնքան հպարտ կը գլայի ինքզինքս իր մօտ :

Իրիկունը ծնողքիս յայտնեցի ինքնաշարժ մը առնելու ծրարիրս :

— Խեղճ ես : Հապա եթէ արկած մը պատահի, — բսաւ հայրս :

— Ձգոյճ կը քշեմ :

— Իսկ եթէ դիմացինդ անուշադիր խենթ մըն է :

Մայրս ալ համամիտ չգտնուեցաւ ինձի :

Ստիպան եւ գնեցի ինքնաշարժ մը, ճիշդ երեւակայածիս պէս : Սուզնոց չէր, բայց իմ դործս կը տեսնէր, ու Ի՞նչ, ամէնէն կարեւորը, աղջիկը ինձի կը սպասէր առտու եւ իրիկուն :

Սկանք շարքավերջերն ալ միտսին բլլալ եւ օրընտօրէ խորացնել մեր մտերմութիւնը :

Ծնողներս կ'օհհաճէին, որ ուրիշ աղջկայ մը հետն եմ : Յաճախ կը կրկնէին :

— Բեր օր մը, մե՛նք ալ տեսնենք :

Բերի, հաւնեցան : Սիրտս կը խայտար : Այնքան համով էր իր ժպիտը, ու անուշ նայուածքը հողիս ամէնէն խորունկը կ'իջնէր :

**

Կիրակի մը, կարծեմ Կանաչ Կիրակին էր, գինք պարձեալ տարի ծովեզերեայ ուն բլուրը, զոր շատ կը սիրէի : Նստեցանք ժայռի մը վրայ, քոյ քոյի : Հեռուն՝ ծովը քանի մը գոյներով ու գեղեցկօրէն կը տարածուէր մինչեւ հորիզոնը : Հմայած էր մեզ տեսարանը եւ հրամայեալ էր ինք իրարմոյ : Ձեռքերը առնելու մէջ կարծես վտարիկ տատարակներ բլլային :

— Մէքս, — ըսի՝ աչքերուն նայելով :

Լուս՝ դրաւ գլուխը ոտին : Մազերը հաճելիօրէն շոյեցին դէմքս :

Հիւսուեցանք իրարու :

**

Սմէն գիշեր մօտն էի : Մայրն ալ խոր յարդանքով կը պատուէր դիս : Մեր ծրնողներն ալ սիրով էին իրարու հետ : Ոտրերս հողէն կարուած էին ու ինքզինքս եթերին մէջ կը կարծէի :

Նշանտօրի արարողութիւնը Շարաթ տեղի պիտի ունենար ու օրը Երեքշաբթի էր : Իրիկունն դէմ, ըստ մարժութեանս, փութացի իրենց տունը : Մայրը բացաւ դուռը :

— Բարեւ, — ըսի՝ ըսին ժպիտ մը դէմքիս, ու երբ ինքնամտահ քայլերով կը պատգասուէի ներս մտնել, կինը արձանի պէս կանդնեցաւ դիմացս ու չձգեց, որ ներս մտնեմ :

— Ի՞նչ կայ, — հարցուցի ալլայլած, — ո՞ւր է Սայրին :

— Հիտնդ է եւ չ'աղեր քեզ տեսնել :

— Ի՞նչ պատահեցաւ մէկէն, — հարցուցի չճամձ :

— Տղաս, — բսաւ մայրը, — իմացանք, որ գտն թուրք եւ եղեր. մենք թուրքին տալիք աղջիկ չունինք. դնա՛ ուրիշ դուռ գարկ :

Հոու ու գոցեց գոուր :

Կարծես կայծակ մը շանթահարեց
դիս : Ոտքերս բանուեցան : Լեզուս չորցու
քիմքիս մէջ :

Ես թուրք եմ :

Բաւական ետքը նորէն պարզի գու
որ : Նորէն մայրն էր բացողը :

— Տիկին, Լս թուրք չե՛մ, — Նշա
ցի, — ես հա՛յ եմ, հայրսոյ, մայրսոյ,
անունսոյ, մականունսոյ : Ո՞վ հնարեց այլ
սուտը, ո՞վ :

— Սո՞ւտ : Մեր տաներէցր բոու :
Քահանան սուտ կը խօսի՞ :

— Բայց ձեր քահանան ուրի՞շ կը
ձանձնայ զիս :

— Չեմ դիտեր, — ըսաւ խիստ ու
նորէն երեսին գոցեց դուռը :

Մտածուրը վերագարձայ տուն :

Ուղղակի անկողին մտայ, բայց չկր
ցայ ընանալ : Կարծես հոգիս վրայ մի
լին թոն ծանրութիւն պիտուած էր : Որ
քա՛ն երկար տեւեց գիշերը, կարծես ա
րեւը բնու պիտի չծաղէր, պիտի խեղ
զըւէի :

Գիշերուան տխրութենէս եւ սառու
գործի չերթալու որոշումէս մայրս բան
մը կուտած էր ու բան մը հասկնալու
համար շուրջս կը դառնար :

— Ի՞նչ ունիս, գոնէ՛ բան մը կեր :

Մեղանէն վերցուցի կտոր մը հաց,
որ խոշորցայ, խոշորցա՛ւ բերնիս մէջ :

Որոշեցի երթալ, գտնել ու սպաննել
այդ քահանան :

Գացի իրենց եկեղեցին, յետոյ՝ երկ
ցատունը : Երէցիկինը ըսաւ, որ քահանան
մեռել ունի այսօր : Գացի մեռելին տու
նը, ի վերջոյ հասայ դերեգմանատուն :

Քահանան աղօթք կը կարդար մեռե
լին զլխուն : «Մտակի՛ս», թախ մտքէս եւ
ուրիշ հայհոյանքներ տեղացուցի զըւ
խուն, բայց ինք անտարբեր կը շարու
նակէր աղօթքը : «Մօրո՛ւքդ պիտի այ
րեմ», կ'ըսէի ատամներս կճրտելէն, «մօ
րո՛ւքդ»...

Թաղման արարողութիւնը վերջա
ցաւ : Քայլ առ քայլ կը հետեւէի քահա
նային, քանի մը անգամ աչքերը հանդի
սեցան վրէժխնդրութեամբ լեցուն աչքե
րուս :

— Վերջին անգամ, երբ մեռելին գոու
նէն դուրս կ'ելլէր, կեցուցի զինք :

— Ես այսինչ տղան եմ եւ կ'ուզեմ
հասկնալ, թէ գուր ի՛նչ բտած էք իմ մա
սիս եւ ինչո՞ւ ըսած :

— Տղաս, գուն թուրք Լս կեր :

— Ո՞վ ըսաւ ստիկա ձեզի :

— Մերին : Անցեալ շաբաթ մօրը հետ
մեր տունը եկած տտեն ըսաւ : Գոն խոս
տովանէր ես թրքութիւնդ, Լս ալ, դի
տես, — սեւըսուց քահանան, — կերպով
մը ազդին պահակն եմ ու, առ ի դպուշու
թիւն, գացի իմացուցի Սայրիին եւ մօ
րը :

— Ես թուրք չե՛մ, տէ՛ր հայր :

— Բայց դուն բոնր ես, տղա՛ս :

— Պատահար բերնէս ելած ար
տայայտութիւն մըն էր ստիկա, կատա
կի համար, տէր հայր, ես հայ եմ :

— Որդի՛, ատանկ կատա՞կ կ'ըլլայ,
գուն կը դպո՞ս, թէ ինչ ծանր մեղք դոր
ծեր ես : Ատոր Աստուա՛ծ իսկ չի ներեր :

— Լաւ, ի՞նչ պիտի ընենք հիմա, —
հարցուցի խեղճ-խեղճ :

— Գնա՛ հայութիւնդ հաստատող վը
կայազիր մը բեր ձեր ծխատէր քահա
նայէն : Այդ վկայագիրը հետո՛՝ կ'երթամ
ու կը համոզեմ Սայրին եւ մայրը, նոյն
իսկ ձեռքովս կը պսակեմ ձեզ :

Շունչս առի մեր ծխատէր քահանա
յին տունը : Ան պրպտեց տոմարը, գտաւ
անունս, հաստատեց հայ ըլլալս, մկրթ
տութիւնս, ու տուաւ վկայագիրը ձեռքս :
Երկու վկայ ալ առի հետս ու դացի Սալ
րիենց տաներէցին : Քահանան համոզ
ւեցաւ, բայց ըսաւ .

— Որդի՛, անդամ մըն այ անանկ
մեղքի տակ մի մտներ :

Յաջորդ օր, քահանան մեղի եկաւ :

— Սայրիենք նորէն պիտի ընդունին
քեզ, որդի՛, — ըսաւ՝ ու օրհնեց զիս :

Երկու օրուան ծանր բեռը ինկաւ ու
սերէս : Լայն շունչ մը առի : Բայց ոչս
անգամ ուրախութենէս չկրցայ ընա
նալ...

Մայրս միշտ շուրջս կը գտնար եւ,

քահանային մեկնելէն ետք աւելի աշխուժացած՝ շարունակ կը կրկնէր .

— Այս երկու օրերու տառապանքը Աստուծոյ պատիժն էր քեզի, տղա՛ս, անհկ մեղք կը դորձուի՞ . . .

Այդ գէպքէն քանի մը ամիս ետք ամուսնացայ, ու երջանկութեանս մէջ երբ կը խորհիմ, թէ թրքութիւնը նորէն ինչ նոր ազէտ կրնար դառնալ գլխուս, սարսուռ մը կ'անցնի մարմինէս . . .

Հ Ա Ր Ա Ի Ն Ո Տ Ք Ը

— Աղջիկս, քեզի վնաս հասցնելու համար չէ, որ կ'ըսենք այս բաները, քու օգուտիդ համար է, բնտանիքի՛դ օդուտին համար է, — ըսաւ տիկին Աղային ու աւելցուց, — մենք ալ անշուշտ բան մը դիտենք, կեանքին տաքը եւ պողը տեսած փորձառու կիներ ենք, մա՛նաւանդ անանկ, բան մըն է, որ փորձուած է: Պէտք է այրենք սաքղ, որ փորձանքը հեռանայ ձեր տունէն: Գիտե՞ս Խաթուն քոյրիկին հարսը, հետու տուներէ հարս դայէն ճի՛շդ էրեք օր ետք, առաստաղը փլաւ, այն ալ ցուրտ ձմեռին: Բարեբախտաբար տակը մտրդ չկտր, բայց խեղճերը քանի օր անպատասլար մնացին: Սակայն եկուր տես, որ պատահելիք մը կայ եղեր: Խաթուն քոյրիկին ամուսինը՝ Յովսէփ հայրիկը, ճամբէ մը անցնելու առեն պատաղամէ մը թաղար մը կ'ըլնայ ճի՛շդ գլխուն ու, հայտէ՛ գնաց մտրդը: Անկէ քանի մը շաբաթ ետք մէկը հեծիկով Խաթուն քոյրիկին պզտիկ աղջկան սարք կոտրեց: Խաթուն քոյրիկը շուտ արթնցաւ, ասոր մէջ սեւ շուն մը կայ ըսաւ ու անմիջապէս հարսին ոտքերը այրեց, ու ահա ճի՛շդ տասներեք տարի կ'ընէ, մեղա՛յ, Տէ՛ր, թող մէջքս կոտրի եթէ սուս կը խօսիմ, բան մը չպատահեցաւ:

— Եւ միայն Խաթուն քոյրի՞կը, — շարունակեց տիկին Աղայի, — հասյա տիկին Նազենի՞կը: Տիկին Նազենիկը դուն չես ճանչնար. սակէ եօթը տարի տաջ մեռաւ: Վերի թաղը կը նստէին: Անոր ալ այդպէս բաներ պատահեցաւ: Հարսը դալուն պէս՝ տաղբը դետին մէջ

լողացած առեն խեղդուեցաւ. յետոյ՝ հարսը երեք անգամ վիժում ունեցաւ: Ի՞նչ ըրաւ տիկին Նազենիկ: Հարսին ոտքը այրեց ու չորրորդ անգամին կրցաւ տուղջ դաւակ մը ծնիլ: . . . Դեռ ի՛նչ-ի՛նչ պատմութիւններ կան: Մենք մաղերնիս պարտապ տեղ չենք ճերմկցուցած, աղջիկ՝ կրս: Հիմա կը տեսնես, թէ քու բախտիդ անիւր ինչպէս գէպի լաւը կը դառնայ:



Մտքսա քոյրիկը (իրականութեան մէջ տոտնք բոլորը պարններ են) հարս բերած էր իր մէկ հաաիկ տղուն, որ չէնքով-չնորհքով երիտասարդ մըն էր, իր տարեկիցներէն քիչ մըն ալ աւելի ուսեալ: Ատիկա լրջութիւն մը կու տար դէմքին: Դպրոցէն ետք, քանի մը արհեստ փոխած էր ան: Առաջին անգամ կոշկահարի մը մօտ աշկերտութիւն բրած էր, յետոյ՝ ժամադործի մը մօտ, ետք՝ դերձակութեան գնաց: Այդ արհեստն ալ չսիրեց: Գիշեր-ցերեկ եւ, մա՛նաւանդ՝ ամապան օրերու նախօրեակին աշխատիլը իր դործը չէր: Հիւսուածեղէնի դործարան մը յանձնարարուեցաւ. իրենց, գիմեց, ընդունուեցաւ, սիրեց այդ դործը, հինգ տարի աշխատեցաւ ու կոկիկ դումար մը սպահսովեց: Սիրտը ուղեց անձնական խանութ մը բանալ. սկսաւ ելեկտրական դործիքներ, թելեր, կոճակներ դնել: Բացաւ խանութը: Ակնկալուածէն աւելի լաւ էր շահը: Ուրախ էր: Կէսօրին՝ մօրը բե-

րած ճաշը ուտելէ ետք, թերթ կը կարգար ու յաճախորդի կը սպասէր :

— Երէկ դիշեր քեզի բաժնս մի մտնար, — ըսաւ օր մը մայրը, — ձուհար քոյրիկին աղջիկը ամէնէն յարմարն է :

Տղան լաւ կը յիշէր աղջիկը : Գէմքով ալ, մարմնով ալ դեղեցիկ էր : Յարմար էին :

Քանի մը օր ետք, Աննա քոյրիկին միջոցով լաւը դրկեցին աղջկան ծնողքին՝ աղջիկտեսի համար : Աղջկան մայրը անմիջապէս սկսաւ տեղեկութիւններ հաւաքել տղուն մասին, դնոց, եկաւ, պրքպրեց եւ օր մըն ալ նոյն Աննա քոյրիկին միջոցով լաւը դրկեց, որ իրենք «այո» են :

Այլեւս կամուրջ հաստատելու աշխատանքին լծուեցան ու ամէն ինչ, ճիշդ շոգեկառքի պէս՝ դիմին վրայ դրուեցաւ : Հարսանեկան պատրաստութիւնները արագ վերջացան ու հարսնիքը եղաւ փառաւոր :

Տղան սկսաւ ա'լ որոշ լրջութեամբ մը դործի երթալ. այլեւս տղայ չէր, այր էր. սկսաւ կշիռ դնել խօսքերուն մէջ եւ ուրիշներուն խրատներ տալ : Նայելով, որ այդ տարի լաւ եկամուտ ալ ունի՝ թաղական ըրին : Ու տաիկա տեւի լըրջացուց զինք ու քիչ մըն ալ վերերէն սկսաւ դիտել շուրջիները :

Բայց, Աստուած հետո՛ւ ընէ, այդ չարարատիկ Շարաթը : Տղան դեռ իսնուսին էր, երբ դրացիները հեւասպառ եկան ու ըսին.

— Վտղէ՛, հտաի՛ր, հա՛յրդ...

Տղան խեղճարի պէս վաղեց ըծիչիկին մօտ, բայց մինչեւ հասնի, հայրը արդէն շնչահեղձ եղած էր բազնիքին մէջ :

Հօրը սուղը դեռ չանցած՝ փողոցին մէջ ինք սահեցաւ եւ սուբացող ինքնաչարժ մը ստքը կտորեց :

— Հէ՛յ-վա՛ր, տունս վրաւ, — ըսաւ մայրը ու սկսաւ աղիտղորմ լալ, երբ տեսաւ տղուն վիճակը :

Տղան երեք ամիս անկողնին դամբաւ մնաց : Երեք ամիս ըտելը գիւրին է, ուղիէ՞ պիտի ճարէին ապրուանին :

Դեռ տղան անկողնին մէջ էր, երբ պատահեցաւ երրորդ արկածը : Նորէն օ-

րը Շարաթ էր, անձրեւտ : Մայրը տանիքը լաթ կը փռէր : Երկրորդ տաշար վերհանած ատեն՝ ստախճաններէն սահած էր ու կողոսկրը ջարդուած :

Հիմա քով քովի երկու սենեակներ կային, ամէն մէկուն մէջ հիւանդ մը :

Տղուն սենեակը ընդհանրապէս այցելու չէր ունենար, խոկ կեսուրին սենեակը ցերեկները լեցուն կ'ըլլար Ուսաննա ու անոր պէս քոյրիկներով, տուտուներով : Անոնք երբեմն նոյնիսկ դռնփակ նիտեր ալ կը դամբարէին :

Հորսը այդ պահերուն չէր կրնար ներս մտնել : Ան ամուսինին քովիկը կրծկրտած՝ մտածմունքներու մէջ թաղուած կ'ըլլար : Չէր դիտեր որո՞ւ հասնէր : Յանցաւոր ալ կը զգար ինքզինք պատահածներուն համար : Հաղիւ հարս եկած՝ ասան մէջ երեք արկածներու հանդիպած էին :

Դռնփակ նիտերու ատեն տուտուներուն ձայները կ'առնէր, բայց բան չէր հասկնար անոնց խօսակցութենէն :

— Քա, աղջի՛կ, աչքդ բաց, առողջանալուդ պէս անոր ստքերը պէտք է այրես, թէ ոչ՝ առաջըք չես կրնար առնել :

— Այո՛, — կ'ըսէր ուրիշ տուտու մը, — ամէնէն չիտակը ա՛յդ է :

— Ես համամիտ եմ. միայն թէ՛ տրդաս կ'ուզէ՞ արդեօք :

— Ո՞ր մէկը արեւի լաւ է, ստքերը այրե՞լը, թէ ետեւ ետեւի արկածներու ենթարկուիլը :

— Դեռ որքա՞ն պիտի պատկի տղադ :

— Չեմ դիտեր : Բժիշկը ըսաւ, որ երկու շաբաթէն ստքի կ'ելլէ :

— Դուն խօսքս մտիկ ըրէ. եթէ անոր ստքերը չայրուին՝ ձեր առնէն արկածը պակաս պիտի չըլլայ : Մեղա՛յ, Տէ՛ր, ի՞նչ ըտել է, քո՛ւ, դեռ երեք ամիս չեղած երեք արկած :

— Ծիշդ է Մեննուշ քոյրիկը : Երեւակայեցէք, հարսին դալէն առաջ ոչ մէկ արկած պատահած էր : Դուն յոյն հայիմ, Մաքստ քոյրիկ, անոր գայէն առաջ բան մը պատահած էր :

— Շիտակը, բան պատահած չէր : Ի՞նչ դիտեամ. հելէ տղաս մէկ մը թող ստքի ելլէ, նայինք ի՞նչ կ'ըլլայ :

Տղան ոտքի ելաւ. հարսը ուրախացաւ, բեռ մը ինկաւ ուտերէն, թեթեւցաւ : Մարդիկ կը հարցնէին տղուն .

— Ինչպէ՞ս են դորձերը :

— Շիտակը, առեւտուրը տկար է : Երեւր ամտուտայ բացակայութիւնս պատճառ եղած է, որ յաճախորդներս ցրտին :

Տղան տնտրամաղկը կու գար աուն : Մայրն ալ առողջացած էր թէեւ, բայց առաջուան պէս չէր : Հարսը կ'աշխատէր փոխել միջնոյրտը, սակայն ի դուր : Կը դղար, որ բան մը փոխուած է տան մէջ :

Օր մը մայրը տղան դռնօտի նիստի կանչեց ու պարզեց հարցը : Տղան ընդգլխացաւ .

— Ի՞նչ է. տասներորդ դարու մէջ՞ կ'ապրինք, թէ քսաներորդ : Անդամ մըն ալ այդ մասին որեւէ ակնարկութիւն չընես, — ըսաւ ու ելաւ դուրս :

Կինը պատշգամն էր. մտտնոյ : Ի՞նչ կ'անցնէր—կը դառնար շուրջը : Նայեցաւ ամուսինին երեսին : Բարկացոտ երես էր : Աւզեց պատճառը հարցնել, բայց համարձակութիւն չունեցաւ. սկսաւ լուռ դիտել գիմացը :

Ամուսինը հարցուց .

— Ինչո՞ւ տխուր ես :

— Դո՛ւն ինչու բարկացած ես :

— Աննա, ես տուտուներուն բարկացած եմ. սաքը այրել կ'ուզեն :

— Թող այրեն, — ըսաւ կինը՝ քիչ մը յուռ մնալէն ետք :

Ան պատրաստ էր ամէն զոհողութեան, միայն թէ՛ կեանքին անխը ետ դէպի լուր դառնար :

— Չրոյս'յ սը ձգես, — ըսաւ ամուսինը խիստ :

**

Քանի մը ամիս ետք, տղան յանդած էր այն որոշման, որ պէտք է գոցէր խանութը : Ամէն վայրկեան կը մտածէր, թէ ի՞նչ կ'ընար ընել, սրտ՞ու կ'ընար դիմել : Ամիսներով բժիշկի ու դեղի դրամ տըւած էին եւ հիմա ալ դորձ չկար :

Իրիկուն մըն ալ Հալէպի չխաշուած պանիրէն հարսը թունաւորուեցաւ ու բժիշկը հազիւ կրցաւ կեանքը փրկել :

— Աս պիտի չգերջանայ, — կ'ըսէին դրացիները :

— Քա, քոյրի՛կ, խո՛սք մտիկ ըրէ, — բարկացաւ Մեննուշ քոյրիկը, — եթէ աղաղ անխորձ է՛ դո՞ւն ալ անխորձ ես. մազերդ պարտալի՞ ճերմկացուցած ես. դուն օր առաջ այրէ հարսիդ սաքը :

Տղան բոլորովին գոցեց խանութը : Գործի համար ամէն տեղ գիմեց. պէտք չունինք, ըսին : Կինն ալ յղի էր : Մտաւանջութիւնը խորացաւ :

— Գործ դա՞տ՞ք, — կը հարցնէին, երբ իրիկունը տուն դար :

— Աչ. վաղը ուրիշ տեղ մը պիտի գիմեմ :

Կինը երկար չկրցաւ մնալ սաքի. ինկաւ անկողին : Կանչեցին բժիշկը, որ եկաւ, քնեց, դեղադիրներ դրեց ու գնաց :

— Ինչո՞ւ բժիշկ կ'անչեցիք, — նեղորոտած գոչեց հարսը, — ինչպէ՞ս պիտի առնենք այս դեղերը :

Կ'ուզէր, որ վայրկեան առաջ դայ ամուսինը, թէեւ անոր ալ տիրութիւնը սիրտը կը ճմլէր : Երբեմն կետուր մայրը կու դար մահճակալին մօտ, ձեռքը կը կը դնէր ճակատին, գլուխը կը շարժէր ու կ'երթար :

**

Այդ միջօրէին, դարձեալ ընդհանուր ժողով կար միւս սենեակին մէջ : Հուսաքւած էին թաղին ամէնէն ականաւոր տուտուները, պաճըները, ապլաները : Նիստը դրուած էր Տեշտուն պաճիկի նախադահութեան տակ, որ ձեռնհասօրէն վաբեց պատմական ժողովր :

Թեր ու դէմ կարծիքներ չկային : Այրել հարսին սաքերը : Այս էր միակ նշանաբանը, սրուն համաձայն էին ամէնքը :

— Եթէ իմ կարճ խեղճիս նայե՞՛ հիմա՛ իսկ պէտք է այրել սաքերը, — ըսաւ Կիւլիգար քոյրիկը :

— Այս', — երկրորդեց Անձա տուտուն, — հիմա ամէնէն յարմարն է :

Միտձայնութեամբ որոշեցին անմիջապէս խօսքէն դործի անցնիլ :

Տղան լուր պիտի չունենար :

Աղապին վառեց օձախը ու շամփուրները գրաւ վրան : Միւսները մտան հարսին սենեակը :

— Նայէ, աղջիկս, — ըսաւ Աննա տուտուն, — ու սկսաւ պատմականը բնել այս բնասնիրքին, սրուն ոչ մէկ բան պատահած էր իր դալէն առաջ, — այս կը նշանակէ, որ քու ոտքիդ տակ բան մը կայ, որ աղէտ պատճառեց այս տան : Կեսուր հայրդ շնչահեղձ եղաւ . կեսուր մօրդ կողոսկրը կտորեցաւ . ամուսինիդ սաքը ջարդուեցաւ ու հիմա ալ խանութը գոցած՝ անդործ կը թափառի : Ու այս բոլորը քու դալէդ ետք, քանի մը ամիսներու ընթացքին :

— Նայէ, աղջիկս, — շարունակեց Աննա տուտուն, — փորդ երեխայ ունիս, կը վախնամ, որ անոր ալ դիտուն դալիք մը կայ . գոնէ՛ անոր պիտի խնայես : Հիմա նայէ, մենք քու ոտքդ պիտի այրենք, ու տակա, վտառ հմ, թէ՛ Աստուծոյ կամքով է, թէ՛ ալ բոլոր սուրբերուն . մի՛ ընդգիմանար : Քու ոտքդ աղիտաքեր ոտք է ու պիտի այրենք :

Պոհանոցէն քարիզի օձախին ձայնը կը հասնէր ու վրան շամփուրները կը կարմրէին : Տուտունները հաւաքուեցան մահճակալին շուրջը, բռնեցին հարսին ձեռքերէն ու ոտքերէն եւ երկու քոյրիկներ անցան գործի ու ձը՛ղ, ձը՛ղ այրեցին ոտքերը : Հարսը ցնցուեցաւ, ճչաց, դայարուեցաւ :

— Մի վախնար, աղջիկս, մի վախնար, արդէն վերջացաւ, — ըսին :

Նստան մահճակալին շուրջը : Ամէնքն ալ վտառ էին, որ բախտին անիւը այլեւս դէպի լաւը պիտի դառնար : Ետքը սուրճ խմեցին : Հարսին ալ տօին ու կարգացին դաւաթը :

Ի՞նչ պոյճաս դաւաթ էր : Ամէնքն ալ դարմացան : Ետևով ուրախ լուր մը պիտի հասնէր՝ թուշուի թեւերով :

— Ահա թաշուներ : Տե՛ս, ճի՛շդ պա-

տուհանին քոյն է : Այսօր կամ վաղը անպատճառ ուրախ լուր մը պիտի առնես :

Իրիկունը ամուսինը դարձեալ ձեռնունայն վերադարձաւ : Հարցուց կնիկն որպիսութիւնը : Ան ծածկած էր ոտքերը ու կը դալարուէր անկողինին մէջ :

— Գեղերը չօգնեցի՞ն :

— Ոչինչ, կ'անցնի, — ըսաւ կինը :

Ետքը նոյն խօսակցութիւնները դործի մասին եւ անյաջողութեան նոյն լուրերը :

Դուռը դարձուեցաւ :

Տղան նախակրթարանի դասընկերն էր, սրուն հետ տաղիներ առաջ աշխատած էին հիւսուածեղէնի նոյն դործարանին մէջ :

— Գիտե՞ս ինչ, — խօսեցաւ ընկերը, — սիրտս շատ նեղուեցաւ անյաջողութիւններու համար : Այսօր դործարանատիրոջ հետ խօսեցայ քու մասիդ : Ինք լիչեց քեզ ու ըսաւ, թող վաղը ինծի հանդիպի :

Ուրախութեան ձիչ մը ելաւ հարսին բերնէն :

— Տեսա՞ր, — դուրսը շարժելով ըսաւ կեսուրը, — տեսա՞ր :

Հարսը ոտքի ելաւ՝ սուրճ պատրաստելու :

— Ինչո՞ւ կը կաղաք, — հարցուց հիւրը :

— Ոչինչ, — ըսաւ հարսը :

— Ինչո՞ւ կը կաղաս, — հարցուց ամուսինը ապշահար :

— Ոչինչ, — կրկնեց հարսը :

Մայրը ուրախ էր ու չարածձի նայլածքով մը կը նայէր տղուն :

Տղան բան չհասկեցաւ, ու մայրը սկսաւ սուրճի դաւաթին մասին պատմել : Ինչպէս ալ դրացած էին, թէ այսօր կամ վաղը բարի լուր մը պիտի առնեն . ու տես եկած էր բարի լուրը :

Հիւրը դնաց :

Ուշ տանն, երբ կը սլաքատատուէր անկողին մտնել, տղան հարսին ոտքին վրայ նշմարեց այրուածքին հետքերը : Բարկացաւ, կանչեց, պոռաց, մա՛նաւանդ՝ որ դործ ալ դառնուած էր : Մայրը լուս ու յողթական երեւոյթով դիմացը

կանդնած՝ յանդիմանական եղանակով ըսաւ .

— Մեր դրացի կիները պարսպ տեղը մագերնին ճերմկցուցած չեն : Գուն տեսար , թէ որքան շուտ արգիւնք տըլաւ անոնց խորհուրդը :

Տղան ա՛լ չպատասխանեց , մտաւ անկողին ու մտքով պատրաստուեցաւ վաղևան գործին :

Սկսաւ կեանքը գէպի լաւը դառնալ : Տղան հուստարմորէն կ'աշխատէր : Վերակացուները շատ սիրեցին զինք ու շուտով ամսականի յաւելումներ արձանագրեց :

Կամաց-կամաց հարսին ծախուած դոհարեղէններուն տեղ նորեր սկսան գալ , տան պակտող իրեր պնուեցան եւ դոհուանակութիւն տիրեց սրտերուն մէջ :

Տուտուները ամէն անգամ որ հարսին դիմաց ելլէին՝ կ'օրօրէին գլուխնին .

— Տեսա՞ր ինչ եղաւ :

Հարսը կը ժպտէր անոնց :

Առողջ , կայտառ առջինեկը հազիւ մէկ տարեկան եղած՝ երկրորդը ծնաւ : Ամէնքը երջանիկ էին :

Բախտի անիւին գէպի լաւը թաւալելուն պատմութիւնը տարածուած էր ամբողջ քաղաքով մէկ :

**

Տարիներ անցան ղէպըն վրայէն ու ամէն ինչ բնական հունի մէջ մտաւ :

Տղան ինքնաշարժ մըն ալ դնեց եւ անով սկսան վայելել շաբաթավերջերը :

Երբ երրորդ երեխան քառասունքը բոլորեց , մտածեցին Կիրակին անցրնել իրենց ամառանոցին աղբիւրին գլուխը : Մայրը , այրն ու կինը եւ երեք գուակները ամբողջ օրը կերան , խմեցին եւ օրը իրիկուն ըրին կատարեալ երջանկութեան մէջ :

Իրիկնադէմին , վերադարձի ճամբուն վրայ , խելքէ-մտքէ շանցած արկած մը պատահեցաւ , որուն զոհ գացին մայրը , տղան , հարսը եւ ծծկեր Երեխան : Թաղեցին չորսը մէկ : Սուզը անպատմելի էր : Ամէնքն ալ արկածին մասին կը խօսէին :

Իրիկունը Աննա եւ Ագրապի տուտուները , հանգուցեալ Մաքառ քոյրիկենց տան առջեւ կայնած՝ փսփառքով կը խօսէին .

— Ես այն տառն պիտի բռնի , — կը յուշէր Ագրապի քոյրիկին ձայնը , — որ շամփուրները պէտք եղածին չափ չեն կարճրցուած , բայց չըսի , եթէ շամփուրները կաս-կարմիր վիճակով մխրճէինք հարսին ոտքերուն , այս արկածը չէր սլատահեր . . .

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

Ա. Ճ Ի Ի Ղ Ե Ա Ն

Ը Ն Դ Ն Ա Տ ՈՒ Մ Ե Ի Զ Գ Ո Յ ՈՒ Թ Ի Ի Ն

Սկիզբն է:

Զես ընդունիր, որ ոչինչ ըլլայ,
 Ո՛չ ներկայութիւնդ արտաբերող վայրի մը երեւոյթը,
 Ոչ ալ միջավայրի մը զգայնութիւնը:
 Ոչ ալ սկսելու արարքին շարունակականութիւնը որոնող,
 Հիման յետոյ ընող, յետոն հիմա սահմանող.
 Ո՛չ մէկ ժամանակացոյցի սլաքի շարժում,
 Շնչառութեան սիթմ, բնութեան ոչ մէկ շրջում, ընթացք:
 Ո՛չ նոյնիսկ կայունութեանդ կէտը կողմնորոշող քաջակամութեան
 պարտեզ մը,
 Ուղղութիւն, որ վեր-վարդ, աջ-ձախդ կարենայ նոյնութենէ անջատել:
 Հաւասարակշռութեանդ ձգտումը, որ զգայարաններէդ
 Ո՛չ մէկ գրգռիչ ազդակ կը ստանայ, ո՛չ մէկ հրահանգ կու տայ
 Զանգուածդ շարժելու
 մարմնիդ կեդրոնածիգ թէ մարմնէդ կեդրոնախոյս.
 Զկայ ուղղութիւնը որեւէ բաղդատութեան դնող ո՛չ մէկ կեդրոն,
 Հկայ ո՛չ մէկ կէտ:

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Վ Է Պ

Երկարագեղ պատմութիւնը.

Ինչ կ'ըլլայ.—

Գունաւոր ալիքներ կը նշմարես
 (Տակաւին աւազը արիւն կը ծծէ)
 Եւ դուն մարմիններու մէջ
 Զես փնտռեր անոնց տէրերը:

Աչքիդ գործարանը

Սեւ-ներմակ շողե՞ր միայն կը փոխանցէ գիշերուան.

Երեսակայութեանդ շտեմարանը ի՞նչ պիտի ընես.

Պիտի լուսնին ամբողջամալուն սպասես

Եւ աղաչես,

Որ ամպերը չըլլան անձնաւեր

Եւ անոր ամբողջ լոյսովը լեցնեն
 Լսգանքի իրենց մեծ աւագանը
 Եւ գունէ քիչ մըն ալ աչքերուդ վրայ մազեն:

Այս մեղեդիին մէջ՝
 Երբեմն մարդկային ձայներ կը սաւառնին
 Եւ դուն կը հաղորդուիս,
 Թէեւ անոնք խօսքեր չեն արարեր...

Թրանզիսթ-էօրի սուր ճիչը
 Ժամանակացոյցն է տեւողութեան,
 Որ կեանքի ներկայութիւն կը յայտնէ,
 Նայնիսկ եթէ չլսես՝

ակամջիդ խորերէն կը շարունակէ սուլել...

Ա Խ Տ Ա Ճ Ա Ն Ա Չ Ո Ւ Մ

Եւ կ'անշարժանայ վրէժի բխումը,
 Եւ կը կազմուին ապակեայ փոշիի քարացումներու տարբերակներ
 Հրաբխային բերնէն բարձրացող ժայռերու,
 Որոնք երկինքէն կ'իջնեն
 Եւ կ'անին հորիզոնական՝
 Կանաչցող տերեւներու հրնուանքով,
 Որպէսզի նետուին ծովերուն վրայ
 Եւ մոռնան արեւին բնագոյր
 Եւ բանտեն վախկոտ բիւրեղացումներ...

Վ Ե Ր Ջ Ո Ւ Շ Ա Ց Ա Ծ Ա Ր Կ Ա Ծ Ո Վ

Ոչ մէկ տեղէ ոչ մէկ ձայն:
 Եռուն քաղաքը յանկարծ կը համբանայ,
 Համր դէմքեր զիրար կը հարցադրեն,
 Առանց որեւէ պատասխան ակնկալելու
 Եւ փողոցներու շարժումը կը լուծուի.
 Եւ մարդոց աչքերը ժայռի ծանրութեամբ կը շարժին,
 Գլուխները այլեւս իրենց առանցքին շուրջ չեն դառնար,
 Պէտք չ'մնաց այլեւս առանցքին.
 Եւ մարմինները կը կորսնցնեն իրենց կմախքը
 Ու կաւի նման կամսոց-կամսոց կ'իյնան գետին:

Հիմա ամէն ոք կ'ունկնդրէ միայն
Ականջներուն հագիւ հասնող ձայներ :
Երկու հագի կը խօսակցին :

— Անկարելի հրաշք է»,
Կը մտածէ բնակչութիւնը,

Բայց կը մնան քարացած փողոցներուն վրայ,
Որոնց տակ ամբողջ փաղափի հեռաձայնային գիծերու մէջէն
Կ'անցնին նախադասութիւններ : —
«Արեւը երէկ մըրցած էր, գրեթէ մեռած,
Եւ բոցերուն հանգուստ միայն աշտօր զգացինք» :

Կ Ե Ն Ց Ա Ղ

Գիշերային ժամեր կան,
Երբ պիտի չուզէիր քնանալ
Եւ գարմանայիր, քէ ինչու...

Գիշերային ժամեր կան,
Երբ ամէն ինչ կը լռէ,
Նոյնիսկ եովը կը փսփսայ միմիային :

Գիշերային ժամեր կան,
Որ երբ գարթնուս՝ դուն անպայման կը լսես
Թաղին մէջ կամ քերեսու նոյնիսկ տանդ մէջ
Ժամացոյցին քիփ-քափ, քիփ-քափ օրօրուսը :

Եւ երբ գարթնուս այդ պահուն,
Պիտի մտածես, քէ պայթումը ե՞րբ պիտի պատահի,
Եւ գիշերային ժամերը պիտի երկարէին կեանքիդ երկայնքին,
Եւ պատի ժամացոյցը պիտի չպայքէր,
Եւ ճեղքի ժամացոյցը պիտի չպայքէր,
Որովհետեւ երբ զգաս ժամադրուած ոռմբին գոյութիւնը
Եւ ապրիս վայրկեանները իւրաքանչիւր երկվայրկեանի մասնիկներով՝
Պիտի գիտնաս, քէ ժամանակը վտանգաւոր բան է,
Թէ անվտանգ պայթումի ժամանակ չկայ,
Ու եզրակացնես, քէ օր մը երկվայրկեանի մը մէջ
Ժամանակը պիտի կանգ առնէր եւ պայքէր-մնար :
Եւ անհամբերութիւնդ եթէ անհամբեր դառնայ,
Պիտի ուզես ոռմբ մը ժամադրել դատակիդ վրայ
Ժամացոյցին սեղ, որ այլեւս ժամ ցոյց չտայ,
Եւ եթէ ժամադրութիւնը պատահէր, պայքէր .
Գիշերային ժամերդ լուս պիտի բլլային՝
բոլորովի՛ն :

Ա. Ա Բ Ե Լ Ե Ա Ն

Զ Ի Ն Ա Դ Ո Ի Լ 27...

Պատանեկան ու երիտասարդական քերթերու կամ էջերու մէջ գրական պգտիկ փորձեր ու կարճ յօդուածներ ստորագրած երիտասարդ մըն է Արա Արելիան, այժմ Ամերիկեան համալսարանի բժշկական միւղին ուսանող, որ սուսջին սնգամ կը ներկայանայ «Բողոք»ի ընթերցողներուն, եւ երկարաշունչ կտորով մը՝ «Ձիտագույ 27», գիրքի միջին ծաւաղով շուրջ 150 էջնոց վիպակ մը:

Գիւղացի եւ ճազաճացի երկասարգներ են ներսնները Արելիանի վիպակին, որուն գործողութիւնը տեղի կ'ունենայ յաջորդաբար հայկական հեռուոր գիւղի մը խաղող պույմուններուն ու ճազաճացիական պտտերագմին փոքորիկէն բռնուած մեր պեկնոծ ճազաճիկ մէջ, այդ երկու եւ եակաղիք միջավայրերէն բխող զգայնութիւններու հստիւն տակ:

Գիւղական բնական առօրեայ, անբնական պայմաններու տակ հոն ապաստումած ճազաճացիական երիտասարդներու անբնական հոգեվիճակ, ամկատար երագներու յազում, ընդհատուած աշխատանքի մղձաւոնջ, անհկաղի սպասում, տագնապները մոռնալու փորձ, գիւնվութիւն, սէր, հեռացում, ճայճայման վտանգ:

«Ձիտագույ 27» հանդարտ գնացումով մը կը գործուի մեր վերջին տարիները յատկանշող վերոյիշեալ վիճակներուն եւ առանց մեծ բռտերու, առանց գրական ճիւղերու գայրակողութեան եւ հրապարակագրական սպաննիչ փորձութիւններու կը պատկերացնէ կեանք մը, որ շնորհիւ ընկալման պարզութեան, խաղող պատմումին, բռտերու ժուժկալ գործածութեան՝ ուշագրաւ չափով մը կեանքի դարձած է նաեւ քաղաքին վրայ:

Մնտուկները դամուած ու կոճկուած՝ իրենց մէջ կը բանտեն հասուն խնձորները: Երբ պարապ պայուսակներն ու բազմոցները հաւաքելէ ետք որոշեղի տուն երթալ, անգամ մը եւս նայեցայ խնձորի սնտուկներով կազմուած պատնէշին, որ օրուան մեր աշխատանքին արդիւնքն էր: Թրոխտ էր այդ պատնէշը: Տախտակ, դամ, թել եւ խնձոր, բայց եւ արեւ, արեւու խտացած ճառագայթ, պարտիզպանի արդար քրտինք ու ցոյլ, հող եւ անձրեւ: Յոյս:

Մնտուկներու դէպը կը բարձրանայ հրապարակի ընկուզենիի շուքին: Բեռնակառքը կու դայ՝ թուխ եւ հաստաշուրթ արար վարդով: Տոնակատարութեան պէս արտողութիւն մըն է խնձորները կառքին վրայ բեռնելու աշխատանքը: Աղմուկ, պոսչուութիւն, քրտինք ու յաճախ վէճ, անհասկացողութիւն: Եւ, ի վերջոյ, դէպը կը շարժի դէպի հարաւ. ու Ֆրենլիսի դեպը կտրելէն ետք, կ'ուղղուի դէպի արեւելք, Հայէպ: Արար վարդով դէպի հարաւ կը դարձնէ դէպը, հերթական: աղթքը կ'ընէ ու Աստծոյ անունը շարտասանած՝ չարձակեր բեռնակառքին արդեւակները:

Բեռնահատարի այդ օրերուն, զիւզի մարդիկը յոչնոճ կ'ըլլան, բայց շէն դազբիբ զիւրար բարձրաձայն բարեւելէ, կամ՝ իբարտ երևան ի վեր փաղաքշական հայհոյանքներ սրտալէ: Մանուկներուն հետ աւելի ներսզամիտ եւ բարեացակամ կ'ըլլան, աւելի հաճոյակատար:

Գիւղէն ներս, ամբան այդ օրերուն, նշանաւոր դէպքեր տեսիլ չեն ունենար: Աշխատանքը կը լեցնէ մարդոց սուօրեան եւ կեանքը կ'ընթանայ զիւրասահ:

Բեռնակառքը լեցնելու համար կը հաւաքուէին մեր գիւղի տըղարք: Առատան աշխատանքը կը ցրուէր մեզ պարտէզներուն եւ այդիներուն մէջ, երեկո՞՞ կը հաւաքէր խնճոյքի սեղանի մը շուրջ, կամ՝ կը նստէր մեր զիւղերու գործդարձիկ ճամբաներուն վրայ:

Մեզ կը ճանչնային քաղաքի թուխ ու դեղանի աղջիկները: Անոնք մեզի հետ չէին ծանօթանար տնձամբ, բայց գիտէին մեր սանձայններուն կշռոյթը: Կը ճանչնային մեր ձայները, երգերը: Եւ այդ երգերը սւրիշ բան չէին, եթէ ոչ Գէորգ Չաւուշի, Սերօք Աղբիւրի, Անդրանիկի եւ մեր բոլոր մարտիկներուն երգերը: Այդպէս եղած էր միշտ, մեր պատանեկութեան ամենալազ օրերէն իսկ, երբ դեռ հաղիւ յանդգնութիւն կ'ունենայինք իրենց փէշերուն հետ հաւարուող ու տարածուող իրիկիամուտի աղջամուղջին մէջ մեր անդրանիկ երազները հիւսելու:

Ատոնք զարձած էին մեր ուրախութեան, խնճոյքի, արամութեան եւ սիրոյ երգերը: Հիմա նոյնիսկ, Արեւելքի թուխ աղջիկները, մեր ձայնի թրթռացումին մէջ, կը դանէին այդ նոյնութիւնը, եւ ակնապիշ ու ամօթիւմ՝ օձապտոյտ մեր ճամբաներու կամբջաղուելունս կանդնած, մեր խրոխտ անցքին կը սպասէին: Տարիներ տա՛րողջ, ոչ մէկ մեղաւոր ձեռք պատտած է երազի եւ սպասումի այդ վարադոյրը: Գափնեճածիկ բլուրներու կողերուն, օձապտոյտ ճամբաները մնացած են սիրոյ եւ երազի ճամբաներ: Ոչ մէկ օր անոնք ունեցած են փորձութիւնք վերածուելու փողոցի, այն բազմահազար փողոցներուն նման, որոնց վրայ կը բացուին կապեւաններուն դուռները, ուր գորեջուրի եւ ուրսքի բաժակներուն մէջ, վերջին փրփուրներուն հետ, մէկիկ-մէկիկ կը պայթին երազները: Մեր երազի որորապտոյտ ճամբաներուն վրայ, կամբջաղուելին կանդնած մեր խրոխտ անցքին սկիւտայիչ սպասող, Արեւելքի թուխ ու անարատ աղջիկը վկայ:

Մենք մեծ մտտով համարարանուկան էինք: Մեր խումբը մանկութեան օրերէն կաղձուած էր: Նոյն երազներով, նոյն արկածախնդրութիւններով միացած՝ մենք կը ճանչնայինք զիւրար մեր անուններուն պէս: Խումբին թիւր կայուն էր, թէեւ ոմանք ձգած էին իրենց գիւղը անդարձ, եւ հիմա՝ տարին քանի մը նամակ կը զրկէին միայն, բայց անոնց փոխարէն, աւելի փոքրեր, որոնք նախապէս դուրս կը մնային մեր շարքերէն, մեծցեր էին յանկարծ: Եւ քանի մը տարուան տարբերութիւնք, որ նախապէս վճառական նշանակութիւն ունէր, ջնջուած էր սրղէն:

Ամբան այդ օրերուն ոչինչ փոխուած էր մեր գիւղի սուօրեայէն:

Պարտէզները ծանրորհեստած էին տոսա բերքերով: Արձակուրդով տուն եկած էինք նախորդ ասրիներուն տէս եւ արդէն լծուած աշխատանքի, պարտէզներուն եւ այգիներուն մէջ: Ամբան այլ օրերուն ոչինչ կար անսպոր, եւ երբ իրիկնամուտին, յոգնած, կը հուաքուէինք ինձույթի սեղանի մը շուրջ, կամ կը քուէլէնք երազներով ու սպասուածի ասրերով յորդոյ մեր ճամբաներուն վրայ, ոչ ոք կը մտածէր ողէտներու մասին, ոչ ոք կը խտովէր գժբախաութեան մը գազափարով: Պատերազմի ու արհաւիրքի մասին խորհոյ չկար այլ օրերուն:

Այդպէս անխտով չմնացին օրերը:

Չայնասփիւռի կոյանները եւ հաղորդակցութեան բոլոր միջոցները կու տային Լեբանանի խռովութիւններուն յուրերը, որոնք օրըստօրէ կը ստանային ողէտի մը տարողութիւնը: Պատերազմը կը հասուենար այնտեղ եւ մենք անմասն չէինք կրնար մնայ անոր հետեւոյ վիշտէն: Պատերազմը կ'երկարէր, կը սաստկանար եւ անոր պատճառած մտահոգութիւնը աւելի անմիջական կը դառնար մեզի համար, աւելի իրական. «Եւէպրերուն պատճառով» մեր չըջանները հասնող լեբանանցիներուն թիւը հետզհետէ կը բարձրանար: Անոնք կու դային, որպէսզի «երբ դէպքերը վերջանան եւ ամէն ինչ բնական ըլլայ», իրենց գործին ու առօրեային վերադառնան:

Արփիկն ու Ալինը այս վերջիններէն էին, որոնք աւելցեր էին մեր խումբին վրայ: Արփիկին ինքնաշարժով, կարդ մը օրինապահ եւ տակաւին շտաբադնուած ստաիկոններու պատկանող դրահապատի մը բնկերակցութեամբ, անոնք կըրցած էին անցնիլ ամենալատանդատր փողոցներէն, ճիշդ այն Կիրակի աւտուն, որուն նախորդող գիշերը, լեբանանեան պետական ճայնասփիւռին իսկ սրակումով՝ «մտքաբարդաքի ամենադաժան գիշերը» եղած էր:

Արփիկ հայերէնի ուսուցչուհի էր, միւլենոյն ասին հայտնիութեան կը հետեւէր, իսկ Ալին ծանօթ խօսնակ մըն էր, պատկերասփիւռի կոյաններէն մէկուն մէջ:

— Հէ՛յ, մենք եկանք, ձեզի փորձանք, — բացադանչած էր Արփիկ իրիկուն մը, յետոյ բանայիներու տրցակը ձեռքին, իր անյոգի կենսունակութեամբ բարձրացած էր «Իշխանուհի» պանդոկին աստիճաններէն, Ալինի ընկերակցութեամբ: Ային, կոտրած տրամադրութեամբ ու յոգնած աչքերով՝ դիտած էր իր շուրջը, ծանօթանալու համար այն վայրին, որ դիւրենք պիտի հիւրընկալէր, «մինչեւ որ դէպքերը վերջանային»:

Այս երկրին մէջ, սակայն, կարելի չէ նախատեսութիւններ բնել: Կարելի չէ անմիջական դալիքի հեռանկար մը պատկերացնել, եւ խանդավառուիլ անով: Ամենատրամաբանական ենթադրութիւնն անդամ սխալ կրնայ գուրս դալ: «Ամէն ոք գիտէ, թէ այլը՝ այլ է, իսկ այստեղ, այլը կրնայ ըլլալ բն, կամ՝ տին, եւ կամ ակուայի վրձին մը», ինչպէս պիտի բաէր Փրանսայի լրացրող մը: Պատերազմի օրերուն նաեւ ուսուցիչը կը ստիպուի սիկարէթ ծախել, փողոցի մը անկիւնը, վաճառական կը դառնայ մարդատար կառքի վարորդ եւ մարդիկ կ'ըլլան դաղթական, իրենց իսկ սեփական տան մէջ: Երեսփոխանը, բժիշկը, անտանն ու աղբահաւաքը, նոյն շարքին մէջ կը մտնեն, փոսպանի մը դրան առջեւ: Եւ երբ իրիկունն սմբակո-

ծումը սկսի, շատ չնչին եւ անտո՛ր տրամբներ կը դրուեն բոլորը անխտիր: Խաղաղութեան օրերուն չենք մտածեր մահճակալը ձրե-
րով՝ ասն ասէնէն ապահով նրբանցքը փնտռել, ու հոն սպասել ու-
շայտղ առաւան:

Գիտեցի Հրանդին մատները, բազուկը: Պարաէղի աշխատան-
քը կոշտացուցեր էր անոր ձեռքերը. մկանները զօրացեր էին: Ու-
սանողական տարիներու աւրնչուած զրկանքներու զուժորը եւ երի-
տասարգական խանդավառութիւններու եւ բղձանքներու անընդհատ
կաշկանդումը պարտադրած էին համբերութեան եւ տոկունութեան
առաքինութիւնը՝ այլապէս աղատասէր եւ քիչ մը ըմբոստ իր նկա-
րագրին: Պատանեկութեան օրերու երազկոտ տղան, հիմա եղած էր
իրատես եւ քիչ մը դաժան: Մէկ ամսուան արձակուրդը, որ զինք
վերազարձուցած էր լեռներու եւ դաշտի բիրտ կեանքին, կրցած էր
քիչ մը պրկում տալ իր գնդերներուն: Մեր մէջ լաւագոյն երզողը
ինքն էր: Եւ հիմա, բնթրիքի սեզանին շուրջ, մենք կ'ունկնդրէինք
զինք, երբ ան կ'երզէր անխառն ոգեւորութեամբ:

Աին բուսարարուած էր սեղանէն եւ սրտառաքաղը մեղմօրէն
կը շարժէր իր սրբապ պնակին մէջ: Գէմքը խոռոյ արտասույտու-
թիւն մը ունէր: Ան չէր մասնակցեր խօսակցութեան: Աչքերը սե-
ւեռած էր ձեռքի պատառաքաղին, որ աննպատակ ու կանոնաւոր կըլ-
նոյթով մը կը շարժէր:

Ճանչցեր էի զինք համալսարանի ծովափին, վարձեալ Արփի-
կին ընկերակցութեամբ:

Այն ատեն դեռ ուսանողուհի էր եւ կը հետեւէր լրագրութեան:
Աւարակէն ետք, նոր էր, որ սկսած էր աշխատիլ պատկերասփիւռի
կայաններէն մէկուն մէջ՝ իրրեւ խօսնակ:

Արփիկի գտարնկերուհի եղած էր երկրորդականի տարիներուս
եւ ծանօթ էին ինծի անոր գուարթախօսութիւններն ու մշտական կեն-
սունակութիւնը: Ալին աւելի սակաւախօս էր սակոյն, խոհուն դէմ-
քով ու երազկոտ աչքերով: Տարիներու զրացնութիւնը իրենց ման-
կութեան օրերէն միացուցած էր զիբենք ու, իրրեւ դուռկից՝ անոնց
մտերմութիւնը զարդացած ու աճած էր իրենց հետ:

— Հիմա, այսպէս կուշտ փորով կարելի չէ քնանալ, — ըսաւ
Հրանդ:

- Բայց ուշ է արդէն, — տարկեց Ալին:
- Հոյակապ է ուշ ատեն քալել, — կրկնեց Հրանդ:
- Ո՞ւր պիտի երթանք, — հարցուց Արփիկ անհամբեր շեշ-
տով մը:
- Սուրճ խմելու: Մէկ մղոն հեռաւորութեամբ սրճարան մը
կայ, հան կ'երթանք:
- Կը քալենք, պայմանով որ երգես:
- Ե՞րբ քալած ենք առանց երգելու: Այս ճամբաները բաց-
ւած են երգի համար, ամբան զիչերներուն երգելով քալելու համար,
— վստահացուց Հրանդ:

Ամբան՝ երբ ցերեկը տաք ըլլայ ու անախորժ, զիշերը կ'ըլլայ հաճելի: Մութին մէջ, ճամբան է, որ կը շեշտուի, կը պարտադրէ իր ցոլքը ու եղերող թուփերն ու ծառերը կը ձուլուին միակտուր եւ շարունակական ստուերի մը մէջ: Մեր խումբը շատ մեծ էր այդ դիշեր:

Հրանդ ու Արփիկ կը խօսէին պատերազմի մասին: Արփիկի բարձր եւ ջինջ ձայնը ինքզինք կը պարտադրէր: Ան կը պատմէր իրենց թաղին մէջ տեղի ունեցած հախճարուն մասին, կը յիշէր դէպքերու անունները եւ կ'ըսէր, թէ սարսափելի էին անոնք: Կը նկարագրէր մօրուքաւոր ու երկար մողերով դինեայները, սրտնր սպանացներ եւ աունէն դուրս քշեր էին իրենց ընտանիքը. «կրնային մեզ սպաննել», կ'ըսէր ան:

Ալինի հետ կը քայլէ կողք կողքի. չէինք մասնակցեր խօսակցութեան: Արփիկի ձայնը ինձի կը յիշեցնէր երկրորդականի դպրոցական շրջանը: Այդ յիշատակով շատ չէի խանդավառուեր:

— Բնաւ պիտի չուղէի վերյիշել այն անտանելի օրերը, — ըսաւ Ալին:

— Երկրորդականի՞ . . . :

— Ոչ. ի՞նչ երկրորդականի, պատերազմի . . . :

Ատանց խօսելու՝ շարունակեցինք քայլել:

— Ինչո՞ւ համար այսօրոն աստղաշատ է երկինքը, — հարցուց Ալին, վեր նայելով:

— Այդպէս է, — ըսի, — ամբան, երբ լուսին չըլլայ, աստղերը կը բողբոջան սիւնի:

— Աստղաշատ երկինք չեմ սիրեր:

— Ինչո՞ւ:

— Ձեմ գիտե՞ր ինչո՞ւ: Երբ երկինքը պիտեմ, անաստղով կը զգամ:

Նկատեցի, թէ ան ուղիղ քայլելու դժուարութիւն կ'ունենայ:

— Ձեր ճամբան քորքորոտ է:

— Գինիէն է:

— Կարծեմ: Հաճիս ձեռքէս բռնէ. այդպէս աւելի ապահով կը զգամ:

Մեր առաջին ծանօթութենէն ետք, առիթ ունեցանք դարձեալ հանդիպելու: Պատկերասփիւռի ընկերութեան մէջ սլաշտօնի կոչուելէն ետք, միայն փոքր պատատին միայ տեսեր էի զինք:

— Ինչո՞ւ տակաւին կը գիտես աստղերը:

— Լաւ, ա՛յլ չեմ գիտեր:

Նայեցայ դէմքին, որ սեւ եւ ալիքաւորուած մողերուն ընդմէջէն, աւելի ճերմակ ու պայծառ կ'երեւէր: Ան կը շարունակէր գիտել աստղերը, աչքերը դէպի վեր ուղղած: Անդրադարձայ, թէ առաջին անգամ էր, որ զինք կը տեսնէի այդ դերքով: Պատկերասփիւռի պատատին միայ, դէմքը աւելի կլոր կը թուէր ըլլայ:

Չգաց, թէ աչքերս յարած էի իրեն: Դարձաւ իմ կողմս ու ժպտեցաւ:

Բլուրին պարձուածքը անցնելէ ետք, սրճարանին լոյսերը երեւցան ծառերուն ընդմէջէն:

— Կուզուրուեցա՞ր:

— Այո : Հիմա ասողերն ալ կը սիրեմ :

Ալինի ափը քրտներ էր ձեռքիս մէջ :

Սրճարանը տանող ճամբան կամարուած էր դափնիի ոստերով : Շարաթ մը առաջ, երկրին նախադասը իր շաքաթափերը զրօսանքը հոն անցուցած էր : Ամէն կողմ դարդարուած էր դրօշակներով : Բարկալուտաթի դրութիւններով եւ նախադասին ղլիմանկարներով :

Սրճարանը զրեթէ պարապ էր :

— Այստեղի սրճարանները Լիբանանի մէջ եղածներուն փայլքը չունին, — ըսի :

— Լիբանանցիները ամէն բանի մէջ անզուգական են, — ըսաւ Ալին՝ գփփոհ չեղաով մը :

— Մա'նուանդ զիրար սպաննելու մէջ, չէ՞, — ըսի :

— Նախամարդու պէս բարբարոս դարձած են այս օրերուն, — գանդատեցաւ Արփիկ, — ոչ մէկ պատերազմի ընթացքին այսքան վայրատութիւն եղած է :

— Չեմ կարծեր : Բոլոր պատերազմներուն համար կ'ըսուի, թէ աննախընթաց պատերազմ մըն էր, եւ թէ՛ նման պատերազմ բնաւ պատահած չէ տակաւին : Բայց երբ վերջանայ եւ քանի մը տարի անցնի, կը վերածուի պարզ պատերազմի մը, նման այն բոլոր պատերազմներուն, որոնք սկսած են Արէլով ու Կայէնով, եւ կրկնուած՝ մարդկային պատմութեան ամբողջ ընթացքին : Մարդիկ միշտ բարբարոս եղած են :

— Ես հիմա այդքան խոր վերլուծումներ ընելու տրամադրութեան մէջ չեմ, — ըսաւ Արփիկ :

— Կը հասկնամ, — ըսաւ Հրանդ, նկատելով, որ «ճառախօսութեան» մէջ մտած էր :

— Չե՞ս խորհիր, որ շա՛տ, շա՛տ դէշ բան է, — հարցուց Արփիկ :

— Պատերա՞զմը :

—Այո, — ըսաւ : Սուրճը լեղի չէ՞ :

— Ոչ, լաւ է, ես լեղի կը խմեմ : Լաւ չէ եռացուցած, — ըսի, — այսօր ա՛լ պատերազմի մասին չխօսինք, — աւելցուցի յետոյ :

— Դուն քնա՞տ ես, — հարցուց Ալին՝ ինծի նայելով :

— Վերադառնանք :

— Երգելով, չէ՞, — խանդավառուեցաւ Արփիկ :

— Ի՞նչ երգ պիտի երգենք, — հարցուց Ալին :

— Խոնատորի արչաւանքին երգը, — ըսաւ Հրանդ :

— Դարձեա՞լ պատերազմի մասին : Կը կարծե՞ս, որ բոլոր պատերազմներն ալ նոյնն են, — ըսաւ Ալին :

— Ա՛լ պատերազմի մասին չխօսինք այսօր : Երգենք : Յոգնած ենք, — ըսի :

— Երգը լաւ է, կը դրաղեցնէ մեզ, — հաստատեց Արփիկ, — կը թեթեւցնէ :

Վերադարձին՝ ընտրեցինք ասֆալթապատ ճամբան :

— Երբ խանդավառութեամբ երգեմ երկար, կուրծքիս մկանները կը յոգնին, բայց թեթեւցած կը գըամ, — ըսաւ Ալին, մեզմ ձայնով մը, երբ արդէն անջատուած էինք խումբէն, — այդպէս կը գըամ, երբ լամ, երկար, եւ կուշտ լամ, — շարունակեց ան :

— Լացն ալ երգ մըն է, — ըսի :
 — Գուցէ ամէնէն իրականը, դէթ այս օրերուն :
 Հրանդեանք հը շարունակէին երգել : Ալինն ու ես քանի մը քայլ
 ետ էինք անոնցմէ :

Լիրանանի մէջ, պատերազմը արդէն դուրս եկած էր քաղաք-
 ներու սահմաններէն ու հասած մինչեւ դիւղերը . . .

Ալին մտահոգ էր եւ անտրամադիր :

Արեւը բարձրացեր էր հորիզոնին վրայ : Երկինքը պայծառ էր :
 Մօտակոյ ձորերը ծածկուած էին մշուշէ շղարշով մը : Այդ կը նշա-
 նակէր, թէ օդը շատ տաք պիտի ըլլար : Խնձորները ատոյզ եւ թարմ
 պահուելու համար, միտյն դով ու խոնու օդին կը քաղեն : Ուրեմն,
 այդ օր, մեզի համար դարձ չկար պարտէզին մէջ :

Երբ Հրանդին մօտ դացի՝ ան ածիլուելու կը պատրաստուէր :

— Լսեցի՞ր, — ըսի, — այս դիչեր շատ դէշ կառուեր են մար-
 դիկը :

— Գետնին տա՛կը անցին : Ես ա՛լ լուր մտիկ պիտի չընեմ :
 Այսօր շատ դէշ կը դգամ, չեմ դիտեր, կարծեմ յուսահատ եմ :

— Ամէն կողմ հրդեհներ կան : Հրչջններուն եւ հլւանդատար
 կառքերուն վրայ կրակեր են :

— Կատղած են : Յամենայնդէպս, ձանձրացանք ատոնց լու-
 րերէն :

— Ալինը շատ անտրամադիր էր առտուն :

— Մինչեւ վերամուտ կը վերջանա՞ն կռիւները : Աս վկայա-
 կանք ատենեք գոնէ : Դեղադոբժ պիտի ըլլանք եղեր, է՛հ :

— Դեռ երկու ամիս ունիս ատով մտահոգուելու համար : Հի-
 մա ածիլուիր ու սուրճ խմենք միտսին, եւ խորհինք, թէ ինչ կըը-
 նանք ընել այսօր :

— Ալինին արձակուրդը երկու շաբաթէ՞ն կը վերջանայ :

— Տասը օրէն : Գործէն աւելի, ծնողքին սպահովութեամբ
 մտահոգուած է կարծեմ :

— Թող անոնք ալ հոս դան :

— Ատիկա իրեն ըսէ : Հիմա վերջացուր, որ սուրճ խմենք :

— Գետնին անցնի քու սուրճդ, աւտու կանուխ երա՞զդ տե-
 սար :

— Մի բարկանար, չենք խմեր : Այսօր ծով երթալու օր է,
 չե՞ս կարծեր :

— Ես ալ ճիշդ ատիկա պիտի առջարկէի :

— Մենք տարբեր ենք . . . : Հանճար ենք, ի վերջոյ :

— Մենք դղումի գլուխ ենք. երեսս ալ վերաւորեցի . . . :

Մով իջնելու գաղափարը խոնգստաւեց բոլորս :

— Հրաշալի է, — բացառանչեց Արփիկ, եւ ցատկոտելով ներս մտաւ՝ հարկ եղած իրերը վերցնելու:

Ալին տխուր էր սակայն: Խանդավառութեան ոչ մէկ արտայայտութիւն կար գէժքին:

— Ձեմ ուզեր տեղ երթալ, — բտաւ, — շատ անտրամադիր եմ: Գէշ կը զգամ ուղղակի:

Արփիկ յայնուհետեւ, կազմ ու պատրաստ, ինքնուշարժի բանալիները ձեռքին մէջ ճօճելով:

— Ի՞նչ սեղիս դարձեալ, — ըսաւ ըւրջ շեշտով մը, դառնալով Այինին:

— Պէտք է հեռադրեմ մերիններուն:

— Կարելի չէ հեռադրել: Հեռաձայնով՝ թերեւս:

— Աւելի լաւ: Իրաւ, կրնամ տեղէ մը հեռաձայնել:

— Բայց անոնք ապահով են, չէ՞:

— Ապահով տեղ չկայ:

— Եթէ հեռագրատուն երթանք, կրնանք հեռաձայնել, — ըսի:

Հեռագրատան պաշտօնեան ապահովացուց, թէ երկու ժամէն կրնայինք խօսիլ Պէյրուսի հետ:

Օգր խիստ տաք էր: Պաշտօնեայէն խնդրեցինք, որ հեռաձայնի գլխով «Միփան» սրճարան փոխանցէ:

— Ի՞նչ կրնանք ընել՝ մինչեւ կազը հաստատեն:

— Հիմա ոչինչ կրնամ ընել, այնքան անհամբեր եմ:

Վայրը գով էր եւ խաղաղ: Հորիզոնին վրայ թրքական զինուոր կ'երեւէին: Անտառը, թրքական սահմանէն ներս, մեծ հրդեհ մը կար:

— Կը սիրեն ծառերը փճացնել:

— Ծառը պայման չէ, կարեւորը բան մը փճացնելն է:

Ալին կը դիտէր հրդեհը՝ անհանդիստ հայեացքով մը:

Վայրազ ու խելայեզ բոցերը կը բարձրանային վեր:

— Ծատ ախուր պիտի գզայի, եթէ տոտնձին ըլլայի, — ըսաւ Ային՝ աչքերը հրդեհին յոռած:

Այս հրդեհը դուրսէն ոչինչով կը տարբերէր այն հրդեհներէն, որոնք, Պէյրուսի բարբարոս գլխերներուն, իրենց բոցերով ճարտկամ էին շէնչոզ շուկաներն ու պճնուած թաղերը: Ու այդ բոլորին ետին՝ շկար գուցէ արդարացուցիչ պաղափորարանութիւն մը: Միայն, տարիներ ետք, կարելի ըլլար թերեւս խօսիլ քաղաքի մը մասին, որ իր խելագարութեան մէկ ժամուն, ինքզինք հրդեհած էր: Ինքնասպանութիւն գործած ըլլալու բաւարարութենէն թելադրուած, յողթանակի պատրանք մը...:

Ալին շարունակեց դիտել հրդեհը, որուն ծուխը ժայթքումով մը կը բարձրանար վեր, ապա՝ սուսկի ձեւով կը տարածուէր: Պաղ պարեջուրի բաժակը սեղմեց ափին մէջ եւ, տոտնց աչքը հարիզոնէն հեռացնելով՝ մէկ շունչով պարպեց պաւթին պարունակութիւնը:

...Քաղաքը, երկիրը ամբողջ, կիրքերու յորձանքի մը մէջ, կորսնցուցած էր իր ինքնութիւնը եւ կը սպառէր տակաւ առ տակաւ: Բայց, ամէնէն ընդդիմացուցիչը թերեւս, պետութեան անփառունակ ակադամութիւնն էր: Խուճապի մատնուած ու շփոթահար ոտիկաններուն նահանջը քաղաքի թաղերէն ու պոդոտաներէն, ուր սուրսափն ու մտէր դարձեր էին իշխանութիւն եւ օրէնք: Արհուիրքը, կա-

պարով ու վառողով, կ'աւելք հրապարակներն ու փողոցները, մարդկային վերջին խլեակներէն: Այլնի աչքերը անհանդիստ էին:

Լուս էինք բոլորս:

Մեզ կանչեցին հեռաձայնին մօտ:

Աստիեայ փեղկին ետին, Այլն երջանիկ կը թուէր ըլլալ: Ընկալուչը գէմբին սեղմած, խօսեյէ աւելի կը բացադանչէր:

Այլն կը ժպտէր եւ անոր շրթները կը գողային խանդավառութենէն: Սպիտակ տիւնները այնքա՛ն իրական ու ջերմ կը դարձնէին անոր ներկայութիւնը: Աւելի իրական, քան այն բոլոր սովորական ժպիտները, որոնք կը գծագրուէին պատկերասփիւռի պատաստին վերայ, էլեկտրամաղնիսական ալիքներու դումարով, երբ ան աւարտէր ծանուցում մը, կամ՝ լուրերու հաղորդումը:

Անտառապահներու դիտարանի բարձունքէն արդէն կ'երեւէր ծովը: Մայրիներու անտառը թանձր էր եւ, հեռաւոր տարածութեան վրայ՝ մարդադեմնի կը նմանէր: Ծովեզրին քարտէսը յստակ դիժերով եւ ոլորապտոյտ, ճերմակ փրփուրէ երիզով մը կը բաժնուէր մինչեւ ջուրերը տարածուող անտառէն:

Փոքր, բրդոտ շնիկ մը մեր ինքնաշարժին զուգահեռ վազել փորձեց՝ բարակ ու վտիտ հաջոցով մը: Յետոյ՝ կանդ առաւ, յուսահատ ու շիյ նայուածքով մը դիտեց հեռացող ինքնաշարժը:

— Անշնորհք, — ըսի:

— Խեղճ, խեղճ շնիկս, իմ աղուորի՛կ շնիկս, Ֆիֆիս, — ըսաւ Այլն՝ դուխը մեզմ օրօրելով:

— Ֆիֆի՞:

— Այո:

Այլն տիրեցաւ: Յետոյ պատմեց, թէ իրենց տան շնիկը, որ շատ կը նմանէր այդ շան, սպաննուեր էր: Երբ դինեալները խուժեր էին իրենց տունը եւ պահանջեր էին բնակիչներէն հեռանալ, Ֆիֆին հաջեր էր, եւ իր «սիրունիկ աղուններով» ջղայնացուցեր էր դինեալներուն պետը: Այս վերջինը ատրճանակի մէկ հարուածով ջախջախեր էր Ֆիֆիին զանկը: Այլն լացեր էր Ֆիֆիին համար: Զինեալները քրքջացեր էին անպատկառ, եւ անոնցմէ մէկը՝ տղեղ ու կարճահասակ, կոտրեր էր պատկերասփիւռին պատաստը: Եւ այդ անիմատ շահատակութիւններով դիտույցած, անոնք տակնուվրայ ըրեր էին ամբողջ տունը:

Այլն բարձրացուց դուխը: Յետոյ՝ աւելի վճռական շարժումով մը, գէմբը իմ կողմս դարձուց ու աչքերը սեւեռեց վրաս:

— Քու ներկայութեամբ աւելի ապահով կը դըսմ, — ըսաւ, ու գոհունակ ժպտեցաւ:

Ճամբան՝ դարձգարձիկ ու նեղ, կ'անցնէր մայրիի խիտ անտառներու մէջէն: Ֆրոնտական հողատարութեան օրերուն բացուած պատերազմական ճամբայ մըն էր: Ճաքէն հալած ու գոլորչիացած խէփին բոյրը կը հասնէր մեր ունդերուն:

— Այդ կարմիր լաթը զիս ցուլի պէս կը կատղեցնէ, — ըսաւ Հրանդ, ցոյց տալով թրքական գրօշակը, որ կը ծածանէր ճամբէն հաղիւ քսան մեթր հեռաւորութեան վրայ ցցուած ձողի մը ծայրը:

Սուրբոյ եւ Թուրքիոյ սահմանին վրայ էինք արդէն: Քանի մը թուրք սահմանապահ զինուորներ, որոնք կ'երեւէին սահմանէն ներս, զնշարացիները իրենց ուսերէն կախուած, կ'երթեւեկէին անդադար:

Ալին գէմքը թեւիս վրայ սեղմեց ու ժպտեցաւ: Յետոյ՝

— Վստահ եմ, որ ուրախ ժամանակ մը պիտի անցընենք, — բռնաւ:

Ճամբան կ'անցնէր արուեստական լճակի մը մօտէն: Հեղեղատի մը ջուրէն դոյսացած էր ամբարտակի մը ետին, որ հիմա ճեղքուած եւ լքուած էր այլեւս:

Հասանք ծովափ:

Միջերկրականի խաղաղ եւ կապոյտ ափը, իր աւագուտ լողորաններով, ամբան այդ օրերուն կը խճողուէր, գրօնեկու եւ իրենց արձակուրդը ծովափ անցընելու համար ժամանոց բազմութեամբ: Աչքառու դոյներով վրաններ, անձաշակ ներկուած փոքր իջեւաններ լեցուցեր էին ծովեզրի երկայնքին տարածուող թաւուտը: Չկնորսական պղտիկ մակոյկներ, դոյնզոյն ժապաւէններով դարդարուած, կ'երթեւեկէին ծովափին մօտ: Ամբան այդ եղանակին, մակոյկները գրօնաչիլիկներ պալտացնելու կը ծառայէին ցերեկին, իսկ զիշերով՝ կը գործածուէին ձկնորսութեան համար: Չմբան՝ նոյն մակոյկներով ձկնորսները մաքսանենդութիւն կ'ընէին, սուրբիական արտադրութիւններ ապօրինի ձեւով թուրքիա փոխադրելով, եւ թուրքիայէն՝ արջատ եւ ծխախոտ փախցնելով:

Ամենածայրի սրճարանը նուազ խճողուած էր, քան միւսները: Լողարանը շատ մարդ չկար: Փացինք հոն:

Հրանդ մտաւ խահանայ՝ ձուկ պատուիրելու համար:

— Հոյակապ ձուկեր ապսպրեցի ձեզի համար, — բացագունչեց ան, եւ լողազկեստով՝ աւազներուն վրայէն մտցեց:

— Ոտքերդ կ'այրին, — ձայն տուաւ Արփիկ, որ արդէն բաւական հեռացեր էր ափէն:

— «Կրակ ընկանք, ջուր ընկանք...»: Դժոխքը այս աւազէն պատրաստուած ըլլալու է:

Յետոյ՝ Հրանդ սուղուեցաւ ջուրին մէջ:

Ալինի հետ, հողաթափերով քալեցի աւազին վրայէն, մինչեւ այլքները:

Իր մարմնի սպիտակութեան ակնարկելով, Ալին կը դանդաւտէր, թէ այդ ամառ առիթ չէր ունեցած ծով երթալու: Ակամայ զիտեցի զինք: Լողազկեստով անոր մարմինը նոյն հմայքը չունէր:

Նկատեց, թէ զինք կը դիտէի:

Այլքները արդէն կը թրջէին մեր ոտքերը:

Պատիթի այլ ծովափէն գէպի հիւսիս կը բարձրանան Սիլլորանի, Մուսա Լեբան եւ Կասիոսի դաղաթները: Մուսա Լեբան կապուտակ ուրուաղիժը, հեռուն, մշուշներու մէջ կ'երեւէր, իսկ Կասիոսի խոհուն եւ լերկ դաղաթը թաղուած էր ամպէ դանդուածի մը մէջ: Ամենամօտը Սիլլորանն էր, որուն կողմն ի վեր, ոլորապտոյտ, նորարաց ճամբուն թարմ հողերը կը կարմրէին: Ասփայթ եռացնելու

համար վառած կրակներուն ծուխերը կը բարձրանային դանտղան կէտերէ՝ ճամբու ամբողջ երկայնքին: Այդ ճամբան Պատիթի ծովափը ուղղակիօրէն պիտի կապէր Քեսապի ամարանոցներուն:

— Կեանքը այստեղ անիրական կը թուի, — ըսաւ Ալին:

Ծով չիջած՝ նստանք ունայններուն վրայ, ոտքերնիս երկարած, մերթ մօտեցող, մերթ նահանջող ալիքներուն: Անհանդարտ ու աշխոյժ ալիքներ:

— Ինչո՞ւ այդպէս կը խորհիս, — ըսի:

— Պատերազմի մղձաւանջը. այնքան անմիջական, այնքան ճնշող է:

Ալիքները, բոլորովին անտարբեր ու անհարգող մեր խօսակցութեան՝ կը շարունակէին իրենց միօրինակ պարը:

— Այս օրերուն այսքան դեղեցկութիւն, այսքան անդորր՝ շրոթայութիւն կը թուին ինծի: Նոյնիսկ անարգար կը դտնեմ:

Մեզմէ քիչ մը անդին դանուռ մանուկներու դուարթ խումբ մը կ'ազմէր: Անոնք իրարու վրայ ջուր կը սրսկէին ու կը քրքջային: Մօտեցող ալիքներուն հետ կը բարձրանար նաև անոնց քրքիջին ալիքը, ապա՝ դարձեալ կը մեղմանար, ալիքներու նահանջին կըշուայթով:

Մենք բնկողմանած էինք բարկ ու խոնաւ աւազին վրայ: Ալին այնքան մօտ էր ինծի: Կը զգայի անոր շնչատութեան հեւքը, սը կը մտանէր իր խոսիքը:

Երկար ստեն լուռ մնացինք: Լուռութեան մէջ ունելի ճնշող, աւելլի անմիջական էր անոր ներկայութիւնը:

Իջանք ծով: Չուրը զով էր: Կազդուրիչ:

Ալիքին հետ կը բարձրանայի վեր, ապա կը ձգուէի ցած, բոլորովին կը աւարական, ու ամբողջ մարմնով անձնատուր՝ ջուրի քմայրին:

Վարանոս ձեռք մը դպաւ ճակտիս, յետոյ՝ ուժղնօրէն մխրձեց դուրս ջուրին մէջ: Պահ մը հաւասարակշռութիւնս կորսնցուցի: Ստիպուեցայ փորիս վրայ դառնալ, կարենալ դուրս ջուրէն վեր պահելու համար:

Ալինն էր, որ քրքջալով ու յողթական կը հեռանար: Վճռական շարժումով մը լողացի անոր ուղղութեամբ եւ երբ հասայ մօտը՝

— Հաճիս, — քացադանչեց, — ես վարպետ լուրորդ չեմ, — եւ արագացուց լողալը դէպի ծովափ, բարձրաձայն խնդալով:

Ափ հասնելէ ետք, շնչատուր ու դոհունակ՝ բնկաղմանեցաւ աւազին վրայ:

— Հաճելի է:

— Հոյակապ: Նորէն բնենք...:

— Հմայքը կը կորսուի:

— Ուղիղ դէպի ծովուն խորը, մինչեւ հորիզոնը լողանք:

— Չե՞ս վախնար խեղդուելէ:

— Բայց մօտ է:

— Հերոսութիւն բրած բլլալու համար:

— Հերոսութիւնը անիմաստ է: Պարզապէս մինչեւ հորիզոն հասած բլլալու համար: Թերեւս ոչ ոք դացած է հոն, մինչեւ հիմա:

— Հետաքրքրական բլլալու է, բայց կը յոգնինք:

Ալին շտկուեցաւ, երկար եւ խորունկ ներշնչեց :

— Ի՞նչ եւն վերջին լուրերը :

— Ո՞վ գիտէ : Ո՞վ է պատերազմի մասին խորհողը, — բսի՛ գրեթէ անտարբեր շեշտով մը :

Յետոյ լուռ էինք :

Ալին մէկ ձեռքով կռթնած էր դեմնին, միւսով՝ կը խաղար աւազին հետ, զլուխը հակած էր ուսին եւ մազերը կխտով կը ծածկէին իր դէմքը :

Այդպիսի պահերուն կարելի է խօսիլ շատ մը նիւթերու շուրջ : Յիշուակ, Ալին կրնար խօսիլ իր ասպարէզէն, իր անօրեայէն : Ես՝ կրնայի խօսիլ իմ գոյրոցական կեանքէս, ուսանողական ասօրեայէն : Կրնայինք վերջապէս խօսիլ մեր մանկութեան յուշերէն, պատանեկան փորձառութիւններէն, օղէն, ջուրէն, կերակուրէն, եւ դեռ՝ խօսիլ մարդոց մասին, երկիրներու մասին : Պօսիլ, անընդհատ խօսիլ : Բայց լուռ էինք, որովհետեւ խօսակցութեան այդ բոլոր նիւթերէն աւելի կարեւոր, աւելի անմիջական ապրում մը կար, որ իր արտայայտութիւնը կը գտնէր Ալինի տիէն հոսող աւազի հատիկներուն մէջ :

Ալիքները իրենց համաշափ ու անձանձրոյթ կշռոյթով կը թըրջէին մեր ոտքերը :

— Անուշիկ չէ՞ր այդ շնիկը :

— Ո՞ր շնիկը :

— Այն շնիկը, որ յուսահատ հաջեց մեր ինքնաշարժին ետեւէն :

Ալիքները սրտի դարկերու նման կանոնաւոր կրկնութեամբ կը պատասուէին աւազին վրայ : Զուրբ կը տարածուէր՝ մեր ոտքերը թրջելով :

— Ծովը հոյակապ է, — ըսաւ Ալին, լողանք :

Հրանդ, մակոյկի յուսաջամասին կանդնած՝ բարձրաձայն կ'երգէր, իսկ Արփիկ, իր խանդավառութիւնը մեղի փոխանցելու յտակ ջանքով մը, նաւակը զարգարող ժապուէններուն եւ դրօշակներուն համար դեռեղութեամբ երկաթեայ ձողը ամուր բռնած՝ մեր անունները կը սրտար, ու ձեռքով նշան կ'ընէր, որ միանայինք իրենց եւ նաւ բարձրանայինք : Արփիկի խնդրանքով, սեւ ու սրեւէն խանձուած ձկնորսը, մակոյկին դեկը դարձուց մեր ուղղութեամբ, եւ երբ մօտեցաւ ծովափին, ուր մենք բնկողմանած էինք, Կանդաղեցոյ րնթացքը, յետոյ՝ մարեց շարժակը : Մակոյկը քանի մը մէթր եւս յաստացաւ, ապա՝ կանգ տաւ, միշտ օրօրուող, բարձրացող ու ցածցող ավիքին հետ :

Ալին շտկուեցաւ ու ելաւ ոտքի : Ան հիացած ու ժպտուն աչքերով գիտեց Արփիկը, որ հարցական ու անհամբեր կը սղասէր մեր հակադրեղութեան :

— Դուն այդպէս հոյակապ ես, — ըսաւ Ալին՝ խօսքը Արփիկին ուղղելով, եւ խաղաղ ժպտեցաւ :

Արփիկի մազերը կը ծածանէին հովէն :

— Լաւ, ինչո՞ւ չէք ելլեր. որո՞ւ կը սպասէք տակաւին :

— Յուսախտը կ'ըլլա՞ս, եթէ բսեմ, թէ ձեզ դիտելը աւելի հաճելի է, քան նաւով պտըտիլը... :

— Վնասողը զուք էք:

— Ուրեմն չէք ուղեր նաւակով պտրտիլ: Խորը, ծովուն բացերը, մինչեւ հորիզոն, հս'գս...:

Յետոյ՝ նաւաւարին գլխով նշան բրաւ, որ շարժի:

— Մարդիկ չեն ուղեր նաւով պտրտիլ, — բացատրեց:

— Մակոյկս չհաւնեցա՞ն: Մոլափին հարան է, հա'րսը, — բնաւ պարծանքով եւ աշխատցուց շարժակը:

Անոնք հետացան ափէն: Մակոյկի ետին դոյսացած փրփուքէ երկըը հայեցաւ ու փրփուրները մէկիկ-մէկիկ պայթեցան:

Հովը, սննդատ կերպով, սաստկացեր էր հեղհեղ: Ալիքները աւելի սնհանդիւտ եւ հեւքոտ կը հասնէին մինչեւ մեր ծունկերը, իրենց հետ տարուրերելով յատակի խճաքարերը:

Մեր լուսթեան մէջ խճաքարերուն ձայնը տիրապետող էր: Գորեր ամբողջ, ալիքներուն քմալքին ձղուած, իրարու բախելով, խլրրտարով, աղմկելով՝ մաշեր էին քիչ-քիչ: Կարգ մը խճաքարեր սաղմի ձեւ սաացած էին մարդարտացող յոյսերուն պէս, բայց արդէն մեռեր ու քարացեր էին շատ կանուխէն, ու հիմա, անպտուղ երկունքի մը մասնուած՝ այդ սպառող, տաշող մղձաւունջը կը կրկնէին դարերէ ի վեր:

— Մեր խանդավառութիւններն ալ ալիքներուն կը նմանին, — ըսի՝ լուսթիւնը խղելով:

Ալին, լուս, կը շարունակէր խաղալ աւաղին հետ:

— Կը կուտակուին եւ հաղի գաղաթ կաղմած՝ փուլ կու դան...

— Եւ ամէն ինչ կը տափակնայ, — ժպտեցաւ Ալին:

Ճաչէն ետք, յամեցանք ճաշարանին մօտ դանուող ծառերու շուքին:

Այդ ժամերուն գրեթէ լողացող չկար: Մարդիկ քաշուեր էին իջեանները, կամ՝ ծառերու շուքին:

Փամօնակը յառաջացեր էր արդէն: Արեւը սկսաւ արիւնիլ: Հրդեհը ծածկեց հորիզոնն ու ծովը: Անտառին ծառերը հեղհեղէր կը ձուլուէին իրենց ստուերներուն մէջ:

— Եթէ մինչեւ հորիզոնը լողայինք, հիմա արեւուն այնքան մօտ կ'ըլլային:

— Կ'այրէինք, — բսաւ Ալին, — արեւը երբեմն այնքան բարբարոս է...:

— Արգեօ՞ք կռիւները սաստկացան այսօր:

— Մէկ շարաթէն արձակուրդս կը վերջանայ:

Յետոյ՝ երկար ներշնչեց, ու ծովը վիտելով աւելցուց.

— Երբ աշխատանքիս մասին մտածեմ, այնքան ինքնապատահ կը զլսամ:

— Մեր վերամուտն ալ չ'ուշանար:

— Որքան դժբախտ պիտի զգամ, եթէ չկարենամ դործի ըլլալ:

— Որքան բախտաւոր ես: Ինքզինքս ճանչնալէս ի վեր աշակերտ եմ...: Ինծի կը թուի, թէ յաւիտեան ալ աշակերտ պիտի մընամ, հօրս ստակը վատնող: Չեմ գիտեր, թէ ինչ ձեւի մարդ զուրս պիտի գայ ինձմէ:

— Ինչ ահաւոր հրդեհ սփռած է արեւը...: Քու ուսերդ ալ կ'այրին: Սոսկալի է, այնքան պէշ կ'այրին ուսերս, — ըսաւ Ալին՝

դժգոհ չեշտով մը, նոր միայն անդրադառնալով, թէ արեւէն այրած ուսերը զինք կը նեղէին շատ :

— Դեռ քիչ մըն ալ արեւներուն տակ տապալակէիք, — Արփիկ հեղնեց, — սուօք-փասօք մակոյի վարձեցինք, մեզի հետ չեւաք . . . :

Յետոյ՝ անդրադառնալով, թէ ինք ալ իր բաժինը ստացած էր արեւուն ճառագայթներէն՝

— Մի բեր, որ ես ալ նոյն շապիկը հագած եմ. իսկապէս մորթս խորոված ըլլալու է :

Ոչ ոք կը խօսէր : Ձայներիզը լսած էր շատոնց : Միայն շարժակին ձայնն էր, որ միօրինակ ու առանց ընդմիջումի կը լսուէր : Երբեմն միայն դարձուածքներուն վրայ, ինքնաշարժին անիւները կը կազկանձէին, սողա՝ դարձեալ շարժուիին ձայնը կը մնար տիրական : Հրանդ՝ յոգնած աչքերը սեւեւած էր լուսարձակին տակ փախչող ծառերուն :

Արփիկ տարուած էր ինքնաշարժը վարելով :

— Լուռթեան մէջ այնքան աղատ կ'ըլլաս, — ըսաւ Ալին՝ հողիւ լսելի ձայնով մը :

Պատուհանէն ներս խուժող իրիկուան հովր կը զովացնէր մեր այրող ուսերը :

— Տեսակ մը մտերմութիւն քու սեփական անձիդ հետ, — աւելցուց, երկար ընդմիջումէ մը ետք, կարծես փորձի ենթարկելու համար իր կատարելիք հաստատումին վաւերականութիւնը :

Դարձեալ շարժակին միօրինակ ձայնը :

Լուսարձակին հանդիպող ծառերը հատ-հատ կը դատուէին անտառին մութ ու միակտուր զանդուածէն, զինով ու խելազար վաղքով մը կը շտապէին դէպի ետ, դարձեալ ձուլուելու համար մթութեան մէջ : Անտառներով ծածկուած այդ բլուրներն ի վեր ճամբուն դարձուածքները այնքան շատ էին : Եւ դարձուածքներուն՝ ինքնաշարժին անիւները կը կազկանձէին կրկին :

ԱՐԱ ԱՅԵԼԵԱՆ

(Շար. 1)

ԱՆՓՈՒԹՈՒԹԻՒՆ

Զորքսած խինդի փշրանքներով
 Սնունդ մարդոց ողբին հանդէպ՝
 Ես չկրցայ անփոյթ մնալ,
 Հետեւաբար,
 Իմ մարդկայնութեան խորքին մքերուած
 Գանձերս ամէն
 Անոնց վրայ շաղ տուի...

Յետոյ՝ յոգնած ու հանդարտ,
 Ծանօթ-անծանօթ ոտքերու սոջեւ,
 Իմ շողշողուն զգեստներս փոեցի,
 Մինչ հայրուածքներ չարախինդ
 Մերկուրիւս խոցեցին...

ՓՈՔՐԻԿ ԴԵՒԸ

Այն յոյսով, որ ամէն շունչ
 Եւ շնչաւոր ամէն իր
 Պիտի կարենամ հաշտեցնել սրտիս,
 Ընթաստացայ յոյժ,
 Յոյժ մարդկային քերութեանց դէմ,
 Եւ մանր ու քերեւ հարցերու մէջ
 Մխրնուեցայ ես այնքան խոր,
 ...Որ կ'ըսեն, թէ անմեղ մարդիկ
 Իրենց խաղաղ երազին մէջ
 Տարօրինակ բնդմիջումներ ապրեր էին՝
 Իմ դիւստար հոգիին
 Փոքրիկ դեւէն ահաբեկ...



ԻՎԱԿԱԿԱՆ ՀԱՐՎՈՒՆ

Հետագայ գրութիւնը Հարվըրտի համալսարանի անցեալ տարուան Յունիսի շրջանաւարտներուն ուղղուած Ալեքսանդր Սոլժենիցինի պատգամն է, որ օրին երեւցաւ միջազգային մտմունքին մէջ եւ սակը տուաւ ընդարձակ մեկնարանութիւններու:

Մտրդը իր արդար իրաւունքներուն տէր եւ ծաղկման բեղուն մթնոլորտի մը մէջ տեսնելու խորունկ բաղձանքի մը ճիչն է Սոլժենիցինի խօսքը եւ իբր այդ արժանի է ոչազիր ընթերցումի:

Պատգամին հայացումը կատարուած է ու կը մերկայացուի հոս այն յոյսով, որ սոլժենիցինեան որոնումներն ու սուգումները տնարձագանց պիտի չմնան մասն մէր մէջ:



Ա. Ս Ո Լ Ժ Ե Ն Ի Ց Ի Ն

Ս Ո Լ Ժ Ե Ն Ի Ց Ի Ն Ի Պ Ա Տ Գ Ա Մ Ը

Հայացուց
ՏԱԹԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Անկեղծ ուրախութիւնը ունիմ այս առթիւ ձեզի հետ ըլլալու եւ անձամբ այս հին ու մեծահամբաւ համալսարանին ծանօթանալու պատեհութեան համար: Եր-

նորհատութիւններս եւ լաւադոյն մտքթանքներս այսօրուան բոլոր շրջանաւարտներուն:

Հարվըրտի նշանաբանը Veritas (ճշը-

մարտութիւն) է: Չեզմէ շատեր գիտեն արդէն եւ ուրիշներ իրենց կեանքի բնութայքին պիտի սարճին, որ ճշմարտութիւնը կը խուսափի մեզմէ, եթէ մեր ամբողջ ուշադրութիւնը չհեղբոնացնենք՝ զայն հեռացնելու համար: Մինչեւ իսկ երբ մեզմէ կը խուսափի՝ զայն ճանչցած ըլլալու խորոսիկ պատրանքը կը գեղերի մեր շուրջ, որ բարւոյն անհասկացողութեանց կ'առաջնորդէ: Գործեալ, ճշմարտութիւնը հաղուողէն է, որ հաճելի ըլլայ: Անխուսափելիօրէն զանն է է անելու: Արեւ զանութիւն մը այսօր իմ խօսքիս մէջ ալ կայ: Բայց կ'ուզէի շեշտել, որ այլ զանութիւնը կու գայ ո՛չ թէ հակառակորդէ մը, այլ՝ բարեկամէ մը:

Երեք սարիներ աստջ, Միացեալ Նահանգներու մէջ եւ ըսի որոշ բաներ, որոնք այլ չըջանին անընդունելի թուեցան: Այսօր, սակայն, շատեր համաձայն են այլ բաններու: Արտօրուան աշխարհին երկիւղեկումը նշմարելի է նայնիսկ արագ տինարիով մը: Մեր ժամանակակիցներէն սեւէ մէկը պատրաստ է ընդունելու զուլութիւնը երկու մեծ տեղութիւններու, որոնցմէ իւրաքանչիւրը արդէն կարողութիւնը ունի ամբողջութեամբ կործանելու միւսը: Սակայն բաժանման հասկացողութիւնը սահմանափակուած է քաղաքական այս բմբանողութեամբ, ա՛յն խաբկանքով, թէ վտանգը կրնայ ջնջուիլ գիւտնադիտական յաջող բանակցութեանց միջոցաւ կամ զինեալ ուժերու հաստատակցութիւն ստեղծելով: Ըճմարտութիւնը այն է սակայն, որ բաժանումը աւելի խոր է եւ հեռոցեակ տակ յայտնաբերվում է եւ ճեղքումը քանակները աւելի բազմազան երեւներ ունին, քան ա՛յն՝ որ արագ տինարիով մէկը կը նշմարէ: Այս խոր եւ բազմերես երկիւղեկումը կը բովանդակի բազմազան տղտոներ, բոլորիս համար այլ, համաձայն հին այն ճշմարտութեան, որ եթէ թագաւորութիւն մը — այս պարագային մեր երկիրը — ինքն իր մէջ բաժնուած ըլլայ, կը կործանի:

ԵՐՐՈՐԳ ԱՇԽԱՐՀԸ (THIRD WORLD)

Երբորդ Աշխարհի զարգացող կայ: Այսպէսով, արդէն երեք աշխարհներ ունինք: Անկասկած որ թիւը աւելի մեծ է: Մենք սրբապաշտ շատ հետու ենք տեսնել: Արեւէ հին եւ խորապէս արժատացած անկախ մշակույթ, մա՛նաւանդ եթէ տարածուած է երկրի բնագործակ մէկ հասցածասին գրայ, արեւմտեան մտայնութեան համար կը կողմէ անկախ աշխարհ մը՝ աւելցնումներով եւ անտիկալիստիկ յեցուն: Նուազագոյնը այս գասակարգին մէջ պէտք է ընդունինք Չինաստանը, Հնդկաստանը, մահմեդական աշխարհը եւ Աֆրիկէն, եթէ իսկապէս կ'ընդունինք մտասարտութիւնը վերջի՛նը եւս նկատելով սեղմ միւսը: Ծիշող հագար տարիէ ի վեր Ռուսիա կը պատկանէր այս գասակարգին, հակառակ անոր, որ արեւմտեան մտածողութիւնը հետեւողական սխալը գործեց՝ ժխտելով անոր անկախ նկարագիրը եւ, հետեւաբար, երբեք չհասկցաւ զայն, այնպէս՝ ինչպէս այսօր Արեւմուտքը չի հասկնար Ռուսիան՝ համայնաօրը գերութեան մէջ: Կրնայ ըլլալ, որ անցնող տարիներուն ձափանք հեռոցեակ Արեւմուտքի հետաւոր մէկ մասը գարձու: Ես ինքնիրենս գատաւորի հանգամանք չեմ ուզեր տալ, բայց անդրադառնալով Իսրայէլի, օրինակ, ինձի կը թուի, թէ Արեւմուտքէն տարրեր է այն իրողութեամբ, որ իր պետական սխառեւր հիմնապէս կաղուած է կրօնքին: Յարաբերաբար որքան կարճ ժամանակ աստջ, քաղք եւրոպական նոր աշխարհը գիւրաւ եւ ամէն տեղ զարգութիւններ կը գրաւէր, ո՛չ միայն ասանց իրական գիտադրութիւն նախատեսելու, այլեւ սոփորաբար, արհամարհելով արեւէ հասանական արժէք՝ նուաճուած ժողովուրդներու կեանքի մօտեցման մէջ: Արտաքնապէս, կատարեալ յաջողութիւն մըն էր՝ աշխարհագրական ոչ մէկ սահման կար: Արեւմտեան ընկերութիւնը բն-

զարձակուեցաւ մարդու անկախութեան և ուժին յազմանակոյ : Եւ յանկարծ , 20րդ դարուն , յայտնադրեծուեցաւ անոր զիւրաքանչ ևւ խորխոր նկարաչիրք : Հիմա՛ կ'անդրադառնանք , որ գրաւումները կարճատեւ ևւ կանխահաս էին ևւ աւելիա , իր կարգին , ցոյց կու տայ խոցելի երեսները Արեւմուտքի աշխարհահասկեացքին , որ առն առաւ այս գրաւումներուն : Նախկին գաղութարարական աշխարհին հետ յարաբերութիւնները չըջրւած են ևւ Արեւմտեան աշխարհը յաճախ թագմանական ծայրայեղութեան կ'ընթաց . բայց տակաւին գծուար է գնահատել ամբողջ ծանրութիւնը այն հաշուեցոյցին , զոր նախկին գաղութները պիտի ներկայացնեն Արեւմուտքին ևւ գծուար է գուշակել , թէ արդեօք հաշուեցոյցը վրձարելու տակն Արեւմուտքին համար բարտար պիտի բլլա՞յ յանձնել ո՛չ միայն վերջին գաղութները , այլև ամէն ինչ , որ առի :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԴԱՏՈՒՄՆԵՐ

Բայց գերակայութեան կուրութիւնը կը շարունակուի հակառակ ամէն բանի ևւ կը գորտցնէ այն հաւատար , թէ ամէն տեղ , մեր երկրապանտին վրայ դոնտօզ բնդարձակ տարածութիւններ պէտք է դարգանան ևւ հասունան , հասնելոյ մերօրեայ արեւմտեան սրտեմներուն , որոնք տեսականօրէն լուսպոյնն են ևւ գործնականին մէջ ամէնէն զրաւիչները : Այն հաստօքը գոյութիւն ունի , թէ միւս բոլոր աշխարհները ժամանակաւորապէս շար պետութիւններու կողմէ , ծանր աղէտներու հետեւանքոյ ևւ իրենց սեփական բարբարոսութեան կամ արեւմտեան բազմատարր ժողովրդավարութեան եղածը հասկնալու անկարողութեան պատճառով զրկուած են որդեկրելէ արեւմտեան սպերակեղքը : Երկիրները կը դնահատուին այս ուղղութեամբ իրենց

կատարած յոտաջղիմութեան չափանիւշոյ : Սակայն ստիկա մտածելակերպ մըն է , որ դարգացաւ Արեւմուտքի ուրիշ աշխարհներու խտութիւնը հասկնալու անկարողութենէն , բոլորը արեւմտեան չափանիւշոյ գատելէն : Մինչ մեր մոլորակի դարգացման իսկական պատկերը բաւական տարբեր է :

Մեր աշխարհին բաժնուած բլլալու իրողութենէն տուջ եկած տաղնապը ծրնունց առաւ արեւմտեան գլխաւոր պետութիւններու ևւ Սովետ Միութեան հանդիւգման , իբարու մօտեցման տեսութեան : Միխթարոյ տեսութիւն մըն է , որ կ'անտեսէ այն իրողութիւնը , թէ այս աշխարհները բնու շեն դարգանար ևւ շեն աճիլը նմանօրինակ կերպոյ : Ոչ մէկը կը զոխակերպուի միւսին՝ առանց բիրտ սօժի գործածութեան : Տակաւին , իբարու հանդիպումը ևւ մերձեցումը կը նշանակեն բնպունիլ երկրորդ կողմին թերութիւնները . ևւ այս վերջինը երբեք ցանկալի չէ :

Եթէ այսօր իմ խօսքս ուղղած բլլալի իմ երկրիս մէջ դոնուոյ հասարակութեան մը , աշխարհի երկրեկրման բնգհանուր պատկերը քննարկելոյ , պիտի կեղբոնանալի Արեւելքի աղէտներուն վրայ : Բայց քանի որ Արեւմուտքի մէջ ինձի պարտադրուած արտար շար տարին անցաւ , ևւ քանի որ պիտ մտիկ բնոց հասարակութիւնը արեւմտեան է , կը մտածեմ , թէ աւելի հետաքրքրական պիտի բլլայ կեղբոնանալ մեր օրերու Արեւմուտքի կարգ մը երեսներուն վրայ , այնպէս՝ ինչպէս ևւ կը տեսնեմ :

Քաջութեան նուազումը աչքի գարնոց գլխաւոր իրողութիւնն է , զոր գորսնէն գիտող մը կը նկատէ մերօրեայ Արեւմուտքի մէջ : Արեւմտեան աշխարհը կարնչուցած է իր քաղաքացիական քաջութիւնը թէ՛ բնգհանրապէս ևւ թէ՛ մասնաւորաբար , իրաքանչիւր երկրի , իրաքանչիւր կառավարութեան , իրաքանչիւր քաղաքական կառակցութեան ևւ , անշուշտ , Միացեալ Ազգերու մէջ : Քաջութեան աշարխի նուազում նկատուի է մասնաւորաբար գերակար իմբակ-

ցութեանց եւ մատարական յնարանիին ժօռք, սակզծելոյ այն ապաւարութիւնը, թէ ամբողջ ընկերութիւնը կարանցուցած է իր քաջութիւնը: Անշուշտ, շատ բազմահասաներ կան, բայց անոնք սոցիալիստիկացիութիւն չունին հանրային կեանքին վրայ: Բարգաւական եւ մատարական պիւրպրաքները ցոյց կու տան ճշգրտութիւն, կրատականութիւն եւ անբարոյսութիւն իրենց գործերուն, հաստատարներուն եւ, ստակելու՝ իրենց անասկան իտրոպիստութիւններուն մէջ, բացասելու, թէ ինչո՞ւ կրատարուն, տրամարանականութիւն, ինչպէս նաև մրտաւորական եւ նոյնիսկ բարոյական նրկատարներով՝ հրամայական է պետական քաղաքականութիւնը հիմնել տկարութեան եւ վախկոտութեան վրայ: Հեղինակն ա՛յն է, որ քաջութեան պակասը կը շեշտուի երբեմն՝ նա՛յն պիւրպրաքներուն գայլսլթի եւ յամատութեան պատիւամենքով, երբ անոնք գործ կ'ունենան ախար կտաւապարութեանց եւ երկիրներու հետ, որոնք ոչ ոքի պաշտպանութիւնը կը վաշխեն, կամ՝ երբ կը դիմապրուեն հասանքներ, որոնք ոչ մէկ գիտաբանութիւն կրնան ցոյց տայ: Բայց նոյն ալ պիւրպրաքներուն լեզուն կը պտղանձի, երբ գործ կ'ունենան պորտուր պետութեանց եւ սպանացոյ ուժերու, նախադրականութեան եւ միջոցառման ահաբեկիչներու հետ:

ԿԵԱՆՔԻ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ

Պէ՞տք է նշել, թէ հինէն ի վեր, բազմութեան նուազամբ նկատուած է վերջուտարութեան սկիզբը:

Երբ արդի արեւմտեան պետութիւնները սակզծուեցան, հետեւեալ սկզբունքը յայտարարուեցաւ. — պետութիւնները կոչուած են ծառայել մարդուն եւ մարդ կ'ապրի ազատ բոլորու եւ երջանկութիւնը հետապնդելու (օրինակի համար, սեռ,

Ամերիկայի անկախութեան յայտարարութիւնը):

Ե վերջոյ, վերջին տասնամեակներու ընթացքին, թեքնիք եւ ընկերային յաստատարութիւնը կարելի դարձուց իրականացումը աշխարհի ձգտումներու. Բարքը Պետութիւնը (Welfare State) (1): Իւրաքանչիւր քաղաքացիի տրուեցաւ բազմապատկապ պաշտպանութիւնն ու նիւթական հարստութիւնը աշխարհի՝ քանակութեամբ եւ աշխարհի՝ սրակով, որ գէթ տեսականօրէն ապահովէ իրականացումը երջանկութեան, բարոյապէս աւելի ցած մակարդակով բմրոնուած: Ըմբռնուած մը, որ ստաջ կիւս նոյն տասնամեակներուն: Այս հոյսովթիւն մէջ, սակայն, հողերանտեան մէկ մանրամասնութիւն անտեսուեցաւ. — ա՛լ աւելի շատ բան եւ ա՛լ աւելի լաւ կեանք ունենալու մշտական ցանկութիւնը: Չանոնք ձեռք ձգելու պայքարը շատ մը արեւմուտքիներու գէմքերուն վրայ կը վրաջմէ մատուանջութիւն եւ, նոյնիսկ, վհատութիւն, հակառակ տնօր, որ սովորական երեւոյթ է նմանօրինակ զգացումները ծածկել: Խիստ եւ ձգտուած մրցակցութիւն մը կը պատկ մտրկային միտքը՝ ստանց բաց ճամբայ ձգելու հողերու ազատ աճումի եւ զարգացումի: Անհատին արատութիւնը՝ զանազան պետական ճնշումներէ, ապահովուած է: Ժողովուրդին մեծամասնութեան շնորհուած է լաւ կեանքի աշխարհի՝ պայմաններ, զորս իրենց հայրերն ու մեծ հայրերը չէին կրնար տնդամ երազել: Կարելի է երիտասարդները գաստիարակել այս խաչաքնիքով՝ զանոնք առաջնորդելով Փիլիքական շքեղանքի, երջանկութեան, նիւթական ճոխութեան տիրացումին, գրամի եւ զրօսանքի եւ գրեթէ անտահման վաշխիքի: Այնպէս որ՝ հիմա ո՞վ պիտի հրաժարի այս բոլորէն, ինչո՞ւ եւ ի՞նչ բանի համար մարդ պիտի վտան-

(1) Welfare Stateը պետական այն գրութիւնն է, որուն մէջ բազմազանքու բարեկեցութեան հոգ կը տանի նոյնիմէն պետութիւնը: Այս իմաստով կարելի է բարեկեցիկ պետութիւն եւս ըսել: Թարգմանիչ:

դէ իր թանկագին կեանքը հատարակաց արժէքներու պաշտպանութեան սիրոյն, յաւիտապէս աշնալիտի՛ մշուշապատ պարագաներու, երբ մէկու մը ազգին ազատ-հալութիւնը պիտի պաշտպանուի հետաւոր երկրի մը մէջ:

Կենսարանութիւնն իսկ դիտէ եւ կը սարկեցնէ, թէ սովորական դարձած ծայրայեղ ապահովութիւնն ու բարօրութիւնը նպատաւոր չեն սպրոզ օրկանիզմի մը համար: Այսօր բարօրութիւնը արեւմտեան ընկերութեան կեանքին մէջ սկիւսած է յայտնել իր շարամիտ դիմակը:

ԾԱՅՐԱՅԵՂՈՒԹԵԱՆ ԵՐԹԱԼ

Արեւմտեան ընկերութիւնը ինքնիշխան առում է կազմակերպութիւն մը, որ լատուպոն կը պատշաճի իր նպատակներուն, հիմնուած՝ կըրտեմ, օրէնքի տաւին վրայ: Մարդկային իրաւունքներու եւ արդարութեան սահմանները ճշգրտած են օրէնսդրութեամբ: Այդ սահմանները շատ ընդարձակ են: Արեւմուտքի մէջ մարդիկ օրէնքը մեկնարանելու եւ չարաչաճելու մեծ հմտութիւն ձեռք բերած են, հակասակ անոր, որ օրէնքները կը ճրգտին շատ խրթին բլբլ, պարզ մարդու համար մինչեւ իսկ անհասկնալի՝ ասանց մասնապէտի մը օգնութեան: Արեւէ տարակարծութիւն կամ վէճ կը լուծուի՝ համաձայն օրէնքի տաւին եւ տիրիկա կը նկատուի գերադաս լուծում: Եթէ մէկը արդար է օրինական տեսակէտէ, ուրիշ օշինջ կը պահանջուի: Աչ ոք կրնայ ըսել, թէ ամբողջութեամբ արդար չի կրնար բլբլ եւ թեկադրել ժուժկալութիւն, նմանօրինակ օրինական իրաւունքներէ հրաժարելու կամեցողութիւն, զոճողութիւն եւ անշահախնդրօրէն վտանգի ենթարկուի: Այս բարբր անհեթեթութիւն պիտի թուին:

Դժուար է կամաւոր ինքնազոհում տեսնել: Ամէն մարդ կը գործէ օրէնքի

չըջաղձին մէջ: Օրինակ, քարիւղի ընկերութիւնն մը օրէնքին առջեւ դատապարտելի չէ, երբ անոր գործածութիւնը արդիւրէւ նոր տեսակի ուժանիւթ մը կը գնէ: Մննդեղէն արտադրող մը օրինական տեսակէտէ անպարտ է, երբ կը թունուորէ իր արտադրութիւնը, աւելլի կրկար ժամանակ դալն պահելու համար: Ի վերջոյ, մարդիկ ազատ են շղնելու:

Ես կեանքս ամբողջ անպաշտ էմ համայնափար կարգերու տակ եւ ձեզի կ'ըսեմ, թէ ընկերութիւն մը՝ առանց օրէնքի տարակայան աստիճանաշարի, խկապէս որ սարսաիկի ընկերութիւն մըն է: Բայց ընկերութիւն մը՝ առանց ուրիշ աստիճանաշարի, բացի օրինակաւէն. դարձեալ մարդուն բուարարութիւն չի տար: Ընկերութիւն մը, որ հիմնուած է օրէնքի տաւին վրայ եւ երբեք աւելի բարձրին չի ձգտիր, հաղուողէպ է, որ կարենայ օգտուիլ մարդկային բարձր կարելիութիւններէն: Օրէնքի տառը շատ սասն եւ պաշտօնական է՝ բարեբար սպգեցութիւն ունենալու համար ընկերութեան վրայ: Երբ կեանքի բլբլները հիւսումն են օրինական յարաբերութիւններով, կը սակզծուի բարոյական միջակութեան միջոցարտ մը, անշարժութեան դատապարտելով մարդուն ամենաազնիւ ճրգտումները:

Պարզապէս անկարելի պիտի ըլլայ կուրծք տալ դարուն սպառնացող փորձութիւններուն, միայն օրինականութեան կատայլին օժանդակութեամբ:

Այսօրուան արեւմտեան ընկերութեան մէջ յայտնուած է բարիք գործելու ազատութեան եւ չարիք գործելու ազատութեան անհատաարութիւն:

Պետական մարդ մը, որ կ'ուզէ կարելուր եւ մեծապէս օգտակար գործ մը բնել իր հայրենիքին համար, պէտք է չարժի խոհեմութեամբ եւ նոյնիսկ վախով: Աճապարոզ եւ անպատասխանատու հողարտուր քննադատներ կան իր շուրջ խորհրդարան եւ մամուլ զինք միշտ կը հեղնեն. երբ սկսի շարժիլ, պէտք է փախտակ, թէ իր իրաքանչիւր քայլը շատ հատատուն եւ բացարձակապէս կատարեալ

է: Սորքին մէջ, սակայն, նշանուոր եւ բացառապէս շնորհալի անձ մը, որ բացառիկ եւ աներեւակայեցի ծրարիքներ ունի իր մտքին մէջ, զժուար թէ առիթ ունենայ ինքզինք արտայայտելու: Սկիզբէն խոյ տասնեակներով թակարդներ կը բարուին իրեն համար: Այսպէսով, միջոցութիւնը կը յաղթանակէ արդարացումովը այն արգելքներուն, որոնք ժողովրդավարութեան կողմէ կը պարտագրուին:

ԻՐԱԽԱՆՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻԻՆ

Կարելի է եւ դիւրին ամէն տեղ թերահաճատել դործադիր իշխանութիւնը, որ խորքին մէջ ազիտալիտէն տկարացած է արեւմտեան բոլոր ընկերութիւններուն մէջ: Անհատական իրաւունքներու պաշտպանութիւնը հասած է այնպիսի՝ ծայրայեղութիւններու, որ ընկերութիւնը ամբողջ անպաշտպան դարձուցած է կարգ մը անհատներու դիմաց: Արեւմտաբլի մէջ ժամանակն է պաշտպանելու ո՛չ այնքան մարդկային իրաւունքները, որքան պարտաւորութիւնները:

Կործանարար եւ անսպասախանատու ազատութեան շնորհուած է անտահման ասպարէզ:

Ընկերութիւնը կը թուի, թէ շատ քիչ պաշտպանութիւն ունի ընդդէմ մարդկային ստորնութեան վիճերուն: Այսպէս, օրինակի համար, ազատութեան շարաշահութիւնը երիտասարդներու դէմ դործուած բարոյական բռնութեան, շարժանկարներ՝ պոստկոպրութեամբ, սճիրներով եւ սարսափով լեցուն: Կենթագրուի, թէ ազատութեան մաս կը կազմէ եւ հաւասարակշռուած է երիտասարդներու չգիտելու կամ մերժելու իրաւունքով: Օրինականութեամբ կազմակերպուած կեանք մը այսպէսով ցոյց տուած է իր անկարողութիւնը՝ ինքզինք պաշտպանելու շարի փտութեան դէմ:

Ի՞նչ կրնանք բսել նոյնինքն ոճիրի սեւ իշխանութեան մասին: Օրինականութեան սահմանները (մա՛նսուանդ Միաց-

եալ Նահանգներու մէջ) բառ բառականի լայն են՝ քաջալերելու համար ո՛չ միայն անհատական ազատութիւնը, այլեւ՝ անհատական որոշ սճիրներ: Յանցապարտը կրնայ անպատիժ ձգուել կամ անտեղի զթասրտութեան կ'արժանանայ հանրային հազարաւոր պոշտպաններու օգնութեամբ: Եբբ պետութիւն մը սկսի լուրջ պայքար մղել ահաբեկչութեան դէմ, հանրային կարծիքը անմիջապէս կ'ամբաստանէ զայն՝ ահաբեկիչներու քաղաքացիական իրաւունքները բռնաբարելու յանցանքով: Նման բազմաթիւ պարտադրուներ կան:

Այրատութեան ալսպիտի խեղճեղ արշաւ մը՝ չարի՛ն ուղղութեամբ, առաջ եկաւ տափճանաբար. բայց յալածապէս ծնաւ գլխաւորաբար մարդկայնապաշտ եւ բարեմիտ այն իմացումէն, ըստ որուն՝ բնածին շարութիւն չկայ մարդկային բնութեան մէջ: Աշխարհը մարդուն կը պատկանի եւ կեանքի բոլոր թելութիւններուն պատճառը ընկերային սխալ կարգ ու սարքերն են, զորս սրբագրել պէտք է: Բաւականին տարօրինակ է, թէ հակառակ տնոր, որ ընկերային բաւազոյն պայմանները իրազործուած են Արեւմտաբլի մէջ, տակաւին ոճիր կայ եւ տակաւին շա՛տ տւելին կայ, քան ա՛յն՝ որ դոյնութիւն ունի իտեղճ, չքաւոր եւ տնորէն Սոյեւո ընկերութեան մէջ: (Հրոկայական թիւով բանտարկեալներ կան մեր կեդրոնական ճամբարներուն մէջ, որոնք սճրագործ կը կոչուին, բայց անոնցմէ շատեր ոչ մէկ ոճիր գործած են: Անոնք պարպապէս փորձած են իրենք դիւրեւը պաշտպանել օրէնք չսնեցող պետութեան մը դէմ, օգտագործելով միջոցներ, որոնք զուրս կը մնային օրինականութեան մը շրջադիճէն):

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՆ

Անշուշտ մամուլը եւս կը վայելէ ծայրայեղ ազատութիւն (մամուլ բառը պիտի դործածեմ ներառնելով ամէն տեսակ միջոց): Բայց այս ազատութիւնը

ի՞նչ բանի կը գործածէ մամուլը :

Այստեղ եւս գլխաւոր մտահոգութիւնը օրէնքի տառին սոսժաններուն մէջ մնալն է : Բարոյական ոչ մէկ պարտաւորութիւն՝ աշխարհայեցողական կամ անհամեմատութեան նկատմամբ : Ի՞նչ պարտաւորութիւն ունի մամուլը գործակալ մը իր ընթերցողներուն կամ պատմութեան նկատմամբ : Եթէ անոնք սխալ ուղղութեան առաջնորդած են հասարակութիւնը կամ պետութիւնը, անճիշտ տեղեկութիւններով կամ սխալ եզրակացութիւններով, ունի՞նք որեւէ պարագայ, որ սրահանջը դնէ աշխարհի սխախտութեան հրապարակային խտտոյանութեան կամ սրբազրութեան՝ նա՛յն մամուլը գործակալէն կամ թերթէն : Ա՛յ չմտն բան չի պատահիր . սրովհետեւ ասիկա վաճառման պիտի մնասէ :

Ազդ մը կրնայ զո՛րք ըլլալ նման սրխալի մը, բայց մամուլը գործակալ մը միշտ կ'ազատի : Կարելի է աղահոգաբար ենթադրել, թէ ան պիտի սկսի գրել հակառակ բանը, նորոգուած ինքնախառնութեամբ :

Որովհետեւ արագ եւ ընդունելի լուրեր տէ՛տք է արուին, անհրաժեշտ կը դաննայ ուրեմն ղիմել երեւակայութեան, գրոյցներու եւ ենթագրութեանց՝ պարագ էջերը լեցնելու համար, եւ ոչ մէկը պիտի սրբազրուի : Անոնք պիտի շարունակեն մնալ ընթերցողի յիշողութեան մէջ : Արտք, աճաս, մակերեսային եւ մութրեցուցիչ քանի հաստատումներ կը կատարուին ամէն օր, շփոթի մատներով ընթերցողները, հետադային առանց սրբազրութեան կամ ճշդումի ենթարկուելով : Մամուլը կրնայ թէ՛ հանրային կարծիքը կազազարել եւ թէ սխալ ընթացք տալ անոր : Այսպէս, կրնանք տեսնել աճարեկիչներու հերոսացումը, կամ դադանիքներ, որոնք ազդի մը աղահոգութեան հիմքն են, հրապարակաւ կը յայտնուին . կամ՝ վիպաները կը դառնանք հանրածանօթ անձի մը մտերմիկ կեանքին ամօթալի ներխուժումին, ա՛յն նշանաբանով, թէ «ամէն օր իրաւունք ունի ամէն բան գիտնալու» : Բայց ասիկա սխալ նշանաբան

մըն է, եւ յատուկ՝ կեղծ ժամանակաշարձանի մը : Մարդիկ իրաւունք ունին նաեւ չգիտնալու եւ այս մէկը աւելի արժէք կը ներկայացնէ : Իրաւունք՝ իրենց աստուածային հողին շխճողելու բամբասանքով, յիմարաբանութեամբ եւ պարագրանութեամբ : Անձ մը երբ կ'ազդի խառնալից կենսո՞ր մը, պէտք չունի կրելու յաւելեալ բեռը այս առատահոս յուրերուն :

Աճագրանքն ու մակերեսայնութիւնը հողեկան ախտերն են Ի . դարուն եւ այս ախտերը, ուրիշ տեղէ աւելի՝ կ'արտացոլան մամուլին մէջ : Հարցին խոր վերլուծումը մամուլին նդովքն է . անիկա կանգ կ'առնէ զգայացունց խորագիրներու առջեւ :

ԴԵՊԻ ՀՕՏ ԶԳՏՈՒՄԸ

Այսպէս ըլլալով հանդերձ, մամուլը մեծադոյն ուժը դարձած է արեւմտեան երկիրներու մէջ, աւելի՛ գորաւոր, քան օրէնսդրական, գործադիր եւ դատական իշխանութիւնները : Մարդ կ'ուզէ հարց տալ : Ի՞նչ օրէնքով ընտրուած է եւ որո՞ւն պատասխանատու է : Համայնավար Արեւելքի մէջ մամուլը գործակալ մը բացայայտօրէն կը նշանակուի իբրեւ պետական պաշտօնեայ : Արեւմուտքի մամուլը գործակալներուն ո՞վ շնորհած է իրենց ուժը . որքա՞ն երկար ժամանակ եւ ի՞նչ առանձնաշնորհումներով :

Տակաւին ուրիշ անակնկալ մըն ալ վերագրահուած է Արեւելքէն եկողի մը համար, ուր մամուլը խտտօրէն միաճուլուած է : Հետզհետէ մարդ կ'անդրադառնայ, թէ արեւմտեան մամուլին մէջ, ընդհանրապէս, նախասիրութիւններու հասարակաց գիծ մը կայ : Նորո՛յթ է . գառողութեանց ընդհանուր եւ ընդունուած ձեւեր կան եւ կրնան հասարակաց շահեր ըլլալ, որոնց ձգած ընդհանուր արտաբերութիւնը մրցակցութիւն չէ, այլ՝ նոյնութիւն : Մամուլին համար հակալա-

կան ազատութիւն կայ, բայց ո՛չ՝ ընթերցողներուն համար, որովհետեւ թերթերը բնականապէս բաւարար չեն կը դնեն եւ ճշուամ կը բանեցնեն ի նպատակն տեսակէտներուն, որոնք յայտնապէս չեն հակասեր իրենց տեսակէտներուն եւ բնականոր հասանքին:

Որեւէ պարբնութեան ենթակայ չըլլալով, Արեւմուտքի մէջ մասձերակերպի նորոյթ հասանքներ գոյուցութեամբ ստանձնացուած են աննցմէ, որոնք նորոյթ չեն: Ոչինչ արգիլուած է: Բայց ա՛յն՝ որ նորոյթ չէ, պժուար թէ տեղ պանէ պարբերաթերթերու կամ պիւբլիքու մէջ եւ կամ լուրի երկրորդական վարժարաններէ ներս: Ըստ օրինի, ձեր պիտաշխատողները ազատ են: Բայց պայմանաւորուած են օրուան նորոյթով: Բացորոշ բոնութիւն պոյութիւն չունի, այնպէս՝ ինչպէս կայ Արեւելքի մէջ: Սակայն նորոյթով պայմանաւորուած ընտրութիւն մը եւ պանդուածային չափանիշներուն պատշաճերու կարիքը կ'արդիւնն անկախ մասնագութեան տէր մարդոց իրենց նպատար բերելու հանրային կեանքին: Վտանգաւոր շարժում մը կայ հոս կազմելու՝ դո՛ւրս վանելու համար մեծ իրազորութիւնները: Ամերիկայի մէջ, ես նամակներ ստացած եմ իմացական բարձր կարողութեամբ օժտուած բայմաթիւ մարդոցմէ, թերեւս հեռուոր երկրորդական վարժարանի մէկ ուսուցչէն, որ իր հայրենիքին վերանորոգութեան եւ փրկելութեան համար շատ բան կրնայ ընել, բայց իր հայրենիքը չի կրնար լսել դինք, որովհետեւ մամլոյ պարձակալները իրմով չեն հետաքրքրուած: Ասիկա պատճառ կը գաննայ հանրային զօրաւոր նախադաշարութիւն, կուրութեան, ինչ որ շատ միտասկար է մեր յարաշարժ դարաշրջանին: Օրինակի համար, կայ ինքնախաբէական մեկնարանութիւնը արդի աշխարհի կացութեան: Անիկա կը գործածուի քարացած դրահի նման պատ շինելու մարդոց մտքերուն շուրջ: Արեւելեան Եւրոպայի եւ Արեւելեան Ասիոյ տաննեւթը երկիրներու մարդկային ճիշերը անգոր են ծակելու գայն: Պիտի

Չախճախուի պէտքերու անգութ լծակով մեխին:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐ

Արդէն յիշեցի արեւմտեան կեանքի յատուկ քանի մը յատկանշական դիժեր, որոնք անակնկալի կը բերեն եւ կը պնդեն այս աշխարհը նոր ժամանակ մը: Այս բանախօսութեան նպատակն ու սահմանները չեն թոյլատրեր ինձի՝ շարունակելու նման վերատեսութիւն մը, տեսնելու, թէ ի՞նչ ազդեցութիւն կ'ունենան արեւմտեան յատկանշական այս դիժերը ազդի կեանքին կարեւոր երեաներուն վրայ, ինչպէս նախակրթութեան, եւ մարդկային սեմանց ու արուեստներու մարդբէն ներս՝ բարձրագոյն սեման վրայ:

Ամէնուրեք բնոյնուած իրազութիւն է, թէ Արեւմուտքը ամբողջ աշխարհին համբայ մը ցոյց տուաւ պէտք տեսնական արդիւնաւէտ յատաջլիմութիւն, հապտակ անար, որ վերջին տարիներուն մեծապէս ցնցուեցաւ ան կեանքի սղութեան քառսոյին միճակէն: Սակայն Արեւմուտքի մէջ ապրողներէն շատեր պրժգոհ են իրենց սեփական բնկերութենէն: Կ'արհամարհեն գայն կամ կ'ամբաստանեն՝ մարդկութեան նուաճած հասունութեան մակարդակին հասած չըլլալու իրողութեամբ: Նման զննողատներէն շատեր կը հակին բնկերութեան, ինչ որ սխալ եւ մտանպաւոր շարժում մըն է:

Կը յուսամ, թէ ներկաներէն ոչ ոք մտքէն կ'անցընէ, թէ արեւմտեան պրոթեան նկատմամբ իմ կատարած անձնական զննողատութիւններս նպատակ ունին բնկերութեանը ներկայացնելու իրբեւ անխուստիելի լուծում: Կիրարկելու ընկերութեանը ապրելէ ետք երկրի մը մէջ, ուր այս լուծումը գործադրուած է, եւ, ապահովարար, նպատաւոր խօսք պիտի չդաննմ բսելու անոր մասին: Սովետ հանրածանօթ մաթեմա-

թիկոս Ծափարեւելէ, յանդամ Սոսկետական Գրատութիւններու: Ակադեմիային, բացառիկ գիրք մը գրած է՝ «Քնկերվարութիւն» վերնադրոյ: Սոր վերլուծական մըն է, որ ցոյց կու տայ, թէ որեւէ տեսակի եւ գոյնի բնկերվարութիւնը կրտաճնորդէ մարդկային հոգիի ամբողջական կրթմանման եւ մարդկութիւնը կը հասցնէ եւ կը տափաղցնէ մահուան տառիճանին: Ծափարեւելի գիրքը մօտ երկու ասորի աստղ տպուեցաւ: Ֆրանսայի մէջ եւ ցարդ մէկը չդոնուեցաւ, որ հեղէր գոյն: Մօտիկ ազգայային, անդիւրէն լեզուով պիտի հրատարակուի Միացեալ Նահանգներու մէջ:

Իսկ եթէ գտնուի մէկը, որ ինծի հարցրնէ, թէ արդեօք մասողի՞ր եմ Արեւմուտքը, այնպէս՝ ինչպէս որ է, իբրեւ տիպար ներկայացնել իմ երկիրս համար, անկեղծօրէն բսեմ, որ ժխտական սրտատխան պիտի տամ: Ո՛ր: Չե՛մ կրնար ձեր բնկերութիւնը իր այժմու վիճակին մէջ յանձնարարել,՝ մեր բնկերութեան վերափոխման համար: Մեծ տառապանքի դնով մեր երկիրը այժմ յաջողած է իրականացնել հոգեկան դարգացում մը, այնքան՝ զօրեղ, որ արեւմտեան դրութիւնը հոգեկան յոյնածութեան իր այժմու վիճակին մէջ գրաւիչ չի թուիր: Նոյնիսկ այն յատկանշական դիժերը, զորս քիչ աստղ թուեցի, շատ ախուր կ'երեւան:

Անժխտելի իրողութիւնը ա՛յն է, որ Արեւմուտքի մէջ մարդիկ կը տկարանան, մինչդեռ Արեւելքի մէջ աւելի տոկուն եւ աւելի զօրեղ կը գտնան: Վեց տասնամեակ՝ մեր ժողովուրդին համար, եւ երեք տասնամեակ՝ Արեւելեան Եւրոպայի ժողովուրդին համար. այս շրջանին մենք անցանք հոգեկան զարգացման մը մէջէն, որ Արեւմուտքի փորձառութեան շատ աւելի տաղացած էր: Կեանքի բարդ վիճակները եւ մահապին ծանրութիւնը աստղ բերին աւելի՛ ներուժ, աւելի՛ խորունկ եւ աւելի՛ հետաքրքրական տիպարներ, քան ինչ որ արտադրեց օրինաչափած արեւմտեան բարեկեցութիւնը:

Ահա թէ ինչո՛ւ, եթէ մեր բնկերու-

թիւնը պիտի փոխակերպուի ձերինին, բարեբաւում մը պիտի արձանագրէ՝ որոշ մարդերէ ներս: Բայց նաեւ պիտի արձանագրէ փոփոխութիւն գէպի վատը, մեծապէս կարեւոր որոշ սեղանութիւններով: Ոչ մէկ կրտաճ, որ բնկերութիւն մը չի կրնար մնայ տնօրէնութեան դոքսին մէջ, ինչ որ է պարագան մեր երկրին: Բայց իրեն համար վարկարեկիչ է նաեւ բնութի մեքենական աշտպիսի օրինակունութեան հեղաշահութիւն, որ զուր ունիք: Տասնամեակներու բնութեան եւ ճնշումներու տառապանքը ապրելէ ետք, մարդկային հոգին կը ցանկայ աւելի բարձր արժէքներ, աւելի մարուր եւ աւելի ջերմ, քան ա՛յն, որ կը մատուցանեն աշտարանի զանգուածային կեանքի սոփութութիւնները, ներկայացուած՝ յայտարարութեանց զգուշիկ յարձակումով, պատկերասիրութեան անողաչափութեամբ եւ անհանդուրժելի երաժշտութեամբ:

Այս բոլորը տեսանելի են մեր մարտիկ բոլոր պիտայնեարուն համար: Արեւմտեան ապրելակերպը հեղահեղ աւելի կատկածելի ատաճնորդող տիպարը բոլոր կը թուի:

**ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Կան նշանակալից ազդարարութիւններ, զորս սրտամութիւնը կու տայ մըտանդուած կամ կրթմանող բնկերութեան: Այսպիսիք են, օրինակ, արուեստին այրասերումը կամ պետական մեծ գէմբերու պակասը: Բացայայտ եւ որոշ սողաբարութիւններ ալ կան: Մեր ժողովրդավարութեան եւ ձեր մշակոյթի կեդրոնը քանի մը ժամուան համար միայն տանց ելեկարականութեան կը մնայ եւ, յանկարծ, ամերիկեան քաղաքացիներու ամբոխ մը կը սկսի կողոպտել եւ աւերածութիւն սխտել: Ուրեմն, արտաքին

հանդարտ պատկերը պէտք է նօսր եղած ըլլայ, մինչդեռ ընկերային գրութիւնը՝ լրջօրէն անկաշուն եւ վառասողջ:

Մակայն մեր մոլորակին համար մըդւած թէ՛ Ֆիզիքական եւ թէ՛ հոգեկան պայքարը, տիեզերական համեմատութեամբ, ապագայի մէկ անորոշ հարցը չէ: Արդէ՛ն իսկ սկսած է: Չարին ուժերը անցած են իրենց մտական յարձակութեանն: Կը պար անոնց ճնշումը եւ սակայն ձեր պատաստները եւ հրատարակութիւնները լեցուն են նախատեսմանում ժպիտներով եւ բարձրացում բաժաններով: Հա՞րցը ինչ է:

Ձեր ընկերութեան հանրածանօթ ներկայացուցիչներէն մէկը՝ Ճորճ Քէննըն կ'ըսէր — Ձեռք կրնար բարոյական չափանիշներ կերարկել քաղաքականութեան մէջ: Այսպիսով բարին եւ չարը, ճշմարիտն ու սխալը կը միախառնենք եւ գեպին կը պատրաստենք բացարձակ չարին, աշխարհի մէջ ամենի բացարձակ յագթանակին: Ընդհակառակն, միայն բարոյական չափանիշներ կրնան օգնել Արեւմուտքին, համայնապարութեան լուստէս ծրարութեամբ համաշխարհային սոցիալարութեան գէտ: Ուրիշ չափանիշներ չկան: Գործնական կամ պատահական ամէն ձեւի նկատողութիւն մէկգի պիտի չարտուի սոցիալարութեան կողմէ: Հարցին սրտ մէկ ատիճանէն սնդին, չոր օրինապաշտ մտածելակերպը անօրնական վիճակի կը մտանէ եւ կ'արգիլէ հասկնալ գէղքերու տարողութիւնն ու խմատը:

Հակառակ տեղեկութեան առատութեան, թերեւս ալ ա՛յդ պատճառով, Արեւմուտքը զժուարութիւններ ունի իրականութիւնը տեսնելու ա՛յնպէս՝ ինչպէս սր է: Պարզամիտ գուշակութիւններ կատարուեցան ամերիկացի կարգ մը մասնագէտներու կողմէ, որոնք կը հաւատային, թէ Անկորան պիտի վերածուէր Սփիտ Միութեան Վիեթնամին, կամ Քուպայի աիբիկեան արշաւանքները կասեցրնելու լուսադրոյն ձեւը՝ Քուպայի հանգէպ Ամերիկայի բռնած քաղաքավար ընթացքը պիտի ըլլար: Քէննընի խրատը իր

հայրենիքին — միակողմանի ապագինման սկսիլ — կը պատկանի նայն այս դասակարգին: Եթէ միայն ղրտնայի՛ք, թէ Մոսկուայի Հին Հրատարակի ամենաերեստարգ պաշտօնատարը ինչպէ՛ս կը խնդայ ձեր քաղաքական կախարղներուն վրայ: Գալով Յիտէլ Քասթրոյի, բացառապարէն կը վարկարեկէ Միացեալ Նահանգները՝ իր զօրքերը զրկելով հետաւոր արկածախնդրութիւններու, ի՛ր երկրէն, որ ճիշդ ձեր հայրենիքին կից է:

ԱՆՈՂՈՐՄ ՍԵԱԼԸ

Եւ սակայն ամէնէն անսղորմ սխալը տառջ եկաւ Վիեթնամի պատերազմը հասկնալու ճախողութենէն: Ոմանք անկեղծօրէն ցանկացին բոլոր պատերազմներու դադարեցումը, ո՛րքան կարելի է՝ ա՛յնքան շուտ: Ուրիշներ կը հաւատային, թէ առիթ պէտք է տրուի տղապին կամ համայնալար ինքնորոշման Վիեթնամի թէ Քամպուիոյ մէջ, ինչպէս այսօր բացառապար յատկութեամբ կը տեսնենք: Բայց Միացեալ Նահանգներու հակապատերազմ շարժումի անդամները թեքինքնին դտան բռնուած Ծայրադրոյն Արեւելքի աղքերու դաւաճանութեան մէջ, հոն ապրող երեսուն միլիոն ժողովուրդի ցեղասպանութեան եւ այսօր անոնց պարտագրուած տառապանքին մէջ: Այդ համոզում խողազատները կը լրսեն անկէ Եկոյ հեճեճանքները: Այսօր կ'անդրադառնա՞ն իրենց պատասխանատարութիւններուն: Կամ՝ չլսե՞լ կը նախընտրեն: Ամերիկայի մտաւարական ընտրանին իր ջիղերը կորննցուց եւ, ասօր իբր հետեւանք՝ վտանգը աւելի մօտեցաւ Միացեալ Նահանգներուն: Գրթբախտարար, այս իրողութեան սնդրագարձող չկայ: Ձեր կարճատես քաղաքագէտները, որոնք Վիեթնամի արդ սնձնատուութիւնը ստորագրեցին, յայտնապէս Ամերիկայի տուին անհոյ ու հան-

գլխատ շունչ առնելու առիթ մը: Բայց հարիւր տեսակ Վլեթնամներ կը սպառնան ձեզի: Այդ փոքր Վլեթնամք ազդարարութիւն մը, առիթ մըն էր՝ զօրակոչի ենթարկելու ազդին քաջութիւնը: Բայց եթէ փարթամ Ամերիկան իսկական պարտութիւն մը կրեց փոքր և և կիսուած համայնավար երկրէ մը, Արեւմուտքը ինչպէ՞ս կը յուսայ ազգային հաստատուն մնալ:

Ես նախապէս առիթը ունեցած եմ բնելու, որ 20րդ դարուն արեւմտեան ժողովրդավարութիւնը ոչ մէկ մեծ պատերազմ չահած է՝ առանց եւրոպական դաշնակիցի մը օգնութեան և պաշտպանութեան: զաշնակից՝ որուն փիլիսոփայութիւնը և պաշտպարարանութիւնը հարցականի տակ չէ գրած ան:

ՈՒՐԻՇ ՈՒԺ

Համաշխարհային Երկրորդ պատերազմի ընթացքին, փոխանակ այդ պատերազմը շահելու իր սեփական ուժերով, որոնք փոտահարար բաւարար պիտի բլլային, արեւմտեան ժողովրդավարութիւնը մշակեց և աճեցուց ուրիշ թշնամի մը, որ պիտի դամար անելի շար և տւելի զօրուար, քան նախկինը, քանի որ Հիթլէր երբեք չունէր այսքան լայն օժանդակութեան աղբիւրներ և այսքան ժողովուրդ: Ոչ ալ այսքան քաջողական և պարտիչ դադափարներ կը մատուցանէր և այսքան շատ համակիրներ ունէր Արեւմուտքի մէջ — ի կարողութեան ճինդերուրդ զօրասին մը — ինչպիսին է Խորհրդային Միութիւնը: Ներկայիս Արեւմուտքի մէջ կը լսուին ձայներ, որոնք արդէն իսկ կը խօսին երրորդ ուժէ մը օգնութիւն ստանալու մասին, համաշխարհային երրորդ բախումի մը պարագային, եթէ երրորդ ուժ գոյութիւն ունի: Այս անգամ վահանը պիտի հանգիստնայ Զինաստանը: Բայց ես նման ճա-

կատաղիւր պիտի չմտղթէի աշխարհի վերայ որեւէ երկրի: Նախ՝ այս մէկը զբարիւտ դաշնակցութիւն մըն է շարին հետ: Յետոյ՝ կրնայ Միացեալ Նահանգներուն գաղար մը շնորհել: Բայց երբ ժամանակ մը կտր, Զինաստանը իր պիլիսոն մը ժողովուրդով դէմ կլլէ, զինուած տմերիկեան զէնքերով, Ամերիկան ինքը որս պիտի դատնայ ցեղասպանութեան մը, նման անո՛ր, որ մեր օրերուն կը գործադրուի Քամպուտոյ մէջ:

Աւելի՛ն. ոչ մէկ զէնք, ոչ մէկ բան, որքան ալ զօրուար բլլայ, կրնայ Արեւմուտքին օգնել, մինչև որ ինք չյաղթահարէ իր սեփական կամադրկութիւնը: Հայեկան տկարութեան փիճակին մէջ՝ զէնքերը բն կը դասնան յանձնուող կողմին համար: Ինքզինք պաշտպանելու պարագային մէկը պէտք է նաև մեռնելու պատրաստ բլլայ: Այսպիսի շատ քիչ պատրաստակամութիւն կայ բնիկութեան մը մէջ, որուն անպամները կը մեծնան նիւթական բարօրութեան պաշտամունքով: Հետեւորար, ոչինչ կը մնայ բացի զիջումներէ, ժամանակ շահելու փորձերէ և դաւաճանութենէ: Այսպէս, Պելիբատի տաօթալի ժողովին ազատ արեւմուտքի զիւանազէտներ, իրենց արկարութեան մէջ լքեցին ա՛յն զիւրքերը, որոնց համար Հեթիքի սկզբունքներուն զործադրութեան հակադ խմբակին դերեվարեալ անպամները իրենց կեանքը կը զահարերեն:

Արեւմտեան մատոնդութիւնը պահպանողական գարձած է: Համաշխարհային կացութիւնը պէտք է եղածին պէս մնայ որեւէ դեմով: Ոչ մէկ փոփոխութիւն պէտք է կատարուի: Status quoի անդօրութեան մատնող այս երազը, նախանըշանն է ընկերութեան մը, որ հասած է իր զարդացման վախճանին: Բայց կոյր պէտք է բլլալ շտեմնելու համար, որ փիլիսոսները այլևս չեն պատկանիր Արեւմուտքին, մինչ իր տիրապետութեան տակ դոնուող ցամաքամար սկսած է կծկուիլ: Այսպէս կոչուած համաշխարհային պատերազմները պատճառ հանգիստցան յառաջադէմ Արեւմուտքի ներ-

քին ինքնակործանման, որ աշտպիտով պատրաստեց ի՛ր իսկ վախճանը: Յո՛ւրազ պատերազմը (որ անպայմանօրէն կրնայ աթոճական շրջալ և ևս չեմ հատարար, որ պիտի ըլլայ) կրնայ արեւմտեան քաղաքակրթութիւնը թաղել յաւիտեանապէս:

Աշտպիտի վառնակ մը առջեւ գտնուելով, ա՛յլքան պատմական արժէքներ ունենալէ ետք ձեր անցեալին մէջ, ապառաւթեան ա՛յլքան բարձր աստիճանի իրազարծումէն յետոյ ևս յայտնապէս ապատութեան ա՛յլքան նուիրուածութեամբ, ինչպէ՞ս կարելի է աշտան մե՛ծ չափով կորսնցնել ինքզինք պաշտպանելու կամքը:

ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ԱՆԿՈՒՄԸ

Ինչպէ՞ս պատահեցաւ ուժերու այս աննպաստ գոտաւորումը: Արեւմուտքը ինչպէ՞ս իր յաղթական երթէն ինկաւ ներկայի հիւանդութեան մէջ: Ճակատագրական դարձակէտեր կամ դարդացման ընթացքին ուղղութիւն կորսնցնելու պարտաներ կայի՞ն: Հաւանական չի թուիր: Արեւմուտքը շարունակեց բնկերային տեսակէտէ զարդանալ՝ համաձայն իր իսկ հուշակած սկզբունքներուն, ճարտարագիտականօրէն վալլուն յառաջդիմութեան օժանդակութեամբ: Եւ յանկարծ ինքզինք գտաւ իր ներկայ տխուր վիճակին մէջ: Ատիկա կը նշանակէ, թէ սխալը արձատեն էր, կա՛ր՝ նախորդ դարերու մարդկային մտածողութեան հիմունքներուն մէջ: Կ՛ակնարկեմ աշխարհի մասին արեւմտեան տիրող մտածելակերպին, որ ծնու Վերածնունդի ընթացքին և իր քաղաքական արտայայտութիւնը գտաւ Լուսաւորութեան դարուն: Անոր վրայ խորրոտեցան կոտախորտութիւնը և բնկերային գիտութիւնները և որ կրնայ սահմանաւելի իրբեւ արձարանական հիւսնանիզով կամ հիւսնանիարիք ինքնիշխանութիւն: Հռչակուեցաւ և կիրարկուեցաւ

մարդուն անկախութիւնը՝ իրմէ վեր գտնուող բարձրագոյն սրելէ ուժէ: Ատիկա կրնայ կոշտիլ նաեւ մարդակեղրուեցանուրիւն, մարդը նկատելով կեղրունական իրտկանութիւնը ամէն ինչի, որ գոյութիւն ունի:

Յայտնապէս, Վերածնունդին բերած դարձակէտը պատմականօրէն անխուսափելի է: Միջնադարը ինքզինք սպառելով հասած էր իր վախճանին և գարձած էր բոնատիրտկան անհանգստեցնելի ճնշում՝ մարդու Փիղիքական բնութեան ի նպաստ հողերին: Հետագային մեր կոնակր դարձուցինք հողին և աւելորդ ու անհաւասարալիտ խանդալտութեամբ բնակեցինք ամէն ինչ, որ նիւթական է: Այս նոր մտածելակերպը, որ մեր վրայ իր ուղղութիւնը պարտադրած էր, չէր բնգտներ մարդուն մէջ գոյութիւնը բրնածին շարտիւտան և ոչ ալ կը տեսնէր աւելի ազնիւ աշխատանք, քան երկրաւոր երջանկութեան տիրանալը: Ամէն ինչ, որ Փիղիքական բարօրութենէն և նիւթական ինչքերու կուտակումէն անդին էր՝ մարդկային այլ պահանջներ և յատկութիւններ, կամ աւելի ազնիւ և աւելի բարձր արժէքներ՝ դուրս ձգուեցան պետական կամ ընկերային կորգերու ու շտղութեան շրջադձէն: Կարձէք թէ մարդկային կեանքը աւելի բարձր իմաստ չունէր: Այս էր, որ ճամբայ բացաւ շարին, որ այսօր ներկայ է ազատ և տեսական հոսանքով: Ազատութիւնը մինակր չի կրնար նուազագոյն իսկ չափով յուճել մարդկային կեանքի բոլոր հարցերը: Ընդհակառակն, որոշ թիւով նոր հարցեր կ՛աւելցնէ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԱՐԱԾԸ

Մինչդեռ, առաջին ժողովրդավարութեանց մօտ, ինչպէս իր ծաղման օրերուն, ամերիկեան ժողովրդավարութեան պարագային, մարդկային անհատական

բոլոր իրաւունքները շնորհուած էին, որովհետեւ մարդը Աստուծո՛յ սրբաւածն է: Այսինքն՝ ազատութիւնը մարդուն տրուած է սլաւմանագրականօրէն, նկատի ունենալով անոր կրօնական մնայուն սպարտաւորութիւնները: Այս է նախորդ հաղարամեակին ժառանգութիւնը: Երկու հարիւր, նո՛յնիսկ յիսուն տարի առաջ, Ամերիկայի՛ մէջ անդամ, անկարելի պիտի թուէր երեւակայել, թէ անհատին պիտի շնորհուէր անսահման ազատութիւն, սրբապէս իր բնագոյնը կամ քմահաճոյքները զոհացնելու: Հետագային սակայն, նման սահմանափակումներ Արեւմուտքի մէջ ամէնուրեք մէկգլխի դըրեցան: Տեղի ունեցաւ ամբողջական սպառազրում քրիստոնէական դարերու բարոյական ժառանգութենէն, որ լեցուն էր ղթարտութեան, ողորմածութեան եւ զոհաբերութեան մեծ սրշարով:

Պետական կառոյցները հետզհետէ աւելի եւ ամբողջապէս նիւթապաշտական կը դառնային: Արեւմուտքը յաջողեցաւ իրապէս կիրարկել մարդկային իրաւունքները, երբեմն նոյնիսկ չափազանցելով: Բայց Աստուծոյ եւ բնկերութեան հանդէպ մարդու սպարտաւորութեան հասկացողութիւնը շատ սղօտեցաւ: Անցեալ տասնամեակներուն, Արեւմտեան աշխարհահայեացքի օրինապաշտ, եսասէր նկարագիրը հասաւ իր վերջնական տարողութեան եւ աշխարհ ինքզինք դտաւ հոգեկտն ծանր տաղնապի մը եւ քողաքական անելի մը դէմ յանդիման: Յառաջ գիմութեան դոյաբանած բոլոր իրազործումները, անջրպետին նուաճումը ներառեալ, 20րդ դարը չեն փրկեր իր բարոյական ուղքատութենէն, զոր սչ ոք կըրնոր երեւակայել, նոյնիսկ 19րդ դարուն:

Մինչ իր զարգացման ընթացքին հետզհետէ նիւթապաշտ դարձաւ, ինքզինքը աւելի ատակ դարձուց շարաշահութեան եւ շահագործումի, նախ՝ բնկերփարութեան, եւ ապա՝ համայնափարութեան կողմէ: Ա՛յնքան, որ Քարլ Մարքս կրցաւ 1844ին բռել, թէ «համայնափարութիւնը քաղաքացիականութիւն ընդունած հիւմանիզմ է»:

Տեսնուեցաւ, որ այս հաստատումը ամբողջութեամբ ալ անիմաստ չէ: Կարելի է նոյն հիմքերը դտնել ապա-հոգեկանացած հիւմանիզմի հիմունքներուն եւ որեւէ ձեւի բնկերփարութեան մէջ — չափազանց նիւթապաշտութիւն, ազատազրում կրօնքէ եւ կրօնական սպարտաւորութենէ, որոնք համայնափար կարգերու տակ կը հասնին հակակրօնական բռնատիրութեան աստիճանին. կեղբոնացում բնկերային կառոյցներու՝ դիտական մօտեցման տպաւորութիւնը ձգելով (աւիկա յատկանշական է 18րդ դարու յուսաւորութեան շրջանին եւ մարքսիզմի համար): Զուգադիպութիւն չէ, որ համայնափարութեան անիմաստ խոստումներն ու երգումները մարդու մասին են գլխապիր Մ-ով եւ երկրաւոր երջանկութեան: Առաջին հերթին տղեղ գուղահեռ մը կը թուի ըլլալ: Արդեօ՞ք մտածողութեան եւ ապրելակերպի հասարակաց գիծեր կան ընդմէջ այսօրուան Արեւմուտքին եւ այսօրուան Արեւելքին: Բայց այս է տրամաբանական ընթացքը նիւթապաշտական զարգացման:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

Փոխարարութիւնը նաեւ այնպիսին է, որ նիւթապաշտական ա՛յն հոսանքը, որ աւելի ձախ կը հակի, միշտ աւելի զօրաւոր, աւելի զբաւիչ եւ յաղթական գուրս կու դայ, որովհետեւ աւելի միաձոյլ եւ հաստատուն է: Հիւմանիզմ մը՝ առանց քրիստոնէական ժառանգութեան, չի կրնար գիմադրել այսպիսի մրցակցութեան: Այս հոլովոյթը կը տեսնենք անցեալ դարերուն եւ, մասնաւորաբար, անցեալ տասնամեակներուն համաշխարհային տարողութեամբ, երբ կացութիւնը աւելի ողբերգական կը դառնայ: Ազատականութիւնը անխուսափելիօրէն փոխարին-

ւեցաւ ծայրայեղականութեան, ծայրայեղականութիւնը անձնատուր եղաւ ընկերավարութեան եւ ընկերավարութիւնը երբեք չի կրնար դիմադրել համայնավարութեան: Համայնավար վարչաձեւը Արեւելքի մէջ կրցաւ դիմանալ եւ աճիլ՝ շնորհիւ խանդավառ օժանդակութեան Արեւմտեան բազմաթիւ մտաւորականներու, որոնք ազգակցական կապ մը կը գրային համայնավարութեան հետ եւ կը մերժէին տեսնել անոր դործած ոճիրները: Երբ այլեւս այսպէս չէին կրնար շարունակել, ջանացին արդարացնել զանոնք: Մեր՝ Արեւելքի երկիրներուն մէջ համայնավարութիւնը կրեց զազափարական ամբողջական պարտութիւն: Ձերօ մըն է եւ զերոյէն նուազ: Բայց արեւմուտեան երկիրներու մտաւորականները տակաւին անոր կը նային շահագրգռութեամբ եւ այս մեծապէս կը դժուարացնէ Արեւմուտքի ծառայումը Արեւելքի դէմ:

Այստեղ չեմ քննարկեր պարագան համաշխարհային պատերազմի մը կամ այն փոփոխութիւններուն, զորս անիկա առաջ պիտի բերէ ընկերութեան մէջ: Այնքան ատեն, որ խաղաղ արեւի մը տակ կ'արթնանք ամէն առտու, անհրաժեշտ է սովորական օր մը անցընել: Աղէտ մը կայ սակայն, որ կը շարունակուի բաւական երկար ժամանակէ ի վեր: Կ'ակնարկեմ այն պատուհասին, որ ապա-հոգեկանացած եւ անկրօն մարդկայնապաշտ աշխարհահայեացքն է:

Նման աշխարհահայեացքին համաձայն, մարդը մեկնակէտն է՝ գտնելու եւ արժեւորելու աշխարհի վրայ դոյութիւն ունեցող ամէն ինչ: Անկատար մարդը, որ ոչ մէկ ատեն գերծ է հպարտութենէ, անձնական շահերէ, նախանձէ, ցնորմարտութենէ եւ տասնեակ մը այլ թերութիւններէ: Հիմա մենք մե'ր մորթին վրայ կը կրենք հեռեւանքները այն սխալներուն, որոնք չնկատուեցան ճանապարհորդութեան սկզբնաւորութեան: Վերածնունդէն մինչեւ մեր օրերը երկարող ճամբուն վրայ մենք հարստացուցինք մեր փորձառութիւնը, բայց կորսնցուցինք դիտակցութիւնը Գերագոյն, Կատարեալ

Էակին, որ սովորաբար կը սահմանափակէր մեր կիրքերը եւ անպատասխանատուութիւնը: Մեծ յոյսեր կապեցինք քաղաքական եւ ընկերային բարեկարգութեանց, հետադային անդրադասնայու համար, որ կորսնցուցած ենք մեր ամենաթանկագին սեփականութիւնը՝ մեր հողեկան կեանքը: Արեւելքի մէջ քանդուած է անիկա՝ իշխող կուտակցութեան գործերով ու մեքենայութիւններով: Արեւմուտքի մէջ՝ առեւտրական շահեր կը ձղտին խեղդել զայն: Այս է իրական տագնապը: Աշխարհի երկրիեղկուժը նրաւոր սոսկալի է, քան նմանօրինակութիւնը այն հիւանդութեան, որ կը վարակէ անոր գլխաւոր ցամաքամասերը:

ՀՈԳԵԿԱՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Եթէ հիւմանիզմը իրաւացի էր, յայտարարելով, թէ մարդ ծնած է երջանիկ ըլլալու համար, նոյնպէս ալ ան պիտի չծնէր մեռնելու համար: Քանի որ մարմինը դատապարտուած է մեռնելու, իր աշխատանքը երկրի վրայ պիտի ունենայ առաւելաբար հոգեկան բնոյթ: Ձի՛ կըրնար աօրեայ կեանքի անսահման վայելքը ըլլալ: Ձի կըրնար նիւթական ինչք ձեռք ձգելու լուսագոյն միջոցներուն փնտրտութիւնը ըլլալ՝ հետադային ուրախ-դուարթ անոնցմէ օգտուելու համար: Պէտք է ըլլայ մշտական եւ ցանկալի մէկ պարտաւորութիւն, որպէսզի մարդու կեանքի ճանապարհորդութիւնը ըլլայ հոգեկան աճումի փորձառութիւն մը, այնպէս որ՝ կարենայ իր կեանքի աւարտին աւելի լաւ մարդ դուրս գալ, քան թէ սկզբնաւորութեան: Հրամայական պահանջք է վերատեսուութեան ենթարկել ընդարձակ ցուցակը մարդկային արժէքներու: Իր ներկայի անիրական պատկերը շղթայուցիչ է: Կարելի չէ նախապահի մը դործունէութեան գնահատութիւնը վերածել այն հարցին, թէ որքան դրամ կարելի է

չաճիլ, կամ թէ՛ հաւանականութիւն կայ քարիւղ ունենալու: Միայն կամովին եւ ինքնաթելագրեալ ինքնագրուով մը կրրնայ մարդը բարձրացնել համաշխարհային նիւթապաշտ հոսանքէն վեր:

Այսօր, յետադարձ քայլ մը պիտի ըլլայ անձը կապել Լուսաւորութեան շրջանի կմախացած տարադներուն: Ընկերային տեսութիւններու կառչիլը մեզ կատարեալ անզօրութեան կը մատնէ՝ մեր ժամանակներու փորձութիւններուն դիմաց:

Նոյնիսկ եթէ մեզի խնայուի պատերազմի կործանումը, մեր կեանքը պէտք է փոխուի, եթէ կ'ուզենք ինքնակործանումէ փրկել զայն: Չենք կրնար խուսափիլ մարդկային կեանքի եւ մարդկային ընկերութեան հիմնական սկզբունքները վերատեսութեան ենթարկելէ: Ճի՞շդ է, թէ մարդը ամէն բանէ վեր է: Չկա՞յ Գերազոյն Միտք մը իրմէ վեր: Ճի՞շդ է, թէ մարդու կեանքն ու ընկերութեան զործունէութիւնը պէտք է նպատակ ու-

նենան նիւթական բարդաւաճումը՝ առաջին հերթին: Արտօնուած է նման բարդաւաճումի ձեռնարկել մեր հոգեկան անձնաւորութեան ամբողջականութեան ի վնաս:

Աշխարհը եթէ իր վախճանին չէ հասած՝ մօտեցած է պատմական մեծ դարձակէտի մը, իր կարեւորութեամբ հաւասար Վերածնունդի դարձակէտին: Մեզմէ պիտի պահանջուի հոգեկան վերելք, պէտք է սրանանք դէպի տեսիլքի նոր բարձունքներ. դէպի կեանքի նոր մակարդակ, ուր մեր Ֆիզիքական բնութիւնը պիտի չտնիծուի՝ ինչպէս Միջին դարերուն, բայց աւելի կարեւորը մեր հոգեկան անձնաւորութիւնը ոտքի կոխան պիտի չըլլայ՝ ինչպէս ներկայ ժամանակներուն:

Այս բարձրացումը պիտի նմանի մագրլցումի մը դէպի մարդաբանական յաջորդ դարաշրջանը: Երկրի վրայ ոչ ոքի ուրիշ ճամբայ չէ մնացած — միայն դէպի վեր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈԼՔԵՆԻՑԻՆ

Լ Ի Պ Ա Ր Ի Տ Ն Ա Ջ Ա Ր Ե Ա Ն Ց



Անցեալ տարուան Դեկտեմբեր 17ին, «Յուսարեը» երիտասարդաց միութեան նախաձեռնութեամբ, «Յուսարեը» շէնքին մէջ եւ հոծ բազմութեան մը ներկայութեան՝ նշուեցաւ Լիպարիտ Նազարեանցի ծննդեան 100ամեակը:

Գեղարուեստական յայտագիրը, կարգացինք ու տեսանք թղթակցութեան մէջ, ընդհանրապէս կազմուած էր նոյնինքն Նազարեանցի գործերէն, որոնք նովին բանիւ կը պարզեն անուանի մտաւորականին բազմակողմանիութիւնը, դրսևորած շնորհները՝ զրական, երաժշտական, հրատարակարարական թէ տեսական մարզերէն ներս:

Լիպարիտ Նազարեանցի անձը եւ մտաւորականի անոր կողմերը հանդիսականներուն ներկայացուցած է գաղութին ծանօթ մտաւորականներէն Եդուարդ Յակոբեան, հմտալից եւ սպրուտով թաթաւուն խօսքով:

«Յուսարեը» երիտասարդաց միութիւնը երկար ժամանակ տրամադրեց իր այս նախաձեռնութեան եւ օրաթերթին մէջ երեւցած դրութիւններէն կը պարզուի, որ համապատասխան շուքով մը ողեկոչուած է անուանի մտաւորականին յիշատակը:

Մեր ժողովուրդը ունեցաւ Լիպարիտ Նազարեանցի ծննդեան օրերուն աշխարհ եկած պատկերաւ արտակարգ սերունդ մը, որ կեանքի հարկադրանքներէն աւելի՝ նոյն ժողովուրդի կարերներուն շնորհքերեց ամէն բան, — երիտասարդութիւն, շնորհ, կրթով, եւ քիչ ժամանակ տնկցաւ ի վերուստ իրեն ընծայուած քանքարը համապատասխան խորքով ու լայնքով թելաւորելու, ու կեանքէն հեռացու միայն քիչ բան մը ետին ձգելով, կաթիլ մը, շող մը:

Այդ սերունդին եւ այդ ճակատագրին ներկայացուցչական տիպարներէն էր Լիպարիտ Նազարեանց:

Տարբեր գաղութներու այսօրուան երիտասարդներուն քիչ բան կ'ըսէ այս անունը, որ սակայն իր սերունդի կարկառուն զէմքերէն էր, մտաւորական թէ բարոյական իր անձնաւորութեան ընդդէմ յարժանիքներով:

Համայնարանական բարձրագոյն կրթութեան տէր եւ ողջ էութեամբ ժողովուրդին նուիրուած իր լուսպոյն սերնդակիցներուն պէս՝ նա' եւ Նազարեանց ունեցաւ աստանդական կեանք մը, եղաւ հո'ն՝ ուր կանչուեցաւ, զո'րծ կար, Երեւանէն Մոսկուա, Պերլին, Պոլիս, Սոֆիա, Քիթլիս, Փարիզ, Գահիրէ՝ իրբւ խմբադիր, պատերազմ ու զեպան, խորութեամբ ու լրջութեամբ արդիւնաւորելով ասանձնած բոլոր գործերը, օրինակելի՛ պարկեշտութեամբ:

Իր մեծ պատրաստութեան հետ համեմատած՝ Լիպարիտ Նազարեանց շօշափելի շատ բան չձգեց իր Լոթին եւ ձգած քիչն ալ շա'տ քիչ ծանօթ է նոր սերունդներուն: Գրական, տեսական ու հրատարակարարական վաստակէն մէկտեղուած հասարակ մը վստահաբար աւելի լայն շրջանակներու մէջ պիտի լուսաւորէր իր դէմքը, այլ մասնաւոր լոյս պիտի նետէր հետու հետուր մտքերու մէջ, որոնք պիտի փութային յայտնել իրենց հիացումը, այնպէս՝ ինչպէս երախտադիտական զեղումով մը ըրին եղիպտահայ երիտասարդները:

Նման նախաձեռնութիւն մը համազգային նշանակութիւն ունի եւ մենք պարտաւոր ենք մըտածել այդ մասին:

«Բազիլն»ի ընթերցողներուն նախաճաշակ մը տալու համար Լիպարիտ Նազարեանցի զրական գործունէութենէն, հետազայ էջերուն կու տանք թարգմանութիւն մը, թարգմանութեան օշականեան զնահատանքը եւ տեսական ուշագրաւ եւ ուսանելի՛ էջ մը:

ՆԵՄԻՐՈՎԻԶ-ԴԱՆՁԵՆԿՕ

Ե Փ Ր Ա Տ Ի Ա Փ Ի Ն

Հնամենի տունը իմ՝ կեցած ավիին Եփրատի...
 Անոր վերել քգեհին՝ վրանի պէս տարածուած,
 Պատուհանիս յանդիման՝ կարմրերփեան նոնենին,
 Նման կոյսի շրթներու. հիր վարդերու անձրեւով
 Գետինն ամբողջ ծածկուած. դաշտը գետափ կը հասներ:
 Ու երջանիկ եւ անհոգ՝ արօտներու մէջ ազատ
 Կ'արածէի նրբամազ այծերս, ու երբ կը մթնէր՝
 Կը սիրէի ունկնդրել թախծող սրինգն իմ եղբօր,
 Թռչուններուն մշտաշարժ՝ պարտէզներուն մէջ խմբուած,
 Մեր խեղճ տունը վաղեմի՝ կեցած ավիին Եփրատի...

Մեր հին տունը սիրելի՝ կեցած ավիին Եփրատի...
 Եւ կը յիշեմ մայրս, որ՝ աւարտելով օրը տօթ՝
 Յանախ կ'երգէր մեզ համար վերջալոյսի ժամերուն
 Խինդն ու բերկրանքն անխըռով՝ հեգահամբոյր գիւղերու,
 Հնութիւնը պետր, ասպետները դիւցազուն՝
 Մերկացուցած սուրն իրենց յանուն ազգին իրաւանց,
 Աբեղաները գիտուն անդորրին մէջ վանֆերու,
 Վարիչները մեր արդար, որ կ'ըլլային մեզ պաշտպան
 Թշնամանքի, դաւի դէմ օտար եւ չար մարդերու:
 Իմ հին տունը հրաշագեղ՝ կեցած ավիին Եփրատի...

Իմ հին տունը սպիտակ՝ կեցած ավիին Եփրատի...
 Մենք կ'ապրէինք միշտ հեռու ամէն վէճէ, վտանգէ
 Եւ քիչ անգամ միմիայն կը տեսնէինք ասկեարներ,
 Որ կ'անցնէին մեր դաշտէն: Ու սեմը մեր խաղաղ տան
 Թերեւս չէին այցելեր ատելութիւն, քէն ու ոխ.
 Հեռաստաններ տակաւին չէին շիկներ բոցերէ...
 Հարաւ կ'երթար փոշեպատ կարաւանը ուղտերու,
 Էլ-Ազրատի պաղ ջուրով կը լեցնէինք մենք ընդփոյթ-
 Տիկերն օտար հիւրերու՝ արաբներու յոգնաբեկ:
 Մեր պարտէզը սիրելի՝ ինկած ավիին Եփրատի...

Իմ հին տունը անվրդով՝ կեցած ամփին Եփրատի...
 Արմատիներ խուճերով պղտոր-դեղին ջուրին մօտ
 Կը նետէին շունչն իրենց՝ վերջալուսի բոցին վրայ.
 Փողովուրդը հոն կ'երթար թամար մը խեղն՝ աղօթքի.
 Կը սիրէինձ ծէս ու կարգ մենք դարերու վաղեմի,
 Կը պատուէինք խորանի կենդանարար խաչը սուրբ
 Եւ շրջափակն աղփատիկ շիրիմներու թանկագին,
 Լուսօրեան մէջ իրիկուան այդ օրհնուած վայրերու,
 Ամէն մէկը մեզ համար եղբայր էր կամ հարագատ,
 Մեր հին տունը սպիտակ՝ կեցած ամփին Եփրատի...

Մեր պարտէզը հովանուտ՝ ինկած ամփին Եփրատի...
 Եւ օր մըն ալ... Հո՛ն, հեռո՛ւն, Օրն այդ պիտ' չըմոռցուի...
 Բազմութիւն մը փախ ի փախ, անյուսութեամբ համակուած,
 Դէպի մեր կողմը խուժեց հայրենական գիւղերէն.
 Շատերու բաց վերքերէն դեռես արիւն կը ծորէր...
 Մարտիին մէջ ահաբեկ կային կիներ, մանուկներ
 Ատանայէն, Մեքլիէն, Էմէնէէն եւ Թաշէն.
 Ու մահն իրենց կը հասներ գնդակէ եւ պողպատէ,
 Շուրջը հրդեհ ու ատեր, հեծֆը հողին տառապած...
 Մեր պարտէզը ողորմուկ՝ ինկած ամփին Եփրատի...

Մեր խեղն տունը վաղեմի՝ կեցած ամփին Եփրատի...
 Յորդ արիւնէ կարմրաներկ՝ կը հոսէր գետն ալեծուփ,
 Հրացաններ ձեռք առինք... Սակայն երբեմն քաջարի՝
 Ի՞նչ կրնայինք բնել մենք՝ աշխատանքի հիմա ստրուկ...
 Որպէս հասկեր մանգաղէն՝ ինկան հայրս ու եղբայրներս
 Գոչերուն տակ կատաղի գագաններու արիւնկգակ,
 Ու գետինը կը կծկուէր կարծես հսկայ հնոցի մէջ՝
 Երկինքն ամբողջ կը վառէր... Կը փախչէի, սակայն ո՞ւր.
 Քայի ոռնոց ետեւէս. ո՞ւր կրնայի ես թափչիլ...
 Մեր խեղն պարտէզն առաւ կրակ ամփին պղտոր Եփրատի...

Մեր հին տունը սիրելի կ'այրէր ամփին Եփրատի...
 Աւագի մէջ ինկայ ես... Չայն տուի իմ բոյրերուն,
 Մայրս անձկանօք կանչեցի, ծանօթ մէկը փնտտեցի...
 Լուռ է, սակայն, իմ չորս դին, չարագործներն անհոգի
 Հարագատներս այրեցին... Ա՛յ ուժ չունիմ սողալու...
 Եւ մնացի ես միմակ՝ շիրիմներու հետ նախնեաց,
 Կը խնդրէի մահէն՝ «ե՛կ», եւ գերբ դողանջ սարսուզու.
 Անագանգի չարաշուֆ՝ կը լսուէին ամէն կողմ
 Մոյլը կրակի խօլական եւ թնդիւնը հրագէնի...
 Հին պարտէզը կը մխար ամփին խոով Եփրատի...

Մոխիր դարձաւ հայրենի տունն իմ օտարի...
 Եւ յանկարծ ինձի դպաւ բիրտ երախ մը գագանի-
 Տրտուր մը դժնդակ երջանկութեանն իմ անցեալ...
 Անարգ վիճակ էր հիմա այլեւս ինձի սահմանուած.
 Յօշուած դիակ մըն եմ ես թշնամանուած սրբութեան,
 Սատակ մըն եմ եղկելի՛ անապատի մէջ մոռցուած,
 Քուրջի կտոր աղտեղի՛ փոշիներու մէջ համբու.
 Ես՝ ծաղիկն եմ ընտանեաց, սիրուած երբեմն ամէնքէն,
 Հիմա շան պէս տարածուած՝ ոտքերու մօտ առելի...
 Ա՛հ, ո՞ւր է իմ հոտեան պարտէզն օտարի երախի...

Կեցած էր խեղճ տունը իմ երբեմն օտարի...
 Շիջեցաւ հիր վարդերու գեղեցկութիւնն անապակ.
 Եւ մեռնելու ես եկայ վերջալոյսի վախճանին
 Անիւններուն վրայ անունց՝ հոգիով միշտ անարատ.
 Զոհ մըն եմ ես քեզ համար, ո՛վ հայրենիք սրբազան,
 Ընդունէ պահն իմ մահուան. քեզ օրհնելով՝ ես կ'երթամ
 Ահեղագին, այլ արդար դատաստանին Աստուծոյ,
 Մահով պատժէ գիս, Տէ՛ր, բայց՝ եղբայրներուս գթալով՝
 Դուն ալ ինձ պէս օրհնէ մեր Հայաստանը պաշտելի
 Եգերբերէն Սեւ ծովու մինչեւ ջուրերն երախի:

Թարգմ. ԼԻՊԱՐԻՏ ՆԱԶԱՐԵԱՆՅ



ՅԱՐԳՈՅ ՏԷՐ ԽՄԲԱԳԻՐ,

Հաճոյքով ու յուզումով կարգացի Յաւելուած «Յուսարեր»ի Մարտի
 թիւին մէջ «Երախի օտարի» փոթումը:

Թարգմանիչը, ոչ-անձանօթ մը մեր գրական հրատարակին, ցարդ չէր
 դրաւ իմ ուշադրութիւնը իբրեւ շահածոյ խօսքին աշխատաւորը: Չեմ
 վերլուծեր Նեմիրովիչ-Դանչենկոյի փոթումին ներքին տարողութիւնը:
 Մեր զոյգ նոր գրականութեանց մէջ այնքան ընդհանուր, բնտանի ու երբեմն
 ալ մեծ դեղեցկութիւններու աղղակ այդ նիւթը, հայրենիքին զգացումը, ու-
 բուն մէկ լրացուցիչն է մեր ժողովուրդին հակատագիրը, մեր օրերուն
 մտնաւանդ ենթակայ անխնայ շահագործման թէ՛ Սփիւռքի ամայքներուն
 (հողեկան), թէ՛ Հայրենիքի վտանգալից գեղեցկութեանց հանդիսարանին
 մէջ, առեն է, որ մտահոգէ մեր բանաստեղծութեան այն սպասարկուները,

որոնք արզար, խորունկ, թերեւս իրաւ ասորումներ թուղթին կը յանձնեն, մեզ դառնօրէն տրամեցնելով անոնց դունատութեան, հասարակութեան, անհասկնալի նուաստումներովը: Հարցուցեր եմ յաճախ եւ ինծի այս վրիպանքին ազդակները: Օտարի մը դրչին սակ այնքան սովորական նկատուող այդ ասորումները ո՞ր հրաշքին միջամտութեամբը սակայն կը զտնեն իմ հողին, այնքան անգիմադրելի ուժով մը խորտակելով հանդանակ, կապանք, վարժութիւններ:

Կը դրեմ այս տողերը կատարելապէս գիտակ հիմնական վտանդին, որ քարգլխաւորիւնն է քերթուածին: Յայտարարելէ ետք, թէ բանաստեղծութիւն մը չի քարգլխաւորի, այլ միշտ կը գրուի, ինծի համար դժուարութիւն կը դրամ «Եփրատի ափին» քերթուածին պայծառ յաջողանքը ղետեղելու սա ու ան ազդելներու հասողութեան, քանի որ հիմնականը, այսինքն՝ բանաստեղծ մը ըլլալու ճակատագիրը մենք չենք կարողացած Լ. Ն. անունով վաղածանօթ մտքի աշխատանքին արդիւնքին վրայ: Ուրե՞մն:

— Քերթուածին բախտը կու գայ իրմէ:

Անշուշտ իր փոխադրութեան մէջ իր ղեղեցիութիւնը պահող սա նիւթը մեր զոյգ գրականութեան մէջ ծնունդ է տուած անմահ բանաստեղծութեան: Բայց ատոր չէ, որ սիտի ուղէի անգրագանալ սա տողերով: Մասնաւորաբար տանամէ մը ի վեր, թէ՛ Սփիւռքին, թէ՛ հայրենիքին մէջ այդ նիւթէն բխող քերթուածներուն (երկու կողմէն ալ այնքան քիչ են բացառութիւնները, որ իմ ընդհանրացումը չեմ մեղմեր որեւէ չքմեղանքով) անհանդուրժելի շեղակոյտը ուղղակի տատապանք էր ինծի: «Եփրատի ափին» քերթուածին հեղինակը մեծ գրականութեան մը (ոուս) պատկանելովը չէ, որ կը ղնէ իր յաջողութիւնը: Ինծի կու դայ, թէ բանաստեղծութեան յաւիտենական թշնամին (լուս իջնէ՛ Վերջնի գերեզմանը) աւելի քան կենդանի է եւ տիրական, մեր օրերուն մանաւանդ, ուր այնքան ծանր տաղնապներ դըրուած են մեր հողիններուն տուներուն:

Չէ՞ր կարելի արդեօք, այդ փոխադրումը ստիթ տունելով՝ մերիններուն թելազրեր մէկ ու նոյն պատուէրը:

— Զգալ ու ապա գրե՛ք:

Այսինքն՝ իր հաշտոյն ապրիլ Սփիւռքը, լիակատար, բացարձակ դատանութեան մը մէջ, հայրենիքը՝ դարձեալ լիակատար, բացարձակ հպարտութեան մը մէջ: Այն ատեն թերեւս ինայուէին մեղի Սփիւռքին բառակոյտը եւ հայրենիքին հասարակ տեղիքը: «Եփրատի ափին» քերթուածին ամէն մէկ բտոր ծանրածանր ասորումներ կը թելադրէ: Թէկուզ ամէնէն համբաւեալ հայրենեղութիւնը Հայաստանի բանաստեղծներէն մէկուն (ներեցէք, որ ձեր ու իմ հաշտոյն ինայեւմ անուճներ) կ'անցնի իմ ջիգերէն իբրեւ բտեղէն հով մը: «Եփրատի ափին»ը սպրեցայ խոր յուզումով:

Շնորհակալութիւն ուրեմն թարգմանիչին:

Սիրով

Յ. ՕՇԱԿԱՆ

Քաղին

ՊՁՏԻԿ ՅԱՒԵԼՈՒՄ ՄԸ

«Նփրատի ափին» բանաստեղծութեան միջնորդատյին հարադատութիւնը շատ աւելի հաւաստի կը դառնայ, երբ յայտնենք, որ անոր ուսու հեղինակին մայրը հայ էր :

Կենսական է այս պզտիկ ծանօթութիւնը, որովհետեւ չէ պատահած տակաւին, որ առանց արեան խորհրդաւոր մասնակցութեան բանաստեղծութիւն մը կարենայ կենդանութեան շունչ ստանալ եւ բողբոջուի :

Այդ ուժին թելադրանքով գրուած է Նեմիրովիչ-Դանչենկոյի բանաստեղծութիւնը եւ Դանչենկո մէկն էր նոյն ուժին արարչապարձ զօրութեան մեծ հաւատադեմքներէն :

1935ին ածուկեցաւ իր երակներուն մէջ կաթիլ մը հայկական արին կրող այս ուսու բանաստեղծին ծննդեան 90 եւ դրական գործունէութեան 75ամեայ յորելանք, որուն տոյժով «Յուսարեք» առանձին խմբադրականով մը սղջունեց յորելարը, ի միջի այլոց, զրեւով՝

«Երբեմն կը բուի, թէ այդ կորսուած բեկորներուն մէջ մեռած է ցեղին ձայնը, բայց ահա անկնկալօրէն, մէկ կամ միւս առիթով, կը հնչէ անոր արձագանգը : Չյուսամք, թէ օր մը կարելի պիտի ըլլայ նշդիւ սահմանել ստեղծագործ միգրին բաժինը, որ բերաւ հայ ցեղը աշխարհի քաղաքակրթութեան՝ իր ազնուական արիւնը ներարկելով բիրաւորներու : Նեմիրովիչ-Դանչենկո մէկն է մեր ցեղի քանքարներէն, եւ արդար է իր յորելեանին մէջ տեսնել նաեւ վաստակը այդ ցեղին, հետքը անոր հանճարին» :

Դանչենկո կը ստանայ «Յուսարեք» ի այդ թիւը, թարգմանարար կը տեղեկանայ բովանդակութեան, կը հրճուի եւ, իր կարգին, կ'արձագանգէ արծարծուած արեան փիլիսոփայութեան .

«Այո՛, ցեղը երբեք չի կորսուիր, եւ արիւնը ամէնէն զըլխաւորն է : Մայրս հայուհի ըլլալով՝ ես ալ, ուսական վարժարան մտնելէ առաջ, կրնայի ո՛չ միայն ազատ խօսիլ հայերէն, այլեւ կարգալ-գրել : Համագումար եմ, որ գրելու շքնորհքն ալ իմ հայ արիւնին կը պարտիմ :

Կասկածէ դուրս է, որ վերի տողերուն առիթով զազափարաց զուգորդութիւնը արդէն մտքերուն մէջ թարմացուց իր արիւնին անդաւաճան ուրիշ զբաղէտն մը հաստատուածը, Ուիլերմ Սարոյեանի մղիչ ողին .

Գործածած բառերս անգլերէն են :
Միջավայրը, որուն մասին կը գրեմ՝ ամերիկեան է :
Սակայն ոգին, որ կը ստիպէ ինձի գրել՝ հայկական է :

Ու նորէն ու դարձեալ Օշականը .

«Գրականութիւնը արեան երետոյթ է»,

ու յաճախ նիւթ պարծած է այս թերթին մէջ ու կը հանդիսանայ մեր հաւատոյ հանդանակին ամէնէն զօրեղ հաստատք . . .

Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

**ԱՐՈՒԵՍՏԻ
ԷՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ՆՒՒԹԸ**



Արուեստի էութան սահմանումին մէջ այնքան վիճելի չէ եղած այն, թէ ի՛նչ է արուեստը, որքան այն, թէ ի՛նչ պէտք է լինի ան :

Եւ միշդ հոս, այս «պէտք է»ի մէջ է «գայթակգութեան ֆարը», որ դարաւոր պայքար ունի իր ետին եւ պատճառ պիտի լինէր «հարիրամեայ պատերազմ»ներու, եթէ արուեստն ալ կրօնի իշխանատենչ եւ յարձակողական ձգտումներն ունենար :

19րդ դարուն, անհատապաշտ ազատականութեան տիրակալութեան շրջանին է, որ «պէտք է»ն արուեստին մէջ վճռականօրէն բանադրուեցաւ : Արուեստը, կ'ըսուէր, ազատ արտայայտութիւնն է արուեստագէտի տրամադրութեանց, ուստի չի կրնար ենթարկուիլ ոչ մէկ հարկադրանքի եւ ծառայեցուիլ որեւէ նպատակի . ան ինքնանպատակ մըն է եւ կրնայ գոյութիւն ունենալ միայն ինքն իրեն համար :

Ոչ մէկ պահանջ արուեստին նկատմամբ այնքան արդարացի է, որքան այն, որ ան ազատ լինի . ազատութիւնը արուեստին էական յատկանիշն է, վասնզի ազատ մտածման եւ ազատ ստեղծագործութեան պայմաններուն մէջ է, որ ժողովուրդի մը ոգեկան մշակոյթը թո՛իչք կը ստանայ՝ ելլելու համար ժամանակի եւ միջոցի սահմաններէն : Իրականին մէջ ալ արուեստը ազատ եղած է ծագման պահէն, հակառակ պարագային ան արուեստ պիտի չլինէր : Ու եթէ, այնուամենայնիւ, պէտք կը նկատուէր անցեալ դարուն վերջստին արծարծելու անոր ազատութեան խնդիրը, պատճառն այն է, որ նոյն դարուն յատաջ եկաւ նաեւ ոչ-ազատ արուեստի կարելիութեան խնդիրը, յարուցանելով իր շուքը բուռն, երկարատեւ վէճեր :

Սակայն, ներկայացնելով արուեստի բացարձակ ազատութեան պահանջը, ազատական ֆննդատութիւնը ինքն էր, որ կը ոտնահարէր այդ ազատութիւնը : Իրապէս, բացատրելով, թէ ի՛նչ բանէ ազատ լինելու էր արուեստը, ան մէկէ աւելի սահմանափակումներ կը դնէր արուեստագէտին առ-

ջեւ . այսպէս , արուեստագէտը պէտք չէ ունենար նպատակ , նկատում եւ , մե'նսուանդ' միտում . ան չէր կրնար ոչինչ ուզել , ոչ մէկ բանի ձգտիլ , այլ պէտք է անար միայն «աստուածային ներշնչման» : Ասով' արուեստագէտը կը դառնար լոկ երագող մը , որ ոչ մէկ բանով կապուած էր իրականութեանց աշխարհին , իր առջեւ կը գոցուէին կեանքի եւ տիեզերքի հորիզոնները այն մտահոգութեամբ , թէ ան կրնար տարուիլ «ոչ-գեղարուեստական» , «արձու-կունակ» նիւթերով : Ուրիշ խօսքով' ան կը գրկուէր հնարաւորութենէ' իր ուզած ձեւով մտնեալու կեանքին , իր ըմբռնումով գործադրելու իր կարողութիւնները եւ կերպաւորելու իր մտածումները : Ու երբ արուեստագէտին այսպէսով կը մերժուէր ամէն կամեցողութիւն , իբրեւ վտանգաւոր հեքետիկոսութիւն , իրեն կը մնար սոսկ տարտամ զգացումը' իբրեւ միջոց ստեղծագործութեան , որ նման պայմաններու մէջ անխուսափելիօրէն պիտի արտայայտուէր վերացական , անառակայ երկերով :

Տարօրինակ չէ , ուրեմն , որ այդ ժամանակաշրջանին ոգեկան մշակոյթը չէզոքացուած էր մասնաւոր կայուածի մը մէջ , ըսել է' արուեստ , գրականութիւն գատուած էին իրական կեանքէն : Ատոր վերագրելու է արուեստի ուղղութեանց շարունակական փոփոխութիւնները եւ անհաշտելի թշնամութիւնն ու յարատեւ պայքարը անոնց միջեւ , վասնզի արուեստի ստեղծագործ կորովը չի կրնար հանդուրժել սահմանափակումներու եւ կ'ըմբոստանայ ամէն կարգի ուղղութեանց դէմ , որոնք կը կասեցնեն իր ազատ շարժումը :

Այսպէս կը ստրվեցնէ արուեստի իրական եւ անսահման ազատութեան օրէնքը , համաձայն որուն ամբողջ աշխարհն ու ամբողջ կեանքը տրամադրելի են արուեստագէտին , եւ ան կրնայ բնա իր կամեցողութեան կերպաւորել գանձնէ' իբրեւ արուեստի երկ , որ ուրիշ բան չէ , բայց եթէ իրական կեանքը' մարդկային ստեղծագործ հոգիի հայելիին մէջ ցոլացած :

Զկայ , ուրեմն , նիւթ մը , արտայայտման ձեւ մը , որ տեղ չգտնէ արուեստին մէջ , եւ հող է արուեստին անսահման ազատութիւնը : Որքան անելի բազմակողմանի արուեստագէտը' ազգայնօրէն ժառանգած եւ ստացական յատկութիւններով , այնքան անելի բազմակողմանի պիտի լինին իր ստեղծագործութիւնները : Իսկ այս վերջիններուն արժէքը հշդելու համար վնասկա՞ր այն չէ , թէ ինչպէս յառաջ եկած են անոնք — «ներշնչումէ՞» , թէ «կամեցողութենէ՞» — եւ ի՞նչ նիւթ կը շօշափեն . վնասկանը այն է , թէ ո՛րքան իսկական են անոնք , այսինքն' ո՛րչափ սերտօրէն կապուած են արուեստագէտի ստեղծագործ գորութեան հետ եւ ո՛րչափ անմիջականօրէն կը բխին սուր կենսագրացումէն եւ կենսաըմբռնումէն :

Ասով լուծումը կը ստանայ ուրիշ հիմնական խնդիր մը եւս — առօրեա՞ն' իբրեւ նիւթ եւ միջավայր :

Առօրեան մարդու ամէնէն մեծ թշնամին է : Ան կը անշէ , կը սպաննէ մարդը , կամ' յաւագոյն պարագային' մեռցնելով անոր մէջ ամէն ոգեկան խոյանք' կը կաշկանդէ գայն մանր ճիւղակեան հոգերով եւ իր ստրուկը կը դարձնէ : Այսպէս կը դատուէր անցեալ դարու երկրորդ կէսէն ի վեր , եւ մեծագոյն յանցանքը , որ կը վերագրուէր առօրեային այն էր , թէ ան «Ֆադէնի» դարձուցեր է մարդ-ֆադաբացին եւ գրկեր գայն մարդկային արժանապատուութենէ : Այդ պատճառով ալ արուեստ , գրականութիւն , բարոյախօսութիւն միացեր էին' փրկելու համար մարդը իր «անկեայ» վիճակէն : Մարդը , կ'ըսուէր , այն ատեն միայն կը վերագտնէ իր իսկական էութիւնը , երբ կը փշրէ առօրեայի շղթաները եւ իրեն համար կը ստեղծէ նոր կենսաոն մը , որ լինի

աւելի գոչաւոր, քան առօրեան, եւ կարելիութիւն տայ իրեն՝ պայմարելու իր այդ մահացու բշխամբին դէմ:

Այս պայմարը, սակայն, անջատելով մարդը «առօրեայ»էն, որ կեանքի միջավայրն իսկ էր, պատակաւ ստեղծեց մարդու եւ իրական կեանքի միջեւ: Այդպէսով յառաջ եկաւ հակադրութիւններու անծայր շարան մը, որ իրմով լեցուց մարդու ամբողջ գոյութիւնը, — հակադրութիւն արուեստի եւ «առօրեայ»ի, գեղեցիկի եւ սգեղի, ոգիի եւ նիւքի, յառաջընթաց գոբօսքեան եւ ընդարմացնող անշարժութեան:

Իրականութեան մէջ այդ երկուութիւնը գոյութիւն չունի, եւ յիշեալ գաղափարներու հակադրութիւնը լոկ երեւութական է: Արդարեւ, ինչպէս որ մի է ազգերու կամ անհատներու ոգեկան եւ նիւքական կեանքը, այնպէս ալ բացարձակ եւ համապարփակ միութիւն կայ այդ գաղափարներուն միջեւ, որոնք նոյն կեանքի տարբեր արտայայտութիւններն են: Այդ ըմբռումով արուեստը եւ առօրեան միութիւնն են հոգիի եւ մարմնի, եւ ինչպէս որ հոգին ու մարմինը իրենց փոխարարութիւններով կը կերպարեն լիակատար մարդը, այնպէս ալ արուեստն ու առօրեան կը կերպարեն մի եւ իսկական մշակոյթը:


Այդպէս է ահա, որ արուեստը, խոր ըմբռումով, ոգեկոչումն է ամբողջական կեանքի եւ աւետումը խորհրդաւոր, կենսախրախոյս ուժերու: Ասով ալ ան անխցելիօրէն կապուած է իրական կեանքին:

Բայց արուեստը ո՛չ միայն կեանքի գեղարուեստական արտայայտութիւնն է, այլեւ ի՛նքն կ'ազդէ անոր վրայ: Յիրաւի, կեանքը միայն ինքնաբեր, մեքենական հոլովում մը չէ, այլ՝ շարժում մը, որ ենթակայ է յատուկ օրէնքներու: Եւ քանի որ արուեստը արդիւնք է ոգեկան ստեղծագործութեան, ապա պարզ է, որ արուեստագէտը անոր միջոցով իր ապրումներու եւ ձգտումներու դրոշմը կը դնէ այդ օրէնքներուն վրայ, ըսել է՝ չափով մը կը սահմանէ կեանքի ընթացքը: Հոգ է արուեստին կարեւորութիւնը, ատով է, որ ան իրաւունք կը ստանայ լինելու հանրային գուրգուրանքի առարկայ, եւ ատոր համար է, որ ստիպողաբար անհրաժեշտ կը դառնայ պահպանել զայն ամէն վատասերոզ ազդեցութենէ:

Եթէ իրաւ է, որ ինչպէս կեանքն է, այնպէս ալ արուեստն է, ոչ նուազ իրաւ է, որ ինչպէս արուեստն է, այնպէս ալ կեանքն է: Կեանք եւ արուեստ յաւիտեանական փոխազդեցութեան մէջ են, որ կը պայմանաւորէ ո՛չ միայն անհատական առօրեան իր գեղագիտական ըմբռումներով, այլեւ յանախ ժողովուրդներու բախտորոշ գործերը:

ԼԻՊԱՐԻՏ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Լեւոն Գրիբեդ



ՎՏԱՆԳԱԻՈՐ ԱՆԿԻՒՆԱԴԱՐԶ

ԹՐԱՇՈՒՇԱՆՆԵՐ

(«Սովետական գրականություն», 1963, քիւ. 5, էջ 7-56)

ՍԵՒ ՈՒ ՍՊԻՏԱԿ

ԿԱՐԱՊՆԵՐ (1966)

ԴԱՂՁԻ ԲՈՅՐԸ (1972)

ԳՆԱՅՔՆԵՐ (1977)

Անցեալ տասնամեակի կեսերուն, երբ Գեորգ Արշակեան կը հրատարակէր իր «Թրաշուշաններ» եւ «Սեւ ու սպիտակ կարպանք» խորագրով վիպակները, Հայաստանէն մինչեւ Սփրիտք յատուկ խանդավառութիւն մը կը ստեղծուէր իր սնունդին շուրջ: Խանդավառութեան պատճառները զժուտոր չէ՛ դաճեալ: Մեր քննադատութիւնը ընդհանրապէս չի կրնար մարսել ամբողջական հեռացումներով ստեղծագործուող յառաջագահ գործեր, սակայն երբ նորարարութիւնը փոքր քանակութիւններով կը ներթուծուի, թէ՛ քննադատութիւնը եւ թէ՛ ընթերցող հասարակութիւնը հանդիստ կը պահանջուի մասնաւոր վտանգ մը չեն տեսներ մատուցումին մէջ: Ներկան անցեալին կապելու եւ երկու ժամանակաշրջանները իրրելու կենդանի իրականութիւն պիտի լուրջուի: Արշակեանի մատուցութիւնը՝ անհատական ու, մասնաւորապէս՝ հատարական մակարդակներու վրայ, ցեղային խորունկ փոխադասութիւն մը կը բերէր, որուն կը ժխտարարող քաղաքակրթութեան որոշ երեւոյթներուն անդրադարձներն ու բերեղացումը անհատին մէջ: Աւելին՝ մարդու ինքնայատուկ հարցերուն վրայ կեղբոսանալու ձգտումը, հեղինակին ետզարմանարկները եւ կարծ, սակայն իմացական կամ

ընտրական խորունկ դատումներն ու մտածումները դիւրութեամբ համբայ կը պոնէին ու կը խաղային իրենց հիմնական զերբ՝ միակտուր պատմութիւն տեղ՝ քանի մը ուղղութիւններով բնութանալու եւ կամ թարմացնելու մթնոլորտը: Հարկաւ, այս բոլորին կողքին կար հեղինակին անկեղծութիւնը, յաճախ դաժան, որ յատուկ կրնիք մը կը պարզուէր իրեն:

Պատերազմէն մէկ սոքով վերադարձած «Թրաշուշաններ»ու Դուռիթը, շուրջ տասնըհինգ տարի ետք կը սկսի գիտել տարբեր կենցաղով ապրող նոր սերունդի ազաքը, որոնց աւօրեային հետ բողբոջած՝ իր պատանութիւնն ու երիտասարդութիւնը սուր հակասութիւն մը կը ներկայացնեն: Ճիշդ է, որ հերոսը իր անգամահատումին յաջողուող հողեկան փլուզումը կըցած է շրջանցել, հարստարարութեան հետեւելով մեռք ձգած է ասպարէզ մը, որ թէ՛ դինք պիտի յարմարեցնէ շրջապատին եւ թէ իր ձգտումները զընտրելու անցք մը պիտի բանայ: Նորինն՝ պատերազմին դո՛ւ տուած է իրեն համար կենսական տրժէք մը՝ իր սիրած աղան: Այսպէս, երկուքը միասին կը ներկայացնեն ամբողջ սերունդի մը պատկերը, ուր իւրաքանչիւրը խոր բաժին մը

ձգում է կամ կրօնացուցած, եւ իւրաքանչիւր տարբեր ձեւով կը հակադէպ կացութեան: Նորինէ իր մղիչ ուժէն եւ աշխուժութենէն պարպուած է եւ դարձած կրօնաբան: Իր մէջ սաքր կրօնը սրնցուցած Գաւիթը՝ տնտեսն դաժանօրէն իրսպառ ու մարդկային է, որ կրնայ աղջկան բռնել:

«Մի ասէք, որ Ես մէկ ում ունեմ... լաւ է ասէք, թէ մա ունի երկու յեմակ» (էջ 51):

Սակայն Գաւիթ փաստօրէն չի՛ կրնար վերագտնուիլ դիւղ՝ Հեղինէին, իր ստաջին սիրոյ փորձառութեան, ամբողջական փորձառութեան, որ զինք կազմած է եւ պատանութենէն իր անցումը իրապարծամ: Պատճառը պարզ է. իր ամբողջութիւնը ներկայ էր սյնտող, իսկ հիմա բան մը պակասած է իրմէ: Անշուշտ Հեղինէի տմուսնայն վերադարձը Լրեւուժական պատճառ մըն է ինքնին, սակայն Գաւիթ չ'ուզեր իր անցեալի պատկերը քանդել, հոն է իր կենսունակութեան աղբիւրը:

Վիպակի աւարտին, երբ այլեւս բերեղացած է ներկան եւ Նորինէին հետ տարբեր կեանք մը վարելու հանգրուանին դիմաց կը դռնուին, զինք տեսնելու եկող մեծ մայրը կը մահանայ... Անոր մահը խորհրդանշական տարողութիւն մը կը ստանայ, երբ Գաւիթ կ'ըսէ.

«Մեռա իմ անցեալը, Նաբինէ» (էջ 55):

Մինչ, այս բառերը արտասանած ատեն, բազմէն մանուկներու բացազանչութիւններ կը լսէ:

Տատը՝ իր աւանդութիւններով, ապրելու կամքով եւ մտածելակերպով, իրեն հետ ամբողջ անցեալը կը բերէ ու երբ վերադարձը այդ սերունդը կը յաջողի իր հողեկան դժուարութեանները շրջանցել, իր դերը կատարած՝ կը մահանայ:

Հայոյի ընդմէջէն այս դիժր տարբեր տարազանութիւն կը ստանայ եւ կը դարպասայ «Մե եւ սղիտակ կարապետներ»-ուն մէջ: Հայոն այն տիպարն է, որ պէտք չզգար իր դաւաճի փնտռելու, քանի որ այլեւս աղջին բոլոր դաւակները իրը կը նկատէ: Այն կինն է, որ Սարգարապատի մէջ կոտորած է, Ստալինեան օրերուն տքորուած եւ աքորի մէջ ամուսինը կորսնցուցած, սակայն վերադարձած է ատանց հաւատքը կորսնցնելու: Հայոն տան պէտք չունի՝ ամբողջ երկիրը իր սուսնն է եւ ինք պատ կը հիւսէ... երեք հազար տարի է: Հայոն անդլիացի թղթակիցներուն կրնայ ըսել.

«Ժողովուրդը մարդ է, ատանց մարդու ժողովուրդ չկայ: Ամէն մարդու մէջ պատմութիւն կայ, ու մա այնքան է, որքան իր ժողովուրդի պատմութիւնը»:

Հայոն կը բարկանայ, երբ Մարինէն կը դանդատի, թէ բարբիւն դաւակներուն մէջ իր դաւակին միայն ողբերգութիւն պատահած է: Իր մտածու-

ղութեամբ, երբ աղջին մանուկները ծագեալի մէջ են, եւթական իրաւունք չունի անհատական կրօնասանելին մեկնելով դատաւանք կատարելու:

Միւս կողմէ՝ դարձին մէջ երեւան կու գայ մարդու առօրեայ կենցաղէն ստեղծուած տոյնացի: Գարեկին դիտաշխատող է Բիւրական: Գարեկին եւ Մարինէի յաճախողէպ հետապնդութիւններէն ստեղծուած է տոյնացի մը: Մարինէի ճամբորդութիւնը ինքզինք դռնելու համար, իրենց դաւակին մահով ստեղծուած ներքին տուայտանքը, ապա՝ երթը վեր, մինչեւ Բիւրական, որուն ընթացքին կը յաջողի իրադարձել ինքզինք:

Գարեկինի գրոյցները թիչկ-գառախօսին եւ Մարինէին հետ քնարական եւ միաժամանակ ներկայի մտահոգութեաններուն զգայուն խոր ճշմարտութիւններ երեւան կը բերեն եւ, բառին լայն իմաստով՝ փելիտօփայութիւն մը կու տան, մպտելով տառապանքը գիմագրաւելու հոգեբանութիւնը: Վիպակի երկու դրիւտու հերոսներուն ամէն վայրկեան փոխուող, սակայն խորքին մէջ յատկ յարաբերութիւններու նուրբ զարգացումը շատ բան կ'ըսէին հեղինակին արժանիքներուն մասին:

Վերոյիշեալ երկու վիպակներուն գլխաւոր առանձնապատկութիւնը իրենց խտութենէն ըլիած ուժականութեան մէջ կը կայանար: Արձակ բանաստեղծութեան հասած սեղմ ու թեւազգայուն սողերու մէջ՝ Արշակեան յաճախ ամբողջ էջեր կրնար ամփոփել:

Այլ յատկանիչ մը՝ Արշակեանի վկայերուն տիպարները չէին իմար զրական, դաստիարակչական կամ այսպէս կոչուած «սոցիալական» հերոսի ձեռնակապին մէջ եւ, նման մտահոգութիւններէ դուրս մնալով՝ չէին կաշկանդուեր: Անոնք մարդկային էին՝ ատանց արուեստական սրէէ նախադրեալի եւ հոս կը կայանար իրենց խորհրդաւոր ուժը: Աւելին. առանձնապատուկ տիպար մը կը ներկայացնէին, ինչպէս երկու յեռակներով, բայց առանձին անհատականութեամբ Գաւիթը կամ մինչեւ Բիւրական օտքով բարձրացող Մարինէն: Սովորականէն ու գիւրիւնէն հեռու մնալու եւ յատուկ կացութիւններու մէջ նկատելու հեղինակին յանդիմութիւնը կ'առանձնացընէր զինք՝ իր սերնդակիցներէն մէկ քանիին հետ:

«Ինչպիսի բոյրը» գործակէտ է Արշակեանի գրականութեան համար, սակայն ոչ զրական իմաստով, քանի որ սուրբան պատկերացնելու իր ճիւղին մէջ վէպը կը կորսնցնէ իր առանձնապատկութիւններուն մեծ մասը:

Նախ՝ գործին առաջին խոսքի կէտը կարելի է նկատել վկային հիմնական հերոսներէն մէկուն

ընտրութիւնը՝ Անդրանիկի տիպարը, որ շարժա-
վար է եւ միաժամանակ անխոնջ ընթերցող, բա-
րի է՝ միաժամ ըլլալու տասնման եւ միաժամա-
նակ պատերազմի փորձառութիւնը սպարած մարտչ,
կրնայ իր պատասխանատուին՝ Գեղամ Մինասի-
շի հողերանութիւնն ու մտածումները շատ նրբ-
բորէն վերլուծել, սակայն տարիներով չզգալ
նախկին պատասխանատուին՝ Յակոբ Աղասիշի
պատեհապաշտ կեցուածքը եւ, իր կնոջ տարիներ-
բու ահամայ դաւաճութիւնը՝ այս վերջինին
հետ:

Գեղամ Մինասիշի ընկերոջ՝ Վարազդատի
մտաբոլ շոր շարժում մը կը մտնէ նկարագրուած
«հաստատութեան» կայսրած անձերուն սովորու-
կան եւ կրաւորական կենցաղին մէջ: Վարազդատ՝
Արշակեանի նախորդ գործերու տիպարներու սե-
րունդին մաս կը կազմէ: Ինք էս պատերազմ տե-
սած է եւ դուրս կ'ապրի այն ամլացնող եւ խե-
ղաթիւրուած կենցաղէն, որ քիչ մը ամէն տեղ
բոյն դրած է: Վարազդատ կը գրեւորէ հեղի-
նակին հիմնական հարցերէն մէկի բանին, որոնց ս-
մէնէն ցայտունը այլեւս միջին տարիքին հասած
մարդուն տաղնապն է, մարդուն, որ այլեւս պատ-
րանքներ չունի, անկեղծ է եւ իրապաշտ ու կը
փորձէ իր կեանքը նոր ձեւով իմաստաւորել...:
Դեռ հեռոջհեռէ երեւան կու գայ, թէ ինք կապ-
ւած է վէպի հիմնական բոլոր տիպարներուն, —
Անդրանիկի մահացած քրոջ դասընկերը եղած է,
հօրը աշակերտը, Յակոբ Աղասիշի դուժարտա-
կին մէջ դիմուոր եւ այս վերջինը շատ լաւ կը
ճաննայ. տակաւին Գեղամ Մինասիշի եւ տիկնոջ
դասընկերը, եւ այլն...: Անդրանիկի կրաւորական
բարութեան տեղ ինք կը բերէ իր հարցադրող
կեցուածքն ու կենդանի ներկայութիւնը:

Վարազդատ կը բանայ հակասութիւններու
շարքը: Նախ՝ իրմով աւելի հասկնալի կը դառ-
նայ Յակոբ Աղասիշի կերպարը, որ կրնայ դու-
մարտակ մը զոհն՝ անձնապէս գոյքի մը տիրա-
նալու համար: Աղասիշի տիպարին բացայայտու-
մով Անդրանիկին համար ամբողջութեամբ հաս-
կրնալի կը դառնայ տիկնոջ եւ Աղասիշի կապը:
Ինք կը լռէ, որովհետեւ նման յարաբերութիւն-
ներ մէկ կողմէ ծնունդն են ժամանակաշրջանի մը
իրավիճակին եւ, միւս կողմէ՝ իրենց երկուքին
յարաբերութիւններուն մէջ բուն մը չէ փոխուած,
կապը արտաքին երեւոյթ է եւ կը պատկանի շր-
ջանի մը, որ անցած է եւ ինք չ'ուղեր այլեւս
այդ մասին խօսիլ: Ուրիշ կրաւորական յարաբե-
րութիւն մըն է Գեղամ Մինասիշի ու անոր տիկ-
նոջ պարագան, որ, իր կարգին, անշարժութեան
դուրս կու դայ...: Վարազդատ անոնց անցեալը
կը բերէ կամ կը բանայ, իր ներկայութիւնը կեն-
դանի կամ երիտասարդական անցեալին գոյու-
թիւնն է՝ ներկայի մէջ, այսպէսով ան քաջալիս-
տի մը կը վերածուի եւ կը դառնայ ներկան աշ-
խուհացնող գործօնը:

Վերջնաբարութեան, Վարազդատ՝ «Գնացնի-

նիք»-ը հերոս Արէլի պէս այս բոլորէն դուրս պի-
տի ելլէ կամ ահամայ «հրուխ», կարծէք այս պո-
ծողութեամբ հեղինակին կողմէ թելադրելու հա-
մար, թէ նման մարդիկ անհրաժեշտութիւն են,
սակայն մեր քաղաքային ստորեակին մէջ տեղ
չունին: Վարազդատ իրեն հետ չի տանի Անու-
հիտը, որ ներքին նոյն կրակը ունի, սակայն շատ
փոքր է իրմէ եւ կրնայ շատով յուսախար բլ-
լալ, քանի որ Վարազդատ իր լիցքատարութեամբ
բողջացուցած կեանքի վայրէջքին առջեւ կը դառ-
նուի:

Հարկու, Արշակեանի թախանցող անկարկնե-
րուն ու դատումներուն երբեմն կարելի է հան-
դիպել, սակայն կարծէք անոնք կը մտնեն գր-
քին 426 էջերուն մէջ: Անդրանիկի ու Վարազդա-
տի պատմութիւններուն միջեւ կ'երկարի ամբողջ
ստորեայ մը, ուր հետաքրքրական ու անհետա-
քրքրական տիպարներու կը հանդիպինք, հե-
տաքրքրական եւ անհետաքրքրական պատմու-
թիւններու, որոնք կարծէք ոչ-հերոսական ժո-
մանակաշրջանի մը ոչ-հերոսական տիպարները
կը թուին ըլլալ:

Վարազդատ՝ նախկին գործերէն միակ աւտոդ
մնացած ժառանգութիւնը կը թուի ըլլալ: Գուցէ
Արշակեան նման մարդու մը պատմութիւնը կ'ու-
ղէ հակադրել իր քննադատած ստորեակին հետ:
Ինչ ալ ըլլայ հեղինակին մտադրութիւնը, իր աշ-
խատանքի պատկերացումը խոնգալուտուելու մաս-
նաւոր առիթ չի ներկայացնէր:

«Իադաի բոյրը» գործին նկատմամբ դրսուած
հարցականները աւելի կը շեշտուին «Գնացնի-
նիք»-ուն մէջ, կարծէք աւելի արժանատիւով այն
մտածումը, որ Արշակեանի վէպի ըմբռնողութիւ-
նը սկսած է փոխուել եւ աւելի իյնալ ընկերային-
կենցաղային հարցերու ծիրին մէջ:

Հստակ տիպարները շատ աւելի իւրացի ձեւով
ընտրուած են: Մէկ կողմէ ունինք երիտասարդ
եւ ուժական Արէլը, իսկ միւս կողմէ՝ իր գոր-
ծած հաստատութեան պատասխանատուն՝ Պերճ
Լեւոնիչը: Անոնք իրականութեան երկու բեւեռ-
ները կը կազմեն ու ստորեակն անոնց միջեւ կ'եր-
կարի: Արէլը Անդրանիկ չէ եւ շատ լաւ կրնայ
հասկնալ իր մեծաւորին սուղանքներն ու խօս-
քերուն ետին պահուած միտումները: Տակաւին
կրնայ անոր գլխաց անկեղծօրէն արտայայտուել
եւ... «չկեղտատուի»: Մէկ կողմէ ունինք կար-
ծէք Արէլը, հայրը, Նիկողոսը, Սոնան եւ Լու-
սիան, իսկ միւս կողմէ՝ Պերճ Լեւոնիչը, Անդրակ
Օհանիչը, Սանդրան, Նունէ Միքայէլովնան, այ-
սինքն՝ մտածութեան, բախտախաղի, կաշտերի եւ
այլասերման աշխարհը, որ մասնաւոր յարանք
մը ունենալով հանդերձ Արէլի նկատմամբ, կ'ու-
ղէ զայն իրեն մէջ տանել կամ տկարացնել:


ձիշդ է, որ դժայրներու, կայարաններու և կիսակայարաններու պատմութիւնը խորհրդանշական իմաստ կը ստանայ, սակայն զօրմին ամբողջութեան մէջ, մենք մեզ կենդանողային-հայերանական վէպի ոլորաններուն մէջ կը գտնենք:

Փոխաւածը այն է, որ զարդարակրթական արժեքներու և կենդանողային-մշակութային ժողովուրդներուն մը փոխարէն անմիջական ասորեան է, որ սասիճանարար Արշակեանի վէպերուն մասնակցութիւնը գործած է: Կրնայ պատահիլ, որ զերէջագ աօրեայ մը կայ, վերնախումբը՝ կարգաւորած դիւանակալական պատասխանատուներէ, միջին տարբի մտերցումէ, կուսակցական պատասխանատուներէ և զործակալներէ, որոնց կը հակադրուի երիտասարդութիւնը՝ թէ՛ իր աշխուժութեամբ և թէ՛ իր թարմութեամբ ու ձգտումներով: Այդ վերնախումբի ներկայացուցիչները կրնան կոչուիլ Պերճ Լեւոնիճներ կամ Գեղամ Մինասիճներ, կրնան նաև նախարարներ ըլլալ, որոնք կը զդան անհրաժեշտութիւնը Արշակեանի, սակայն կիսակայարաններու մէջ: Անոնք ունին իրենց յատուկ իրաւազատութիւն մը, որուն ընդմէջէն կը դիտեն կեանքը:

Բարեխախտարար, Արշակեան իր հերոսները արկերու (type) չի վերածեր: Արկը կրնայ մարդկային սկզբութեան պահեր ունենալ, Պերճ Լեւոնիճը կրնայ հասկնալ կեանքի զանազան երեւոյթներ, սակայն իր զործնապաշտ բարոյական մեկնակետներուն թերութեամբ տարբեր ձեւով դիւրորդուի:

Հարցը այսպէս է. Արշակեանի ընդհանրապէս պատկերացուցած տաղանդը անհատներու չրջագիծէն դուրս գալով, մտած է անհատ-ընկերութիւն յարաբերութիւններու ծիրէն ներս: Արէլի թանցարմը յատուկ է. մէջընդմիջումի և մեծ քաղաքներու հեղին պատմողով պէտք չէ զոհել և, պէտք չէ մոռնալ անհատներու անհրաժեշտութիւնը: Արէլ, խորքին մէջ, ըմբոստ մըն է, որ կը զործէ «հաստատութենէն» ներս և հաստատութեան օրէնքներով: Փոխաւած բան մը կայ, որ մէկ կողմէ կու գայ նոր հրամայականներէն, միւս կողմէ՝ անհատներու ուժի չարահաճութենէն և հիմնական սկզբունքներու անտեսումէն: Արէլ, ինքզինք յարգելու, ձգտումին մէջ՝ կը վերածուի սկզբնայ ըմբոստի:

Այս իսկ պատճառաւ, տիպարներու հողերանոտան զարգացումին տեղ կայութիւններու (և որոշ չափով) դէպքերու հոլովոյթին է, որ տեղի կ'ունենայ: Հերոսները, բնականորար, հողեկան տաղանդներ կ'ունենան, սակայն հեղինակին մը-աստեղեւումը կը թուի կեդրոնացած ըլլալ աօրեայի երեսներուն վրայ: Այս կը թուի ըլլալ Արշակեանի մտահոգութիւններուն ներկայ աօանցքը, իսկ այս աօանցքը դիմք կը հեռացնէ մեզի ծանօթ իր ղիմապիծէն:



ՄԱՐԳԱՐԵՈՒՇԻՆ ՄԻՆՉԵՒ
ԱՂԲԻՐՆԵՐԸ ԵՐԿԱՐՈՂ
ԻՐ ԵՐԿԱՐ ՎԱՐՍԵՐՈՎ

Քան ասորեան գրական վտանգ, չորս հատար դէք՝ 1960էն 1970 յաջորդարար հրատարակում.— «ՈՆ», «Կարուած գլուխը», «Փայլի օրերու անցելը» և «Խճէ շինեցիք ոսկիէն, ի՞նչ քիթ վարցը», նաև «Նահար» օրութեթի գրական շարաթօրեակի (նեղայիս զարգած) պատասխանատու խմբադիր Ռեմի էյ Հաթ գեա իր սերնդակիցներէն ամոնց չնորհուած բախար շունեցաւ, սակայն, անոնցմէ նաուց աշխատանք շտարու իրանանեան բանաստեղծութեան արդիականացման մէջ: Այ մէկ ատեն փաղով ու թմբակով հրապարակ իջաւ ան, մնաց լսա՛ ինչպէս իր քերթողութիւնը և բնաստեղծութիւնը, ու պեղեց իր աշխարհը լսա աշխատանքով, ամօթխածութեամբ: Միտաթ խորհրդապաշտութեամբ բարախող իր նորարարութիւնը գործաւ ատելի սպրում, քան իր սերնդակիցներէն շատերուն կատարած փորձերը: Իր փորձաստութեան մէկ նոր վկայութիւնն է վերջին հատարը՝ «Մարգարէալի» միմչեւ ազբիրները երկարաց իր երկար վարսերով»:

Հատարին տարադրութիւնը աօրտած էր արդէն 1975ի Փետրատարին, բայց ծանօթ պատճառներով դիւրքը ընթերցողին տրամադրութեան ասկ գրուեցաւ միայն 1977ի աշնան, հաղաւթակազրէն հանդիպելի հրատարակութեամբ, Փօլ կիրակոսեանի վրձինին պատասխանող չորս իրդաներկերով ատելի շէտուած: Արժանացաւ «Մարտ Սթր» մըը-յանակին:

Հատարը կը բացուի հետեւեալ ապերով.
Օգնէ ինձի,
քող մէջս ըլլան բանաստեղծները բոլոր,
քրովեստեւ տանդը ստելի մեծ է ձեռքերէս:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Առաջին բաժինով հեղինակը կը պատկերացնէ
հասորին խորքը, իբրև՝

Պատմութիւնը արարչագործութեան տարբեր
երեսին,
գար աչքերս փակ գտայ,

Ազա՛
Լսեցե՛ք,
մի՛ գոցե՛ք դուռները,
ալիքը նամակը կը փշխանցէ հովին,
հովը՝ ծառերուն,
ծառերը՝ տետրակներուն:

Կոչը ուղղուած է ծերերուն, երիտասարդնե-
րուն, որ նստին սիրահարին յանդիման, եւ նոյն
ատեն խնդրանք մը սիրուհիին:

Ազօթէ, քրպէսգի յաջողիմ գանձիմ հիւրասիրել
տօնահանդէսին,
... Զիս ճանչնալէ առաջ՝ կարդա՛ գիս
եւ կանուխ կը հասնիմ դէպի սիրտ,
զի ան պատմութիւնդ է,
պատմութիւնը արարչագործութեան տարբեր
երեսին:

Եւ, իրապէս, Ունտի էլ Հաժի բանաստեղծու-
թիւնը պատմութիւնն է արարչագործութեան
տարբեր երեսին: Սիրոյ աննդով վարակուած հե-
ղինակին 674 տողեր ոչինչ կ'ուզեն փատեւել, բա-
ցի ա՛յն ճշմարտութենէն, որ կ'ընը բնաւ չէ ե-
ղած նախամօր վերադրուած դէրին մէջ, ընդհա-
կատակն, ան սկզբանէ եղած է այրերու մոլու-
թիւններուն, բանաստեղծութեան, Աստուծոյ հա-
ւասարելու անոնց մարմաշին գոհը ու լուծ է,
լուծ է՝ սպասելով, որ օր մը պիտի փոխուի
մօտեցումը իրեն հանդէպ, մինչև սիրուհիին ու
հեղինակին ծանօթութիւնը, ուր վերջինը իր բո-
լոր նախահայրերուն փոխարէն կու գայ ներողա-
մբարտութիւն խնդրելու անկէ, որ կըրցած էր զինք
փոխել, կըրցած էր չարը արմատախել ընել եւ վե-
րածել զինք հաւաստեցեալ ու բոլրի անհատի մը,
որ իր այս սիրոյ յաղթանակին ճշմարտութիւնը
կու գայ յանձնել թուղթին, որպայրելով անց-
եալի սխալը ու վերադարձի կու աղղելով բու-
լորին, որովհետեւ՝

Մարգարէուհին յաղթանակեց մեղմութեամբ,
կարեկցութեամբ յաղթեց գօրսուրներուն:
Եւ կը վկայէ, կը յայտնէ վերադարձը,
եկե՛ք,
Բազաւորութիւնը բաց է,
զգացողներս երաւը քաղաւորութեան դրան մօտ է
կ'անապարէ՛ նզդունելու,
Բայլ մը միայն հետու է՛ք դուռներն,
ուսանձին է հոգը,
առանձին է կեանքը,
եկե՛ք,
օրհնեցե՛ք ձեր գլուխները մուտքի ռսկիով,

եւ այրեցե՛ք ձեր ետեւ,
եւ այրեցե՛ք ձեր ետեւ,
այրեցե՛ք աշխարհը վերադարձի արեգակով:

Ճիշդ է, որ կոնջ եւ անոր իրաւունքներուն
հաստատման սուղութեամբ սուղին անդամ չէ,
որ հեղինակ մը կը փորձէ գերք ճշգրէլ, սովայն
մօտեցումի ինքնատուութիւնը անփոխելի է այս
պարտոյցին. «Հաւաստացեալի» մօտեցումը ար-
դելք չի հանդիսանար ժխտելու գրախօսին մտաբ-
ուելու առասպելին պատճառները, ընդունելով
հանդերձ ընկերութիւնը, սովայն փորձելով զան
ուղղել, մասնանշելով անոր սխալ (ի սկզբունէ)
մօտեցումը իր կէտին, եւ այրելով անցեալը, բա-
րիին, զեղեցիկին, սիրոյ ու նորին վերադառնա-
լու աննդով: Այս կոչը՝ բուրբու, տողս, ու կըրկ-
նում չէ, այլ՝ հեղինակին համար համարումի եւ
ապրուած իրականութեան մը փոստը:

Լեզուի քննարկումը մեր սոսճամանկն զորս
բլլալով հանդերձ, կորելի չէ չնչիլ հեղինակին
լեզուի առջնութիւնն ու ճկունութիւնը:

Պատկերներու կառուցումն ու որդեգրուած
ձեւերը կը մատեն հեղինակին հմտութիւնը բա-
նաստեղծութեան արուեստի կայսածէն ներս,
մա՛նաւանդ պատկերներու կառուցին մէջ շեշտը-
տղ խորացումներն ու սուղումները, սրանք կը
պատկերուին վրձինի արագ, քանի մը հարուա-
ծով, հակադրութիւններու յաճախակի ու տեղին
զործածութեամբ:

Ու նայեցաւ ամօք սեւ արծիւի նման՝ ոչ թէ
գայն տեսնելու,
այլ գինավնայու անոր շուրջով,
որովհետեւ ինքզինք մեծ նկատեց անոր աչքերուն
մէջ.
ճերմակ թռչունը ուժ ունի, իսկ սեւ սրճիւր՝
բռնութիւն:

Այսա՛
Իթէ ես գլուխդ եմ, սիրուհիս, դուն պակն ես
գլուխիս շուրջ.
Ես գլուխդ եմ ու դուն թագն ես գլխուս վրայ,
եւ գաղթն եմ եւ վերադարձը չափերտներուդ մէջ:

Այլ տող մը՝
Ձեւեր լուսց զղջումս եւ ամառը այրեց գայն,

Ուրիշ տեղ մը՝
Մինչեւ որ հիմ մեծ-մայր մը բլլայ, ինչպէս մեծ
ծառերը ձիթապտուղի,
երկարէ օրերը, Տէր,
ու նորագէ եւ ապա նորագէ անոր հոգը:

Ինչպէս կը տեսնէք, պատկերներու կառու-
ցումը եւ անոնց օգտագործումը կը մատնէ հեղի-
նակին հմտութիւնը ու գործին հանդէպ ցուցա-
բերուած խոստարաններին ու Լեհիւմի ջեր-
մութիւնը:

Կրկնաթիւնները, սրանք կը ծառային հասարի ամբողջ տարածքին, շատ յաճախ գործին Լրտժնտականութեան գլխաւոր ազգայիները կը հանդիսանան. բառերու, սողերու, երբեմն պատկերներու ամբողջական կրկնաթիւմը Ունտի ԷԼ Հաժ րնդհանրապէս կը միտի աւելի շեշտել արեալ բառին, առջին, պատկերին փոխանցելիք պատգամը. իսկ երբեմն՝ կը մնայ կրկնաթիւմն սահմաններուն մէջ:

Ես ինք եմ,
կը խեղդեմք կրակը տան շուրջ,
ուր կը քնանայ մեր սէրը.
Կը խեղդեմք կրակը հողին շուրջ,
ուր կը միրհէ մեր գաւաղը:

Ո՞ր արեւագալը կը ցանկայ ծաբլի՝ ինչպէս ես
կը ցանկամ քեզ,
ո՞ր հայելին կը ցանկայ դէպի քեզ վրայի՝
ինչպէս ես կը ցանկամ քեզ,
ո՞ր անապատը կը ցանկայ իր մարգարէն՝
ինչպէս ես կը ցանկամ քեզ,
ո՞ր ազաչանքը կը ցանկայ կարկառու մը ձեռքերու՝
ինչպէս ես կը ցանկամ քեզ.

սիրուիս, դուն սպիտակ թռչուն մըն ես, ու ես՝
մերմակ թռչուն մը,
դուն ծաւի թռչուն մըն ես, ու ես՝ կապոյտ
թռչուն մը:

- 1.- Այս պատմութիւնն է արարչագործութեան տարբեր երեսին, գոր աչքերս փակ գտայ,
- 2.- այս պատմութիւնն է արարչագործութեան տարբեր երեսին, լսեցէք,
- 3.- ան պատմութիւնը է, պատմութիւնը արարչագործութեան տարբեր երեսին,
- 4.- սիրուիս, դուն տարբեր երեսն ես արարչագործութեան, սիրուիս, դո՛ւն ես մշմարտութիւնը,
- 5.- այս պատմութիւնն է արարչագործութեան տարբեր երեսին, գոր կը գրեմ կորսուած մեղաբով...

Ահա դարձ մը, ուր կարելի է կանգ առնել եւ էջ առ էջ ու պատկեր առ պատկեր բնթանալէ ետք անոր հետ, ամբողջութեանը մէջ լիացած զերթուածի մը գոհունակութիւնը զգալ, բոթոյններով պատկերներու մասնատանգ կառուցողական նրբութիւնը, զգալով մենք մեզ զէժ յանդիման նոր խօսքի ու նոր սճի մը, ուր կարելի է հանդիպել ի միջի աչքոյ առկերու, թէ եւ այս պարտան չի ժխտեր գոյութիւնը պատկերներու, սրանք երբեմն ոչինչ կ'աւելցնեն հեղինակի տախտանքին վրայ:

ՅԱՍՏԵՂՈՒԹԻՒՆ



ԲԱՆԱՍԵՂՈՒԹԻՒՆ

Տարանդի հասունութեան մէջ հողին յանձնըրած բանաստեղծ Գևորգ Կառվարենցի «Բանաստեղծութիւն» խորագրով հատարը յետ մասու հրատարակութիւն մըն է, որ լոյս տեսաւ Ս. Գաղար փոնքի ապարանէն, խմբագրութեամբ Հայր Վահան Յովհաննէսեանի:

Հարիւր իննիստն երկու գեղատիպ էջերէ բողկացած եւ ֆրանսահայ նկարիչ Շարթի գծանկարներով գեղազարդուած սոյն հատարը կարելի եղած է լոյս բնծայել շնորհիւ հանդուցեալ բանաստեղծին հարազատներուն:

Տրուած ծանօթագրութեան կը պարզուի, որ բանաստեղծին զարգ անսխալ մնացած ձեռագիրները խմբագրելու իր աշխատանքին մէջ Հայր Վահան Յովհաննէսեան զխմբագրութեամ է բաւական լուրջ գժուարութիւն:

Այդ գժուարութիւնը անմիջական հետեւանքն է արեւեսալի նկրտմամբ Կառվարենցի զուարեւրած բծախնդրութեան: Որով՝ իր վաղահաս մասով ան ո՛չ միայն ձգած է իր ետին կարգ մը անուարա զերթուածներ, այլև վերամշակուած զարձեք՝ իրենց համապատասխան զույգ տարբերակներով: Պայմաններու հարկադրանքին տակ, դուցէ բանաստեղծը հնարաւորութիւնը չէ ստեղծած ամբողջացելու իր անուարա տարրմանքը եւ նախախրարար պահելու կամ ֆեջելու տակալ զերթուածին զույգ տարբերակներէն մէկը: Այսուհանդերձ, Հայր Վահան Յովհաննէսեան խահմութեամբ քննած եւ զտաւարած է գոնանք՝

առանց կրթեք զանց օրենքս մէկը ի նոյտու միւսին:

Հատորը լեցնող նիւթերը կ'ընդգրկեն ժամանակի համեմատարար լայն տարրութիւն մը, որ կը սկսի նախադասութեան շրջանէն և կը հասնի մինչև բանաստեղծին կեանքի ստարար (1916), յատկապէս Աթէնք, Թեատրոնիկէ, Ամբաս, Վիեննա և Միլան քաղաքները շրջանցող հանգրուանային սպեկտրովեանք:

Կառվարենցի միջավայրը Աթէնքն է, որուն լեմացական թէ պատմական անցեալէն փոխանցւած զգացական գրոշմը հետագայ անդրադարձումներու լայն տակ յատկանշական է թէ՛ ներկայ գործին և թէ՛ «Տալիւ Եւոյեան» (1931) քերթողագրքի պարագային:

Ռուչպուս է «Բանաստեղծութիւն» ընդհանուր խորագիրը, այն առումով, որ կ'ընդգծէ Կառվարենցի յատուկ մէկ ձգտումը, զոր ապրեցուսն ան ի խնդիր ղեկցելովեան թմրանումին և զայն խորհրդանշական թեկուրմանով մը արտայայտելու ցանկութեան: Զգուս մը, որուն բարերար ազդեցութեամբ ան կրցուս ա՛յլ միայն իրագործել լեզուական նուաճում մը, այլև զգացւած սոս մը, իմացած ազլում մը հոգեմատոյց ուղենելով փոխակերպել վերնծայում գեղեցկութեան:

«Բանաստեղծութիւն» հատորը կը բովանդակէ հարիւր տասնմէկ քերթումներ, որոնք կը բնորոշուին իրենց արժարժած նիւթերուն ալլազանութեամբ: Հիմնականին մէջ, անոնք կը կրեն անգրադարձը ծնողական և գուկի սերոյ, յեշտակի մը առթած վիշտին, շարսղուշտի հովերու, որոնք կը սպառնան քանդել հիմերը երազին, մահուան կարտին, որոնք Կառվարենցի գրչին տակ կը վերածուին քնարաշունչ զգացողութեան:

Արզարեւ, քնարական լոբը տանձնայատուկ գիծն է Կառվարենցի զբաղան խանութներին: Իր լեզուն հարուստ է ներքին երաժշտութեամբ մը լաղկապուած բառերով, որոնք կը զրսեւորեն ապրում մը յայնակերպող առաջադրանք մը:

Բանաստեղծութիւնը իրեն համար ա՛յլ միայն միջոց մըն է «սարպուելու իր յոյգերէն»՝ այլև իմանալի ըմբոնողութեամբ մը տարագելու խորհուրդը անձանթ զգայնութեանց: Բանաստեղծը կը հաւատայ, թէ Լըզն ու բասը այն երկու գործունէն ևն, որոնց լրացուցիչ ներդրումութեամբ կը յայնակարծութի զգացական վիճակի մը բիւրեղացումը, ինչպէս կը պարզուի ընթերցողին ուղղուած հետեւեալ տողերէն.—

Ջի կ'ելիլ էրզը բառէն, որ ճառագայթն է հոգւոյն, —
Հոգն է բեզուն ակօսին, որուն անունն է յոբիւրթը, —
Կայլակն է ջինջ, որ ծովուն կու տայ պասուք ու յագուրդ:

Թորհրդապաշտական ձեւը բանաստեղծին նախաիրած ուղին է, որով՝ ան կը սիրէ կապէս խոր ընդվզում առաջանող արտ'րքն խի գրսեւորել խորհրդապատկերով: Այսպէս, հովը («Այս ետիլքը շար», «Այսաւար ետիլմ այս անտրկու»), սորը («Պարկաներու պարտէլիմ մէջ»), ձմեւը («Էլալվայս», «Ձմեւ») և անցնելով իրենց բառային ընթացիկ սուսմէն՝ կը վերածուին խորհրդանշական, փոխանցելով ընթերցողին մասլ յեշտակի մը անգրապարձը:

Կառվարենցի մօտ զգալի հովով մը ներկայ է կրօնական զբոսումը: Իրողութիւն մը, որ բերուննի է ս'րքան առհասարակ օրերու առթած մղձաւանջով, նոյնքան և խանուածքային ընդունին յատկութեամբ, որով՝ բանաստեղծը կը դիմէ Լըկնային բարերար Զօրութեան, որ լուկ զազարարական բմրանում մը չէ, այլ յայնուցործ ճամբարութիւն մը և կենսազործ աեսիլքի մը ներկայութիւնը: Արզարեւ, «Փամաղորթութիւն», «Լուսընթայուս», «Գլուլմ», «Մօմ է գուցէ», «Երէ...», «Կարծես երէկ էք», «Ալ վեոցի», «Կը գարնէ մաեք ժամերն», «Ծնունդի շարական» և «Ծնունդի գիշեր» բանաստեղծութիւններով Կառվարենց կը փորձէ յատկանշել սասուածային իմացումը սուսու ներանձնայոյց վիճակի մը առնչութեամբ:

Բանաստեղծին զգացական ապրումներուն մաս կը կազմեն հայրենի ընաշխարհը («Սնուշ Հայաստան», «Ալուլի կարտ») և զաղթաշխարհի ավերուն պատերազմի արհաւիրքը շնոյց ողջ հայութիւնը («Տէր, պաե էրզը հայոց», «Էուղաքը կանայք», «Մտախուղին և անգրերից»): Բանաստեղծին նախանձանդութիւնը կը կաշանայ հայ ժողովուրդի զոյառուման զազարարին և յաերթալուր «երզը հայոց» անադարտ պահելու իրողութեան մէջ:

Հատորին մէջ առանձնայատուկ տեղ կը գրուեն «Ծուլիմ փառքը», «Մեներգ», «Աշտանայիմ ծեր ծառը», «Կեռաեմին» և «Աղօթք անեղ կուտարածի ու մաեքթի» բանաստեղծութիւնները, որոնցմէ իւրաքանչիւրը կը յայնարերէ պատրանքով և ճամբարութեամբ, յոյսով և հրասթափութեամբ բողբոլում ճողեխանութիւն մը: Այլ հոգեխանութիւնը ենթակայ չէ, սակայն, բացարձակ դանուութեան մը տիրապետութեան: Կառվարենցի գիտէ զայն բարեխառնել յոյսի կենարար տեսիլքով: Այսպէս.— «Ասուածարով անդորրիմ անուսն կշառքը երզոյ» ծուրի վախճանական փառքին հետ զուգահեշտաբար, բանաստեղծը կը ներզգայ հանունը պարանաստեղծի կեանքին հոլովոյթին, զոր կը փորձէ իմաստաւորել երազի ու երազական քաղցրութեան մը մշտանորդ պայծառութեամբ:

Կացինահար կեռանքի մը Երկրական ճաշտողին զիմաց, բանաստեղծը կ'ողեչնուի «մաեւումը զայն անմահացնելու» զազարարով

եւ կը տենչայ անոր ճգակտոր փայտերով հրա-
շակերտել՝

Իր պատկերին վրայ ու սրտին սիրաբարախ,
տաւիզ մը, վին մը կամ կիթառ...

Կառվարենցի յոյզերն ու մտորումները չեն
սահմանափակուիր զգաղական թեւադրականու-
թեամբ մը արտաշնչուած դուռ քնարական ապ-
րումներու ծիրին մէջ, ո՛չ ալ միայն կը յայտ-
եարերեն ձգտուի ներանձնապէս բացուելու նե-
րահայեաց խորհուրդի մը մտերմութեան, այլ
իրենց այժմէականութիւնը պահող համամարդ-
կային երակի մը պէս կը բացուին անսնփ բա-
նաստեղծին անմիջական շրջապատին, «Քաղի
պատկերներ»ուն, որպէսզի՝

Այլ մա՛նաւանդ, եւ ի գին
Ողջակիզմանը բարի,
Տաքցրնեմ ուզմ ու հոգին
Ամէն անյոյս քշուտաի:

Հատորը կ'եղրափակուի կեանքի միջօրէակա-
նը յատկանշող «Յիսմամեակ» երկորաշունչ բա-

նաստեղծութեամբ, ուր Կառվարենց յետադարձ
տկնարկով մը ողեկուշելով ալիխով յիշատակնե-
րով դեղուն իր կեանքին անցած յիսուն տարի-
ները՝ կը յայտնէ երանական անչանք մը.

Հարկ է հիմա մայրամուտ, գրելի կատարն
աւմազուն,
Գրելի կատարը լեբամ՝ ուր կ'արիւնի երեկուն...
Ու վերջստին ծագելով գրելի ուրիշ հորիզոն,
Ու լըռելեայն աւարտիլ վերջալոյսով մը հասուն:

Այդժաման մահը հնարաւորութիւնը չրնծա-
յեց, սակայն, «վերջալոյսով մը հասուն» յիս-
նալու իր բազմանքին: Այլապէս, ներկայ հասո-
րը պիտի չհանդիսանար եղրափակիչ խօսքը բա-
նաստեղծին ստեղծագործ աշխատանքին, այլ պի-
տի դատնար պարզապէս միջօրէի հանդրատնի
հորիզոնէ հորիզոն մտկրնթացող իր հետադայ
նուածումներուն:

«Բանաստեղծութիւն» հաստիքն իրադրութեամբ
նպաստ մըն է յետ եղևնեան սիրուորահայ պրա-
կանութեան համար, սրուն արժանաւոր քննա-
կիւններէն մէկն էր Գեորգ Կառվարենց:

ՅԱՅՈՐԳ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՊԱՐԿԱՆԵՐՈՒ ՊԱՐՏԵՂԻՆ ՄԷՋ

Պարկաներու պարտեղին մէջ պա՛ր կայ նորէն,
Առհաւաքեան անստոներէն կ'սոնայ քամին...
Ապերս մը սուր մեռելներու ոսկորներէն
Լարերը մեր կը յուզէ ծո՛ղլ երիկամին...

Կ'ուզենք նիւրեւի.— բայց կը ցնցեն մեզ ստուերներ,
Պարկաներու պարտեղին մէջ պա՛ր կայ նորէն...
Անցելամերձ մեր մեղքերէն իսկ կարեվէր՝
Հին աղերս կ'այրինք բիւրեղ արցունքներէն...

Փոքրակաաստ ցեղին անխախտ արմատներէն
Թող բարձրանայ յաւերժ աւիշն հայրենաւանդ...
Պարկաներու պարտեղին մէջ պա՛ր կայ նորէն
Վայսմանական այս գիշերին խոր մանաւանդ...

Վա՛յ ինձ եւ վա՛յ եօթը ճետիս, օ՛ր նեմեսիս,
Եթէ տարուիմ տարաշխարհի պարկաներէն...
Պարավերջիկ իսայծերու դէմ պաշտպանէ՛ գիս,
Պարկաներու պարտեղին մէջ պա՛ր կայ նորէն...

ԳԷՈՐԳ ԿԱՌՎԱՐԵՆՑ

**Աղակուբային
Լուրեր**



ԱՆՆ ԲՐՈՒՔՆԱԼ

Վայր՝ «Փռքի Փարիւմ». աշխրհն՝ ցած ուստատարով փոքր թնտրան մը՝ փարիսիկ Հայ Շաթըլի մէջքաներու եւ հին շակոյի շրջանին մէջ:

Երզնահին՝ Անն Բրուքնայ, որ Յունաստանի վեր կ'երդէ, կը մեկնարանէ ու կը խողով բեմին վրայ, փարձելով հանդիսատեսը հաղորդակից զարձնել իր ներկայացուցած աշխարհին:

«Էլ Մոնտ»ի թղթակից Բոյլի Կոտարի վրայաթեամբ, Արեւելեան Երազայէն Եկած քաղաքական քաղաքէի մը ապագայութիւնը կը ձգէ միտորարը, ուր Բրուքնայ կարծէր կը պատկերացնէ «խեղճութեան եզրին Խոսած սպերջանիկ կին մը»:

Յայտարչին առաջին բաժինը Արեւմտեան Երան է, ուր Ֆրանսերէն, սուսերէն եւ լեհերէն երգեր՝ Պրեիթի գերմաներէն ստեղծագործութիւններուն հետ՝ իրարու կը յաջորդեն:

Երկրորդ բաժինը՝ Արեւելեան Երան է: Անն հանդիսատեսները կը տանի ճշուտած Վարչախոյ միտորարին մէջ եւ լեհերէն ու հայերէն երգեր կ'երդէ:

Անն Բրուքնայ յանձնառու արուեստագիտուհի մըն է, որ զիսէ փոխանցել իր մեկնարանած Երգերուն ետին գտնուող ստատպանքն ու պատգամը:

ԳԵՂԱՄ ԹԱԶԵՆ

Վերջին տարիներուն, Միտցեայ նաճանդներու մէջ սկսած է ուշադրութիւն դրուել եւ իր շուրջ խանդավառութիւն ստեղծել Լիբրանտնէն դազթած Գեղամ թաղեան, ծնած՝ Մուսո լեւ, 1938ին:

Իր սպային ժառանգութիւնն ու անցեալը (մաղաղաթներ, հին վանքեր, զանկեր) հին եզրուտական աշխարհին, արդի քանդակագործութեան իրագործումներուն եւ Հենրի Մուրի փորձին հետ՝ կը միաձայնուին եւ կը գրտուրեն ինքնայատուկ աշխարհ մը:

Պէտք է բնել, թէ ո՞ր իսկ պատճառով, ուճային սարբեր կրանդներու վրայ կ'իրականանան եւ մինչեւ իսկ յաճախ գեղանկարչական պատասաներու կը վերածուին իր փնտրութիւնը:

1960ին ի վեր նոր աշխարհամասին վրայ մաքառող եւ բազմաթիւ զուգահանդէսներու մասնակցած Գեղամ թաղեան սակաւ սկսած է իր երկար աշխատանքին պատուր քաղել եւ այժմ, իրբեւ արդէն կազմուած անճատականութիւն, կը դասուանդէ Օքլենտի համալսարանի գոլճի արւեստի բաժանմունքին մէջ:



ԱՆԳԼԻԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ըստ «Կարաիլք»ի, Լայոսերու Տուեր, անցեալ տարուան վերջաւորութեան դամարած իր նիւսին, մասնաւոր շինութեան նիւթ գարձուցած է բանաստեղծութեան ներկայ վիճակը Անգլիոյ մէջ:

Ճիշդ է, որ բանաստեղծներուն համար մեծ կարեւորութիւն չէ աննպատակ տղտութեան զիրքը իրենց նկատմամբ եւ ընդհանրապէս իշխանութեան հետ հակադրուող կացութեան մէջ գտնուած են ամէն աեղ, բայց լորտերու այն յայտարարութիւնը, թէ բանաստեղծութիւնը ամէնէն կարեւոր ինչքն ու արժէքն է Անգլիոյ, անկասկած որ վարկ մը կը բերէ այդ արժեւորումը կատարող տղտութեան:

Ամէն պարագայի, Արուեստի կորհուրդը, ինչպէս արուեստի բոլոր բնագոյններուն, գրական հանգեաներուն եւ կը բերէ իր նիւթական օժանդակութիւնը, ասոնց որուն շատ մը թերթեր այս օրերուն փակուած պիտի ըլլային:

Մէկ կողմէ իրողութիւն է այն, որ նոյն տարին թերթողական 906 հատորներ լոյս տեսած են Անգլիոյ մէջ, իսկ միւս կողմէ՝ կը գրեւորուի ա՛յն մտայնութիւնը, ըստ որուն՝ «սուղջ լեզուի մը կըստը» սկսած է հեռանալ արիւնէն եւ բանաստեղծութիւնը այլևս լեզուին չի սար այն կենսունակութիւնն ու զեղեցկութիւնը, որոնք ամբողջ հարիւրամեակներ իր առաքելութիւնը կրած էին:


Ամէն պարագայի, հետաքրքրութիւնը տեղին ըլլալով հանգերթ, կադրութիւնը կարծուածին չափ մտահոգիչ չէ եւ, ինչպէս դիտել կը արուի, նոր բանաստեղծութիւնը միշտ ալ ժամանակ մը ետք կը գտնէ այն լայն ժողովրդականութիւնը կամ հանրային ճանաչողութիւնը, որ կը փնտռուի ... յորտերուն կողմէ:



ՃՈՐՃԻՕ ՏԻ ՉԻՐԻԹՕ

Երբ անցեալ տարուան Նոյեմբերի վերջաւորութեան արդի արուեստի ամենախաղաղուն դէմքերէն մէկը՝ Ճորճիօ տի Չիւրիթօն, ինիսուն տարեկանին իր վերջին շունչը կը փչէր, արուեստի աշխարհը մասնաւոր ջու չէր զգար, պարզապէս կը թաղէր արուեստագետ մը, որ իր ստեղծագործութեան մայր երակը ձրած էր քսանական թուականներու սկզբնաւորութեան՝ դասական արուեստի սկզբնաւորութեան վերադառնալու խաղաղութիւնը կամ փաստարկութեամբ, յարձակելով արդի արուեստին յատուկ ստեղծագործութիւններուն վրայ:

Յունաստանի մէջ սպորող սիկիլիայի ընտանիքի մը դասակը, Չիւրիթօ, ասէն մը Միւնիխի



սկալեմիային մէջ զեղանկարչութիւն ուսանելէ ետք, 1917ին արդէն ունէր բաւական յատուկ իր սեստեթիկները եւ Քարլօ Քարայի հետ բանաստեղծութիւնները եւ Արոյն ուղղութիւն մը, ըստ որուն՝ արուեստի հիմնական ճանաչողութեան առաջնորդող միջոցը յայտնատեսութիւնը պէտք էր նկատել, որուն միջոցաւ պէտք էր հասնել բնականազանցին: Ինք նախապէս ազգուած էր արդէն նիցչէն, զլիաւորաբար անոր ա՛յն սեսալէտէն, թէ մեր այս իրականութեանն անդին, որուն մէջ կ'ապրինք, տարբեր էութիւն մը եւ տարբեր ճշմարտութիւն մը պահուած կը մնայ:

Եւ ա՛հա առասպելական աշխարհի մը արձագանքները կը խոսնուէին յունական աւանդութեան ներգաշնակութեան: Զարմանալիօրէն ամայի հրապարակներ, արձաններ, շուքեր, հետուէն սրացող շոգեկոտքեր ու մամբլէկներ կը բերէին ամայութեամբ, սպասումով ու անձկութեամբ լեցուն աշխարհ մը, որ կ'աւետէր երազայինի սահմաններուն մերձեցումը եւ մանուկի մը մըտքին «գարթնում»ը: Անտրէ Պրեթօն եւ զերիւրապաշաները հիացած էին իրմով: Ստիպին 1922ին կը կատարուէր շրջապարձը. կ'ուղէր տղիւս դասական վարպետներու աւանդութեամբ գծել, մարդ մը, որ իրը չէր եւ որուն թերեւի մակարդակը չունէր: Եունիստի կը պահանջէր 1920 թուականէն ստալ արտադրուած գործեր...: Յետէ մը վերադարձաւ ու ընդօրինակեց դասներ, բնատրպերուն եւ աւելի ուշ գծուածներուն միջև ստեղծելով շփոթ մը, որուն համար մասհոյ չէր, ընդհակառակն, արուեստի շուկային կամ անոր առեւտրականացման դէմ գտն կը նկատէր բողոքի իր մէկ ձեւը:

ՆՈՆԱ ՊԱԼԱԿԻԱՆ

Նիւ Եսթի հրատարակչամուկներին «Պուպ Մերիլ Բնկերտրիւն»ը անցեալ տարի լոյս ընծայեց Նոնա Պալաքեանի «Քննադատական Տանգիլոյ մեներ» խորագիրով գիրքը. որ կը հաշուէ 250 էջ եւ կ'ընդգրկէ վերջին Եստրոյ պարու գրական կարեւոր իրադարձութիւնները ու կը պատկերացնէ ուշագոյտ գեղեցիկ աշխարհը: Իր հատորին մէջ, Նոնա Պալաքեան Ելիքթի, Սև'ըլէֆ-գիւպերի, Ֆիլիքցներրոտի եւ այլոց կարգին վերլուծական յօդուած մը տեղաւորած է նաեւ Ռեյլըն Սարոյեանի «Նախնի Սարոյեանի աշխարհ» խորագրին տակ:

Ստաբիլ կը ներկայացնենք «Պուպ Մերիլ Բնկերտրեան» հազարգում ծանօթութիւնը: Մեր յառաջիկայ բիւլետեն մէկում մէջ պիտի ներկայացնենք նաեւ «Ռեյլըն Սարոյեանի աշխարհ»:

«Նիւ Եսթի Թայմզ Պուֆ Րիվիու»ի վերջին քանոնական տարիներու քննադատներէն Նոնա Պալաքեան անկեղծ է իրադատուկ գիրք մը՝ Նոնա Եսթի Ներկայ գործընթացի տէրէն նշանաւոր գրողներու անդրակցին:

Հաս, «Քննադատական հանդիպումներ» տնտես իր այս անալիզին հատարածային մէջ փորձեր եւ քննադատներ կան ամերիկացի թէ օտար ճակատներու մասին, — Թ. Ս. Ելիքթի,



Քերտին Մ'ըրտրրա, Լալիք Թրիլինի, Վ. Ս. Փրիլէտ, Ճոյս Բարըլ Օթոս, Անթուան Ալն'թէք-դիւֆերէ, Ֆ. Արթթ, Ֆիլիքցներրա, Ռեյլըն Սարոյեան, Բարթ Վոնկաթ, Կատարա Ռէլիթի, Ճ. Տ. Սելինճրր եւ ուրիշներ, սրանցմէ անմեր ճանչցում է անձնուկն:


Միտմանակի գործընթացի եւ յամաս՝ Նոնա Պալաքեան կը բերէ համարէ փոտար, թէ ժամանակակից գրականութիւնը կրնայ մեր բնկերութեան տայ հոգեբանական հարատոցեայ աշխարհ մը:

Յատարանին մէջ, որ յաակապէս սսյն հատարին համար գրուած է, ան կը փոխանցէ իրադատուկ անտակէա մը գրախօսականի կոչումին շուրջ: «Թայմզ»ի մէջ Պալաքեան ո՛չ միայն իր անձնական տեսակէտը կը պարզէ, այլև կը վերլուծէ քննադատին գերը ժամանակակից գրականութեան հարաբերութիւն մէջ:

«Քննադատական հանդիպումներ» գիրքը կը ներկայացնէ ինքնատիպ եւ աշխուժ պատկերացումը Ամերիկայի մէկ աստղորդուց գրական թղթակիցին:

Իրրեւ խմբուր ու գրախօս «Նիւ Եսթի Պուֆ Րիվիու»ի՝ Նոնա Պալաքեան աւելի քան 25 տարի Էդոմ է ժամանակակից գրականութեան հիմնական հասանքին մէջ: Իր քննադատական փորձերը լոյս աւտած են «Սանտէլ Թայմզ»ի, «Թայմզ»ի ամէնօրեայ թիւերուն, ինչպէս նաև գոնապոն այլ հրատարակութիւններու մէջ, ինչպէս «Տեր Նիւ Լիտըր», «Քննիրն Րիվիու» եւ «Բարմպիա Ժուռնըլիզմ Րիվիու»:

Պալաքեան օժանդակած է «Ալգոյանի Գերբէ Քննադատական Երջանակ»ի հիմնադրութեան եւ մաս կազմած է գրական մրցանակներու գատակարարուն, ինչպէս, օրինակ, «Փուլիքըր»ի: Ան օժանդակած է նոյնպէս ժամանակակից ամերիկեան վէպին մասին նսթեր բովանդակուց «Ստեղծագործ ներկան» տնտես հատարին խմբուրութեան:



CRITICAL ENCOUNTERS

Literary Views and Reviews, 1953-1977

Nona Balakian

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ»Ի

2000ՐԴ ԹԻՒԸ

Երևանի «Գրական քերթ»ը այս ամսոյն սկիզբը լոյս բնծայեց իր 2000րդ թիւը: Այդ առիթով, նախկին խմբագիրներէն ոմանք եւ կարգ մը գրողներ, բնդամէնը տաններկու հոգի, ի հարկէ բնդատալէլով խմբագրութեան հրաւերին՝ ստորագրած են կարճ գրութիւններ, յատկանշական երևոյթի մը յիշատակութեան առնթներ շեշտելով շարաթաթերթին կատարած դերը հայրենի գրականութեան հարցոյթին մէջ:

2000րդ թիւը ողջունող այդ գրութիւններէն, նմոյշի համար, կ'արտադրենք Վահագն Գաթեանի խօսքը, որ սրտամտանը կ'ընէ միաք սրահուելու արժանի գեղեցիկ շքադարձի մը.—

«Զիմա շտտերին, յատկապէս երիտասարդ մարդկանց կարող է անհետնալ ու արտատոց թըւալ այն, որ եղել են ժամանակներ, երբ հայոց լեզուով չեն հնչել եւ մեքոտարտատ չեն գրուել այնպիսի բնիկ, բարենշնիւն ու նշանակալի բաներ, սրպիսին են յեղափոխութիւնը, հանրապետութիւնը, սահմանադրութիւնը, կուսակցութիւնը, պատգամաւորը, եւ այլն:

«Բայց եղել են այդպիսի ժամանակներ: Երկու տասնամեակից աւելի մեր լեզուով այդ բաներին փոխարինել են եւրոպական սեւալիցիոն,

կոնսերւատուցիան, պարտիան, դիւքաւար, եւ այլն:

«1962-65 թուականներին, երբ եւ խմբագրում էի «Գրական քերթ»ը, լու սարբներ էին սկսուել մեր գրականութեան եւ բնդհանրապէս մեր ամբողջ հոգեւոր կեանքի համար: Վերադնահատում էին մշակութային առժեքները, սրտամտան գեղեցիկն ու գեղեցիկը, գրական ու լեզուական երեսոյթները:

«Եւ ահա իմ խմբագրած տոտէին համարներից մէկում ապագուելց Պարսյր Անուկի «Պակապաննիք եւ հարստացննիք մայրենին» շոգուածը: Անուկն իրեն յատուկ կրքատութեամբ ապացուցելով, որ վերը թուարկուած բաների եւրոպական փոխարկիչներից եւ ոչ մէկը ամենաշնիւն ստուելութիւնն իսկ չանի մեր բնիկ բաների հանդէպ՝ ո՛չ հասկանալիութեամբ եւ ոչ հկուսութեամբ, խնդիր էր դնում վերականգնել մեր լեզուից ապօրինարար վատրում այդ բաները:

«Ամէնքի կողմից չէ, որ հատանութեամբ բնդունուելց այդ շոգուածը: Սուիններով դիմատրոցներ էլ եղան:

«Բայց ճշմարտութիւնը չէր կարող չյաղթել, եւ շուտով սեւտականորէն վերականգնուելցին այդ բաները:

«Եւ ահա, այս, շտտերի համար անհետնալ ու արտատոց կարող է թուայ, որ եղել են ժամանակներ, երբ այդ բաները չեն հնչել մեր մայրենի լեզուով»:

«Գրական քերթ»ի նոյն՝ 2000րդ թիւին մէջ արձանագրուած է նաև սա հանէլի լուրը.

ՄՐՅԱՆԱԿ՝ ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԵԱՆԻՆ

«Գրուժրա Ֆարդով» ամսագրի խմբագրական կոլեկիան 1978 թուականին ամսագրում տըպագրում յաւազոյն արձակի, չափոմոյ տուղճագործութիւններին, սկիտարի, քննողատակոն յոլւածի եւ գեղարուեստակոն թարգմանութեան համար մրցանակներ է շտրհել մի շարք հեղինակների:

Լաւազոյն պատմուածքաշարի համար մրցանակի է արձանացել արձակագիր Մուշեղ Գալշոյանը:



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՈՅԵՐ

Տեղի անձկութեան պատճառով՝ մեր այս թիւին մէջ չկրցանք տեղ տալ այն գրութիւններուն, որոնց մասին խօսք եղած էր Վահան Թէֆէեանի, Զապէլ Եսայեանի եւ Սիամանթոյի կուիրումը բացատրելին մէջ, իբրեւ լրացուցիչ նիւթեր:

*
**

Բացատրելին սպագրութիւնը համարեա՛ աւարտած էր, երբ Հալէպի մամբով մեր ձեռքը հասաւ 1977ին Երեւանի մէջ լոյս ընծայուած Զապէլ Եսայեանի «Նամակներ» անուն հատորը, ուր հանդիպեցանք մեզի անծանօթ կարգ մը լուսանկարներու եւ նիւթերու:

Թե՛՛ այդ լուսանկարները եւ թե՛ նիւթերէն ոմանք պայքերաբար (եւ երբեմն բննադատաբար) պիտի յանձնուին քնքերցողին ուշադրութեան:

ՅԱԶՈՐԴԻ ԹԻԻՈՎ

1.- Սիւննի Վրացեանին ուղղուած Շահան Շահնուրի մէկ անտիպ մամակը, որ կը բովանդակէ գրական խիստ շահեկան լուրեր:

2.- Նոր պատմուածք մը՝ Արամ Հայկազէն:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Մեծանուն գրագէտին 70ամեակին առիթով միջազգային,
հայրենի եւ սփռութեան մամուլի էջերէն կազմուած

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՈՒԻԼԵԸՍ ՍԱՐՈՅԵԱՆԻ ՀԵՏ
ԱՆՈՒՆ ՀԱՏՈՐԸ

Խմբագիր՝ ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

●
Կ Ո Ր Ի Զ

(Բանաստեղծութիւններ)

ՅԱՐՈՒԹԻԻՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

●
Լ Ո Ղ Ա Ր Ծ Ա Ի

(Բանաստեղծութիւններ)

ԿՈՐԻԻՆ ՇԱՀԻՆԵԱՆ

ԼԻԲԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 27 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 5 Լ. ՈՍԿԻ

پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزائجيان

•
PAKINE

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•
Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

•
ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՄՆԱԳԵԱՆ

Հեռաձայն՝ 296898